Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

2024-2025 (1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ) ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ
ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2025 ©

Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարության 2024-2026 թվականների գործողությունների իրականացման ծրագրի 2024-2025 (1-ին կիսամյակ) թվականներին իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույցը պատրաստվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից՝ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում իրականացվող «Արդյունավետ և ներառական ոստիկանական բարեփոխումների հանրային վերահսկողություն և իրազեկում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում:

Զեկույցից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2025

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7. գրասենյակ 2

Հեռախոս՝ +37410 540199

Էլ. փոստ՝ info@armla.am

Վեբ կայք՝ https://armla.am/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 8

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 9

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2024- 2025 (1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ) ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 15

Ուղղություն 1. Ներքին գործերի նախարարության ձևավորմամբ ոստիկանության կազմակերպաիրավական ձևի, կառավարման մոդելի փոփոխությունը, արտաքին միասնական նկարագրի ձևավորումն ու ծառայության ֆունկցիոնալ զարգացումը..... 15

Գործողություն 1. ՆԳՆ ներքին թվային կառավարման համակարգի գործարկում 15

Գործողություն 2. ՆԳՆ-ի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ծավալների և որակի պարբերական գնահատում, դրանց պարզեցում և թվայնացում 16

Գործողություն 3. Ոստիկանության կառուցվածքի և ֆունկցիոնալի ավարտական տեսքի ապահովում 19

Գործողություն 4. Ոստիկանության շենքային համալիրի գնահատում, ձերբակալվածներին պահելու վայրերի (ՁՊՎ) օպտիմալացում 21

«ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՄԲ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԻ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՏԱՔԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 22

Ուղղություն 2. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում և բարեվարքության ամրապնդում 23

Գործողություն 1. ՆԳՆ մարդկային ռեսուրսների կարիքների համապարփակ գնահատում՝ ապացուցահեն, գենդերարձագանքող (gender responsive) քաղաքականության մշակման նպատակով 23

Գործողություն 2. Ոստիկանությունում որակյալ կադրերի հավաքագրման (ներգրավման) պլանի ներդնում՝ միտված կոռուպցիոն ռիսկերից զերծ գործընթացով կարող կադրերի հայտնաբերմանը և ընդունելությանը 24

Գործողություն 3.1. Ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատման համակարգի ներդրում 25

Գործողություն 3.3. Ոստիկանության ծառայողի դիմակայուն նկարագրի ապահովում 27

Գործողություն 4.2. Կանանց ներգրավման խթանում 28

Գործողություն 5.1. ՆԳՆ հակակոռուպցիոն ծրագրի հաստատում 29

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 35

Ուղղություն 3. Կրթական միջավայրի բարելավում, ոստիկանության կադրային պատրաստում, մասնագիտական զարգացում..... 37

Գործողություն 1. ՆԳՆ-ի մեկ միասնական կրթահամալիրի ձևավորում..... 37

«ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 39

Ուղղություն 4. Պարեկային ծառայության զարգացում՝ որպես արտաքին ծառայության նոր և ժամանակակից մոդել 39

Գործողություն 1. Պարեկային ծառայության գործունեության համալիր գնահատում... 40

Գործողություն 3. Ջրային պարեկային ծառայության ստանդարտ գործառնական ընթացակարգի (SOP) մշակում, անձնակազմի կարողությունների զարգացում..... 42

Գործողություն 4. Պարեկային ծառայության մոնիթորինգի ստորաբաժանման ստանդարտ գործառնական ընթացակարգի (SOP) մշակում, անձնակազմի կարողությունների հզորացում 42

Գործողություն 5. Պարեկային ծառայություն մուտքի հնգամսյա կուրսի կատարելագործում, այդ թվում՝ բովանդակության և տևողության համաղրված վերանայմամբ 43

Գործողություն 6. Պարեկային ծառայության ընդունելության կազմակերպում 43

Գործողություն 7. Պարեկային ծառայություն նոր ընդունված ծառայողի մենթորության ծրագրի ներդնում 44

«ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈԴԵԼ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 45

Ուղղություն 6. Քրեական ոստիկանության զարգացում, օպերատիվ աշխատանքի արդյունավետություն 46

Գործողություն 1. Երևանում և մարզերում նոր կառուցվածքով և ֆունկցիոնալ հստակեցմամբ գործարկված Քրեական ոստիկանության ինստիտուցիոնալ կայացում 46

Գործողություն 2. Հանցավորության կանխարգելման գործողությունների համալիր ծրագրի մշակում..... 46

Գործողություն 3. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացում, օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացակարգի համապատասխանեցում միջազգային չափանիշներին՝ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում 47

«ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 49

Ուղղություն 7. Համայնքային ոստիկանության վերաիմաստավորում 50

Գործողություն 2. Համայնքային ոստիկանության աշխատանքի թվայնացում, թափանցիկ գործելաոճի ապահովում..... 50

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 7-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 52

Ուղղություն 8. Ոստիկանության զորքերի վերափոխում, Ոստիկանության գվարդիայի ձևավորում 53

Գործողություն 1. «Ոստիկանության գվարդիայի մասին» և հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների մասին օրենքների նախագծերի փաթեթից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում 53

Գործողություն 2. Ոստիկանության գվարդիայի՝ իրեն վերապահված գործառույթների իրականացման համար ծառայողների թվաքանակի, նյութատեխնիկական անհրաժեշտ հագեցվածության աուդիտ 54

Գործողություն 3. Ուժային միջոցների գործադրման համար ստանդարտ գործառնական ընթացակարգերի (SOP) մշակում 56

Գործողություն 4. Ոստիկանության գվարդիայի ամբողջական վերապատրաստում՝ հասարակական կարգի պահպանության համար նախատեսված արդի տակտիկաների և վերլուծական կանխատեսման մասնագիտական հնարավորությամբ 57

Գործողություն 7. Ոստիկանության գվարդիայի կողմից պետական պահպանության ենթակա օբյեկտների արդի դասակարգում և պահնորդական գործունեության չափանիշների լավարկում 59

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 8-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 60

Ուղղություն 9. Մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցեր 61

Գործողություն 1.1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ամբողջությամբ նոր օրենքի մշակում 61

Գործողություն 1.2. «Ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերի արձանագրման մեխանիզմի ներդնում՝ Ստամբուլյան արձանագրությանը համահունչ 62

Գործողություն 1.4. Ազատությունից զրկված անձանց տեղափոխման համար անհրաժեշտ պայմաններ նախատեսող տրանսպորտային միջոցների ձեռքբերում 63

Գործողություն 1.5. Բերման ենթարկվող անձանց իրենց հասկանալի լեզվով իրավունքների մասին գրավոր ծանուցումների տրամադրման ապահովում 64

Գործողություն 1.6. Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի թեմայով վերապատրաստումների անցկացում 65

Գործողություն 1.7. Ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի գործունեության վերայանված կարգի ամբողջական կիրառման ապահովում 67

Գործողություն 2.1. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի փոփոխությունների կիրարկման համար անհրաժեշտ իրավական դաշտի ապահովում 68

Գործողություն 2.2. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև բռնության ենթարկված երեխաների հետ պատշաճ հաղորդակցության և անվտանգության ապահովում 69

Գործողություն 2.3. Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստումների ապահովում 71

Գործողություն 3.1. Ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության ուղեցույցի կիրառում 72

Գործողություն 3.2. Ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության առերևույթ խախտումների առնչությամբ քաղաքացիների արձագանքի օպերատիվ ստացման մեխանիզմի գործարկում 72

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶԳԱՅՈՒՆ ՀԱՐՑԵՐ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 9-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 73

Ուղղություն 10. Բարեփոխումների իրականացման ներառականություն, գործողությունների մշտադիտարկում և համակարգում 73

Գործողություն 1. Ոստիկանության բարեփոխումների մշտադիտարկման և գնահատման արդյունավետ մեխանիզմի ապահովում՝ հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ 73

Գործողություն 2. Ոստիկանության բարեփոխումների իրականացման միջգերատեսչական աշխատանքային խմբի գործունեության շարունակականության ապահովում 75

«ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 10-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 76

Ուղղություն 11. Հանրային ընկալում, ռազմավարական հաղորդակցություն 77

Գործողություն 1. Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարական հաղորդակցություն 77

Գործողություն 2. Հանրային վստահության մակարդակի և ոստիկանության միջոցառումների ազդեցության գնահատում 79

Գործողություն 3. Ներքին գործերի նախարարության, Ոստիկանության հանրային հաղորդակցության գործիքակազմի զարգացում 79

«ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 11-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 80

Ուղղություն 12. Ոստիկանություն բարեփոխումների շրջանակներում միջազգային համագործակցություն 81

Գործողություն 1. Բարեփոխումների շրջանակներում միջազգային գործընկերների հետ համագործակցության ընդլայնում 81

Գործողություն 2. Միջազգային վարկանիշներում Ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման վրա ազդող գործոնների մշտադիտարկում 83

Գործողություն 3. Ոստիկանության միջազգային իմիջի ու նոր ոստիկանության կերպարի բարձրացմանն ուղղված հաղորդակցություն 85

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 12-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 86

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 88

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 88

1. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ 88

Ա. Մեթոդական առաջարկներ 89

Բ. Բովանդակային առաջարկներ 91

Հապավումների ցանկ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԳԴ	Գլխավոր դատախազություն
ԳՐԵԿՈ	Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ԿԲ	Կովկասյան բարոմետր
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄԽ	Մշտադիտարկման խումբ
ՆԳ	Ներքին գործեր
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔԾԳ	Քաղաքացիական ծառայության գրասենյակ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Կառավարությունը 2024 թվականի նոյեմբերի 15-ին N 1803-Լ[1] որոշմամբ հաստատեց «ՀՀ Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարության և դրանից բխող 2024-2026 թթ. գործողությունների ծրագիրը (այսուհետ նաև՝ Ռազմավարություն և Գործողությունների ծրագիր):

Ըստ Ռազմավարության՝ ոստիկանության բարեփոխումների իրականացման հենասյունային բաղադրիչներն են՝ ոստիկանության ֆունկցիոնալի լավարկումը, ոստիկանական ծառայության լավարկումը և ոստիկանական ենթակառուցվածքի, տեխնիկական հագեցվածության լավարկումը:

Ռազմավարության գործողությունները ներկայացված են 12 ոլորտներում, որոնցից 11-ում նապատեսված ընդհանուր թվով 52 գործողությունները ենթակա են կատարման 2024-2025 (1-ին կիսամյակ) թվականների ընթացքում: Նշված 52 գործողություններից 4-ը վերաբերում են Ներքի գործերի նախարարության (ՆԳՆ) ձևավորմամբ ոստիկանության կազմակերպաիրավական ձևի, կառավարման մոդելի փոփոխության, արտաքին միասնական նկարագրի ձևավորմանն ու ծառայության ֆունկցիոնալ զարգացման, 10-ը՝ մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման և բարեվարքության ամրապնդման, 2-ը՝ կրթական միջավայրի բարելավման, ոստիկանության կադրային պատրաստման, մասնագիտական զարգացման, 7-ը՝ պարեկային ծառայության զարգացման՝ որպես արտաքին ծառայության նոր և ժամանակակից մոդելի, 4-ը՝ քրեական ոստիկանության զարգացման, օպերատիվ աշխատանքի արդյունավետության, 1-ը՝ համայնքային ոստիկանության վերաիմաստավորման, 5-ը՝ ոստիկանության զորքերի վերափոխման, ոստիկանության գվարդիայի ձևավորման, 11-ը՝ մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցերի, 2-ը՝ բարեփոխումների իրականացման ներառականության, գործողությունների մշտադիտարկման և համակարգման, 3-ը՝ հանրային ընկալման, ռազմավարական հաղորդակցության և 3-ը՝ ոստիկանություն բարեփոխումների շրջանակներում միջազգային համագործակցության ոլորտներում:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն (ԻՀԱ)՝ նպատակ ունենալով իրականացնել անկախ մոնիթորինգ և գնահատում, իրականացրել է ՀՀ Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարության և դրանից բխող 2024-2026 թթ. գործողությունների ծրագրի 2024-2025 (1-ին կիսամյակ) թվականներին իրականացման ենթակա գործողությունների կատարման մշտադիտարկում: Մշտադիտարկման դաշտային աշխատանքներն իրականացվել են 2025 թվականի ապրիլ-հուլիս ամիսներին և մշտադիտարկել են այն գործողությունները, որոնք նախատեսված էին կատարման 2024-2025 (1-ին կիսամյակ) թվականների ընթացքում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն զեկույցը ընդգրկում է Ռազմավարության և Գործողությունների ծրագրի միջանկյալ տարվա՝ 2024-2025 (1-ին կիսամյակ) թվականների գործողությունների կատարողականը, հետևապես ակնկալվում է, որ այն կօժանդակի ՀՀ ՆԳՆ-ին՝ գործող Ռազմավարությունը բարելավելու նպատակով կատարել փոփոխություններ, ինչպես նաև ապագայում նոր ռազմավարություն մշակելու աշխատանքներում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] 15.11.2024 թվականի N 1803-Լ որոշումը հասանելի է այստեղ. https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=199923

ա. Մշտադիտարկման նպատակներ

Ռազմավարության գործողությունների ծրագրերի մշտադիտարկման և գնահատման նպատակներն են՝

1) գնահատել Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարության 2024-2026 թվականների գործողությունների ծրագրի՝ **2024-2025 (առաջին կիսամյակ) թվականների իրականացման ենթակա գործողությունների կատարման ընթացքը,**
2) պարզել այն գործողությունները, որոնք կատարվել են, կատարվել են մասնակի կամ չեն կատարվել, դրանց պատճառները, կատարել այդ գործողությունների ընթացակարգային (քանակական) գնահատումներ,
3) ըստ ընտրանքի կատարել որոշ գործողությունների ազդեցության մակարդակի (որակական) գնահատումներ։

բ. Գնահատման աղյուսակ

Մշտադիտարկման են ենթարկվել այն գործողությունները, որոնք նախատեսված էին **իրականացնել են 2024 թվականին և 2025 թվականի առաջին կիսամյակում,** հետևապես **գնահատման արդյունքները վերաբերում են 2024-2025թթ. (առաջին կիսամյակ) նախատեսված գործողությունների (թիրախների) վերստուգիչ ցուցանիշներին և արդյունքների քանակական և որակական (ըստ ընտրանքի որոշ գործողությունների դեպքում) ցուցանիշներին, և թե ինչքանով է կատարված գործողությունը նպաստել ռազմավարական խնդրի կատարմանը։**

Միջանկյալ և վերջնական գնահատման մոտեցումներ

Ռազմավարության և գործողությունների ծրագրի բաժնի վերջնական արդյունքի մոնիթորինգի ցուցիչները սույն միջանկյալ մշտադիտարկման շրջանակներում գնահատման չեն ենթարկվել, քանի որ դա ենթադրում է ոչ թե կիսամյակային կամ տարեկան գործողությունների ծրագրի կատարողականի մշտադիտարկում, այլ ամբողջ ռազմավարության կատարողականի եզրափակիչ գնահատումը։

Փոխարենը, միջանկյալ գնահատումը կենտրոնացած է՝

- ⇒ առանձին խնդիրների լուծման ընթացքի վրա,
- ⇒ գործողությունների և արդյունքների համապատասխանության վրա,
- ⇒ գործողությունների արդյունավետության վրա խնդիրների հասցեագրման տեսանկյունից,
- ⇒ ընթացիկ փուլում ռազմավարական ուղղության իրագործման պոտենցիալի գնահատման վրա։

Այսպիսով, սույն միջանկյալ գնահատման շրջանակներում մշտադիտարկման խումբը (ՄԽ) գնահատել է.

1. առանձին գործողությունների իրականացման աստիճանը՝ հիմնվելով փաստացի իրականացված միջոցառումների և ներկայացված փաստերի վրա,
2. թե ինչքանով է տվյալ խնդրի հասցեագրումը նպաստում ամբողջ ռազմավարական ուղղության նպատակներին,
3. խնդրի լուծման հնարավոր ներդրումը ռազմավարական ուղղության իրագործման գործում՝ վերլուծելով կապը ռազմավարական ուղղության/խնդրի մակարդակում սպասվող արդյունքի հետ։

Այս մոտեցումը թույլ է տալիս ոչ միայն գնահատել ընթացիկ կատարողականը, այլև կառուցողական առաջարկներ մշակել Ռազմավարության հետագա իրականացման արդյունավետությունը բարձրացնելու համար։

Ռազմավարության 2024-2025 թվականին (առաջին կիսամյակ) իրականացման ենթակա գործողությունների, դրանց համար նախատեսված արդյունքների, ինչպես նաև Գործողությունների ծրագրով սահմանված գործողությունների համար նախատեսված վերստուգիչ ցուցանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս այս գործողությունների իրականացման գնահատող ցուցանիշները բաժանել երկու խմբի, ինչպես ներկայացված է ստորև՝

- **Ընթացակարգային (քանակական) ցուցանիշներ**

  Ընթացակարգային ցուցանիշներն ընդհանուր առմամբ անդրադառնում են այն գործողություններին, որոնք ուղղված են որոշակի ընթացակարգերի ավարտին, օրինակ՝ իրավական փաստաթղթի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը, վերլուծության կամ ուսումնասիրության իրականացումը, կարիքների գնահատում, առաջարկներ ներառող զեկույցի մշակում և այլն: Ընթացակարգային ցուցանիշները վերաբերում են ելքային մակարդակի արդյունքներին և գնահատվում են **արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման** (անգլերեն՝ results-based monitoring) **հիման վրա**: Ակնկալվում է, որ 2024-2025թթ. (առաջին կիսամյակ) ընթացքում իրականացվելիք գործողությունները գնահատման իրականացման ժամանակահատվածում, որն է՝ 2025 թվականի ապրիլ-հուլիս ամիսները, արդեն իսկ պետք է ավարտված լինեն: Անհրաժեշտ է նշել, որ գործողությունների ծրագիրն ընդգրկում է հիմնականում ընթացակարգային ցուցանիշներ ենթադրող գործողություններ: Ընթացակարգային ցուցանիշների դեպքում մշտադիտարկումն արձանագրում է՝ թե որ փուլում է գտնվում գործընթացը:

  Ընթացակարգային ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման հետևյալ կատեգորիաները՝

  - **Գործողությունը կատարվել է -** գործողությունը գնահատվում է «կատարված է», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են դարձել վկայող փաստեր (անգլերեն՝ evidence) առ այն, որ դիտարկվող ժամանակահատվածի համար գործողության 91-100%-ը կատարվել են:
  - **Գործողությունը կատարվել է մասնակի -** գործողությունը գնահատվում է «կատարվել է մասնակի», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ դիտարկվող ժամանակահատվածի համար գործողության 31-90%-ը կատարվել է:
  - **Գործողությունը կատարված չէ -** գործողությունը գնահատվում է «կատարված չէ», եթե դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ, կամ կատարվել է նախատեսված աշխատանքների մինչև 30%-ը, կամ տվյալ գործողության վերաբերյալ մշտադիտարկման խմբին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ըստ վերևում նշված ընթացակարգային ցուցանիշների կատարողականի գնահատման կատեգորիաների արդյունքների, դիտարկվող ժամանակահատվածի՝ **2024-2025թթ. (առաջին կիսամյակ)** (միջանկյալ) գնահատման արդյունքն արտահայտված է հետևյալ վարկանիշային ցուցանիշներից որևէ մեկով.

1. **կատարված է ամբողջությամբ** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված աշխատանքներն իրականացվել են)՝ **1 միավոր.**
2. **կատարված է մասնակի** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված որոշ աշխատանքներ կատարվել են, սակայն դրանք չեն գերազանցում նախատեսված աշխատանքների կեսը)՝ **0.5 միավոր.**
3. **կատարված չէ** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ)՝ **0 միավոր:**

Գնահատումն իրականացվել է վարիացիոն շարքի համակշռված միջինի մեթոդով հետևյալ բանաձևով՝ (**ամբողջությամբ կատարված գործողությունների քանակ**x1+**մասնակի կատարված գործողությունների քանակ**x0.5+**չկատարված գործողությունների քանակ**x0)/52[2]*100:

Ազդեցության մակարդակի (որակական) ցուցանիշներ

Որակական ցուցանիշներն անդրադառնում են ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներին և Գործողությունների ծրագրերի ներքո իրականացվող գործողությունը կապում են ռազմավարական ուղղության մակարդակում ակնկալվող արդյունքի և/կամ որակական ցուցանիշների հետ: Սույն մշտադիտարկման շրջանակներում ազդեցության մակարդակի գնահատումը կատարվելու է գործողությունների ծրագրով նախատեսված հետևյալ ուղղություններով.

1. **Ռազմավարական ուղղություն 2. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում և բարեվարքության ամրապնդում**
2. **Ռազմավարական ուղղություն 7. Համայնքային ոստիկանության վերաիմաստավորում**
3. **Ռազմավարական ուղղություն 12. Ոստիկանության բարեփոխումների շրջանակներում միջազգային համագործակցություն**

Այս ցուցանիշները գնահատվել են ՄԽ-ի կողմից և վերաբերում են կատարված գործողությունների միջոցով ռազմավարական ուղղությունների (խնդիրների) մակարդակում սպասվող արդյունքներին և ելքային իրավիճակում ներկայացված խնդիրների հասցեագրման պոտենցիալին: Այս գնահատման ընթացքում հաշվի են առնվել նաև վերստուգիչ միջոցների օբյեկտիվությունն ու ամբողջականությունը:
Գնահատումը իրականացվել է ՀՀ ՆԳՆ-ին՝ ոստիկանության ոլորտում քաղաքականությունը մշակող և մոնիթորինգ ու գնահատում իրականացնող իրավասու մարմնին, ինչպես նաև այլ համակատարող մարմիններին ուղղված Ռազմավարության և Գործողությունների ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հարցումներին՝ հարցաշարերին տրված պաշտոնական պատասխանների, ֆոկուս խմբային քննարկումների (ՖԽՔ), խորքային հարցազրույցների և գրասենյակային ուսումնասիրության/փաստաթղթերի և իրավական ակտերի (նախագծերի) վերլուծության արդյունքում դուրսբերված տեղեկատվության հիման վրա:

Այս ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման երեք չափանիշ.

- **Գործողությունը իրականացված է** - գործողությունը գնահատվում է «իրականացված է», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ գործողության իրականացումը ապահովվել է ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող արդյունքը:
- **Գործողությունը իրականացված է ոչ ամբողջական** - գործողությունը գնահատվում է «իրականացված է ոչ ամբողջական», եթե տվյալ գործողության իրականացումը չի ապահովել ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող միջանկյալ ամբողջական արդյունքը (ապահովել է մասնակի արդյունք) կամ չի հանդիսացել նպաստող գործոն այդ արդյունքի ամբողջական նվաճման համար կամ տվյալ գործողության իրականացման համար պատասխանատու պատկան մարմինների կողմից մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել փաստեր, որոնք կվկայեն

[2] Բանաձևում 52-ը 2024-2025 (առաջին կիսամյակ) թվականներին կատարման ենթակա գործողությունների թիվն է:

ռազմավարական ուղղության/խնդրի մակարդակում սպասվող միջանկյալ արդյունքի ամբողջական իրականացումը:

- **Գործողությունը իրականացված չէ** - գործողությունը գնահատվում է «իրականացված չէ», եթե տվյալ գործողության իրականացման ուղղությամբ որևէ էական միջոցառումներ չեն ձեռնարկվել կամ ձեռնարկված միջոցառումները ուղղված չեն ապահովելու ռազմավարական ուղղության/խնդրի մակարդակում սպասվող միջանկյալ արդյունքը կամ չեն հանդիսացել նպաստող գործոն այդ արդյունքի համար կամ տվյալ գործողության իրականացման համար պատասխանատու պատկան մարմինների կողմից մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող միջանկյալ արդյունքի իրականացումը:

Օրինակ՝ **Գործողություն 5.2. Ոստիկանության ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմի ներդնում**

Գնահատման մեթոդաբանությունը և մոտեցումը

Այս գործողությունը ենթադրում է, որ պետք է ստուգել՝ արդյոք մշակվել է բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմը և արդյոք այն գործարկվել է: Գործողությունը կհամարվի **«իրականացված»**, եթե մշտադիտարկման խմբին ներկայացվեն փաստեր, որոնք կվկայեն, որ.

1. Մշակվել է ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմը:
2. Գործիքակազմը գործարկվել է:
3. Այն համապատասխանում է ռազմավարական ուղղության նպատակներին:

Գնահատման ընթացքում ուսումնասիրվել է, թե արդյոք ներդրված գործիքակազմն ամբողջական է և թույլ է տալիս իրականացնել բարեվարքության պարբերական ստուգումներ՝ ուղղված ռազմավարական խնդրի լուծմանը:

Եթե գործիքակազմը մշակվել է, բայց չի գործարկվել, կամ գործարկվել է, սակայն չի ապահովում ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող արդյունքը, ապա գործողությունը կգնահատվի որպես **«իրականացված է ոչ ամբողջական»**:

Եթե գործիքակազմի մշակման ուղղությամբ էական քայլեր չեն ձեռնարկվել կամ բացակայում են փաստեր, որոնք կվկայեն դրա մշակման և գործարկման մասին, ապա գործողությունը կգնահատվի որպես **«իրականացված չէ»**:

> *Յուրաքանչյուր ոլորտի համար այս գնահատման ընթացքում փորձագիտական թիմի կողմից հաշվարկվել է **կատարողական ցուցանիշ**, որն իրենից ներկայացնում է «իրականացված» գործողությունների միջոցով տվյալ ռազմավարական խնդրի մակարդակում միջանկյալ արդյունքի նվաճումը:*

գ. Գնահատման մեթոդներ

Մշտադիտարկման նպատակներին հասնելու համար կիրառվել է արդյունքների համադրման մոտեցումը՝ համադրելով որակական և քանակական տվյալները: Տվյալները հավաքագրվել են առաջնային և երկրորդային աղբյուրներից: Հետազոտության մեթոդները ներառում են տեղեկատվության հարցումները, գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի վերլուծությունը, իրավական ակտերի (նախագծերի) ուսումնասիրությունն ու վերլուծությունը և այլ փաստաթղթեր, ՖԽՔ-ները, խորքային հարցազրույցները: Կազմակերպվել է 4 ՖԽՔ՝ ներառական և մասնակցային ձևաչափով[3], որին մասնակցել են գործողությունների կատարման

[3] https://armla.am/55073.html

համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցների ու ՔՀԿ-ների ներկայացուցիչներ, ոլորտային փորձագետներ և իրավաբաններ: Իրականացվել է 1 խորքային հարցազրույց ՀՀ ՆԳՆ իրավասու ներկայացուցչի հետ: Նաև հարկ է նշել, որ սույն զեկույցի նախագծի շուրջ 2025 թվականի հուլիսի 18-ին տեղի է ունեցել փորձագիտական քննարկում[4], որի արդյունքները ևս դիտարկվել են զեկույցի վերջնական տարբերակում:

Աղյուսակ 1. ՖԽՔ-ների պետական մարմինների, այլ շահագրգիռ կառույցների և մասնակիցների ցանկը

#	Անվանումը	Ներկայացուցիչների թիվը
1.	ՆԳՆ	1
2.	Արդարադատության նախարարություն (ԱՆ)	2
3.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն (ԲՏԱՆ)	2
4.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍՆ)	1
5.	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ԱՍՀՆ)	2
6.	Քաղաքացիական ծառայության գրասենյակ (ՔԾԳ)	3
7.	Քննչական կոմիտե	2
8.	Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ)	2
9.	Պետական գույքի կառավարման կոմիտե	1
10.	Պետական եկամուտների կոմիտե (ՊԵԿ)	3
11.	Քաղաքաշինության կոմիտե	1
12.	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ)	1
Ընդհանուր		**20**
ՔՀԿ-ներ, փորձագետներ, իրավաբաններ		
	ՔՀԿ-ներ, փորձագետներ, իրավաբաններ	
Ընդհանուր		**11**

Մշտադիտարկման արդյունքների հիման վրա մշակվել է Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարության 2024-2026 թվականների գործողությունների ծրագրի՝ 2024-2025 (առաջին կիսամյակ) թվականների իրականացման ենթակա գործողությունների **մշտադիտարկման արդյունքների զեկույցի նախագիծը** (այսուհետ՝ Զեկույցի նախագիծ): Զեկույցի նախագիծը ներկայացվել է գործողությունների կատարման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցների կարծիքի, որի արդյունքում ստացված դիտարկումների ու առաջարկությունների մի մասը ընդունվել են և տեղ են գտել Զեկույցի վերջնական տարբերակում

[4] https://armla.am/55286.html

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2024- 2025 (1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ) ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ուղղություն 1. Ներքին գործերի նախարարության ձևավորմամբ ոստիկանության կազմակերպաիրավական ձևի, կառավարման մոդելի փոփոխությունը, արտաքին միասնական նկարագրի ձևավորումն ու ծառայության ֆունկցիոնալ զարգացումը

Խնդիր՝ *Ներքին գործերի նախարարության ներքին թվային կառավարման բացակայություն, Ոստիկանության վերջնական ձևավորման ընթացիկ փուլ*

Թիրախ՝ *Քաղաքացիական վերահսկողության ներքո գործող Ոստիկանության կառուցվածքային և ֆունկցիոնալ համակարգի վերջնական ձևավորում, Նախարարություն-Ոստիկանություն ներքին արդյունավետ կառավարում*

Գործողություն 1. ՆԳՆ ներքին թվային կառավարման համակարգի գործարկում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Մրցույթի միջոցով ձեռք են բերվել ծառայություններ՝ ՆԳՆ-ի ֆունկցիոնալ ուսումնասիրության մասին հաշվետվության, ներքին արդյունավետ կառավարման նպատակով ՆԳՆ-ի կառուցվածքային ստորաբաժանումների միջև, ՆԳՆ-ում և վերջինիս ենթակա պետական մարմինների միջև տվյալների փոխանակման նպատակով բիզնես գործընթացների վերասահմանման մասին հաշվետվության, ինչպես նաև ՆԳՆ-ի, վերջինիս ենթակա պետական մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների միջև ներքին համագործակցության համար բիզնես գործընթացները նկարագրող մատրիցի մշակման համար։ Հաշվետվություններն ու մատրիցը մշակվել են։ (2025)	Մշակվել և Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդում քննարկվել է ՆԳՆ-ի ֆունկցիոնալ ուսումնասիրության մասին հաշվետվությունը։ Մշակվել և Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդում քննարկվել է ներքին արդյունավետ կառավարման նպատակով ՆԳՆ-ի կառուցվածքային ստորաբաժանումների միջև, ՆԳՆ-ում և վերջինիս ենթակա պետական մարմինների միջև տվյալների փոխանակման նպատակով բիզնես գործընթացների վերասահմանման մասին հաշվետվությունը։ Մշակվել է ՆԳՆ-ի, վերջինիս ենթակա պետական մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների միջև ներքին համագործակցության համար բիզնես գործընթացները նկարագրող մանրամասն մատրիցը։	ԲՏԱ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Համաշխարհային բանկի «Պետական հատվածի արդիականացման ծրագրի» շրջանակներում իրականացվել է ՆԳՆ, ենթակա պետական մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների ֆունկցիոնալ և բիզնես գործընթացների ուսումնասիրություն՝ ներքին համագործակցության համար բիզնես գործընթացները նկարագրող մատրիցի մշակման համար: Ծրագրի փորձագետների կողմից մշակվել և ՆԳՆ է ներկայացվել ֆունկցիոնալ ուսումնասիրության գործընթացի առաջին փուլի վերաբերյալ հաշվետվությունը: Մատրիցի մշակումը գտնվում է ընթացիկ փուլում:

ՖԽՔ-ի ընթացքում նշվեց, որ Համաշխարհային բանկի և Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գործընկերների հետ համագործակցությամբ իրականացվել է գնահատման գործընթաց, որն այժմ դեռ ընթացքի մեջ է: Այն նախատեսվում է ավարտել տարվա առաջին կիսամյակի ընթացքում: Արդեն իսկ առկա է նախնական զեկույցը, որը ներկայացնում է համակարգի ընդհանուր գնահատականը, արձանագրում առկա բացերը և առաջարկում հնարավոր լուծումներ: Ներկայումս ընթանում է նաև տեխնիկական առաջադրանքի քննարկումը: Թվայնացման շրջանակում իրականացվել է օպերատիվ կառավարման կենտրոնի ծրագրի թվայնացումը, որն ապահովում է տարբեր ծառայությունների համատեղ տվյալների բազա:

ՖԽՔ-ի ընթացքում ՔՀԿ ներկայացուցիչների կողմից ՆԳՆ ներքին թվային կառավարման համակարգի գործարկման կապակցությամբ նշվել է, որ չնայած այն հանգամանքին, որ տարբեր պետական կառույցներում առկա են տեղեկատվական բազաներ, դրանց միջև փոխգործելիությունը՝ թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական մակարդակում, գրեթե բացակայում է: Արդյունքում տվյալների փոխանակումը խոչընդոտվում է և համակարգերը գործում են մեկուսացված ձևով: Յուրաքանչյուր մարմին մշակում է իր առանձին տեղեկատվական համակարգը՝ առանց փոխգործակցության ընդհանուր կառուցվածքի և մոտեցման, ինչը բերում է տվյալների կրկնակի գրանցման, ավելորդ վարչարարության, ժամանակի և ռեսուրսների անարդյունավետ օգտագործման:

Հաշվի առնելով տրամադրված տեղեկատվությունը, արձանագրվում է, որ նախատեսված արդյունքային ցուցիչների լիարժեք իրագործում դեռևս չի ապահովվել: Թեև ՆԳՆ-ի, ենթակա պետական մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների ֆունկցիոնալ և բիզնես գործընթացների ուսումնասիրությունն իրականացվել է Համաշխարհային բանկի ծրագրի շրջանակում և ներկայացվել է առաջին փուլի նախնական զեկույցը, սակայն բիզնես գործընթացները նկարագրող մատրիցը դեռևս գտնվում է մշակման փուլում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 2. ՆԳՆ-ի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ծավալների և որակի պարբերական գնահատում, դրանց պարզեցում և թվայնացում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Մշակվել և ընդունվել է հանրային ծառայությունների մատուցման որակի չափորոշիչները սահմանող՝	Հանրային ծառայությունների մատուցման որակի չափորոշիչները սահմանող՝		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է**

ՆԳ նախարարի հրամանը։ Իրականացվել է հանրային ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ 1 հանրային հարցում։ Մշակվել և հաստատվել է ՆԳՆ ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչության 2025 թվականի տարեկան ծրագիրը։ ՆԳՆ և ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների բիզնես պրոցեսների գնահատումների հիման վրա կազմվել է զեկույց, որը ներառում է դրանց բիզնես պրոցեսների պարզեցման, ավելորդ գործողությունների բացառման, թվայնացման վերաբերյալ առաջարկներ։ Իրականացվել է հանրային ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ 1 հանրային հարցում։	ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է։ ՆԳՆ ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչության 2025 թվականի տարեկան ծրագրերը հաստատող՝ ՆԳ նախարարի հրամաններն ընդունվել են։ Ապահովվել է տարեկան ծրագրերի մշակման ստանդարտացումն ու կայունությունը։ *Եզակետային՝ 1, 2024 թվականի տարեկան ծրագիրը հաստատվել է։* Մշակվել և ՆԳՆ պաշտոնական կայքում հրապարակվել է ՆԳՆ և ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների բիզնես պրոցեսների պարզեցման, ավելորդ գործողությունների բացառման, թվայնացման վերաբերյալ առաջարկներ ներառող զեկույցը՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ծառայությունների թվայնացման ուղեցույցին համապատասխան։ Զեկույցով ներկայացված առաջարկները կազմվել են՝ հիմք ընդունելով առնվազն 3 պետության լավագույն փորձը, որոնք ներկայացված են զեկույցում։		

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ հանրային ծառայությունների մատուցման որակի չափորոշիչները սահմանող ՆԳ նախարարի հրամանը ընդունվել է։

Նույն աղբյուրի համաձայն՝ ՆԳՆ ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչության կողմից ստեղծված ու ներդրված հարցաթերթիկների և գնահատման թերթիկների միջոցով հարցումներ են անցկացվել 164 քաղաքացիների շրջանում։ Միևնույն ժամանակ,

միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի գնահատման նպատակով՝ առցանց հարթակների միջոցով, ինչպես նաև որոշ սպասասրահներում՝ QR կոդերի միջոցով անցկացված հարցումներին մասնակցել են թվով 102 քաղաքացի: ՆԳՆ պաշտոնական կայքէջի «Ծառայություններ» բաժնում տեղադրված ՆԳՆ ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչության հեռախոսահամարին զանգահարել են թվով 67 քաղաքացի՝ ծառայությունների մատուցման հետ կապված հրատապ խնդիրների, միջադեպերի և այլ հարցերով: Ինչպես նաև սույն թվականի հունիսի 16-ից 20-ը ներառյալ ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ կենդանի հարցման ձևաչափով անցկացրել են երկրորդ հանրային հարցումը Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի՝ Նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև նույն մարզերի հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության բաժինների կողմից սպասարկված քաղաքացիների շրջանում, սակայն հարցման մեթոդի, մասնակիցների և արդյունքների մասին տեղեկատվություն չի տրամադրվել:

Մշտադիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ ՆԳ նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 7909-Ա հրամանով հաստատվել է ՆԳՆ ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչության 2025 թվականի տարեկան ծրագիրը, իսկ ՆԳՆ և ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների բիզնես պրոցեսների գնահատումները իրականացվել են և դրանց հիման վրա կազմվել է զեկույց:

ՔՀԿ ներկայացուցիչների և փաստաբանների կողմից ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվել է մի շարք մտահոգիչ խնդիրներ, որոնք առնչվում են «որակյալ կադրերի հավաքագրման» քաղաքականությանը: Նշվում է, որ ՆԳՆ կողմից հրապարակված պաշտոնական հայտարարությունների համաձայն՝ ներկայումս համակարգում առկա են բազմաթիվ թափուր հաստիքներ, որոնց համար աշխատանքի կարող են ընդունվել նաև բարձրագույն կրթություն չունեցող անձինք: Այս մոտեցումը գործնականում մի շարք մարտահրավերներ է առաջացնում: Ըստ դիտարկումների՝ վերապատրաստման ընթացակարգերը կարճաժամկետ են՝ սահմանափակվելով ընդամենը մի քանի օրով, ինչը բավարար չէ մասնագիտական հմտություններ և կարողություններ ձևավորելու համար: Արդյունքում, համակարգում առկա է լուրջ մարդկային ռեսուրսների պակաս, որը բացասական հետևանքներ է ունենում թե՛ ծառայության որակի, թե՛ ընդհանուր համակարգային կայունության վրա: Բացի դրանից, ուշադրություն է հրավիրվում նաև ծառայողների իրազեկվածության ցածր մակարդակին, ընդունելության գործընթացներում թափանցիկության պակասին և որակավորման չափանիշների անորոշությանը: Այս ամենը հանգեցնում է նրան, որ որոշ դեպքերում պարեկային ծառայության կողմից կազմված վարչական ակտերը չեն համապատասխանում օրենսդրական կամ գործընթացային պահանջներին: Վերոնշյալ խնդիրների համակցումը բերում է նաև նրան, որ փորձառու և երկարամյա պետական ծառայություն իրականացրած մասնագետները դուրս են մղվում համակարգից՝ չունենալով հնարավորություններ իրենց մասնագիտական փորձառությունը ներդնելու այս պայմաններում:

Միևնույն ժամանակ, ՄԽ-ի մոտ առաջացել են որոշակի մտահոգություններ հանրային ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ իրականացված հարցումների վերաբերյալ:

Առաջին հերթին մտահոգիչ է հարցումներին մասնակցած քաղաքացիների չափազանց փոքր թիվը (ընդամենը 333 անձ՝ բոլոր աղբյուրները միասին). 164 քաղաքացի՝ հարցաթերթիկների

միջոցով, 102 քաղաքացի՝ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտում, և 67 քաղաքացի՝ հեռախոսազանգերի միջոցով: Այս ընտրանքը չափազանց սահմանափակ է և անբավարար՝ ապահովելու վիճակագրորեն հավաստի և ներկայացուցչական արդյունքներ:

Բացակայում է որևէ տեղեկատվություն հարցմանը մասնակցողների ընտրության մեթոդաբանության վերաբերյալ. պարզ չէ, թե ինչ չափանիշներով և սկզբունքներով են ընտրվել մասնակիցները, արդյոք կիրառվել են ներկայացուցչականության ապահովման մեխանիզմներ, կամ դա եղել է պատահական ընտրություն: Չի նշվում, թե ինչ տոկոս են կազմում մասնակիցները Հայաստանի ընդհանուր բնակչության, թիրախային խմբերի կամ ոստիկանության ծառայություններից օգտվողների ընդհանուր թվի համեմատ:

Նաև մտահոգիչ է QR կոդերի միջոցով հարցումների իրականացման մեխանիզմը: Փաստաթղթում չի հստակեցվում, թե արդյոք այդ QR կոդերը անհատականացված են և միայն կոնկրետ ծառայությունից օգտվողների համար, թե դրանք հանրային հասանելի են: Եթե դրանք հանրային հասանելի են, ապա առկա է լուրջ ռիսկ, որ նույն անձը կարող է բազմակի անգամ լրացնել հարցաթերթիկը՝ խեղաթյուրելով արդյունքները: Եթե կոդերը անհատականացված են, ապա պարզ չէ, թե ինչպես է ապահովվում դրանց բաշխումը այնպես, որ ապահովվի ներկայացուցչականությունը:

Հատկանշական է նաև, որ չի ներկայացվում հարցման արդյունքների վերլուծություն. բացակայում է ցանկացած տեղեկատվություն արդյունքների, բացահայտված խնդիրների, հանրության գնահատականների և բարելավման առաջարկների վերաբերյալ: Արդյունքների հրապարակայնության բացակայությունը լուրջ խնդիր է թափանցիկության և հաշվետվողականության տեսանկյունից:

Նման մեթոդով հարցումը չի կարող համարվել արդյունավետ և ամբողջական գործիք հանրային ծառայությունների որակի օբյեկտիվ գնահատման համար և կասկածներ կարող է առաջացնել այս ցուցանիշի իրական կատարումը:

Չնայած նշված որակական թերություններին և մեթոդաբանական սահմանափակումներին, հարկ է նշել, որ զուտ քանակական տեսանկյունից դիտարկելիս գործողության շրջանակներում նախատեսված հանրային հարցումները իրականացվել են: Գործողության արդյունքային ցուցանիշում սահմանված էր իրականացնել հանրային ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ 2 հանրային հարցում, որը ֆորմալ առումով կատարվել է, քանի որ փաստացի անցկացվել են հարցումներ, ներգրավվել են քաղաքացիներ (թեկուզ սահմանափակ թվով), և օգտագործվել են տարբեր գործիքներ (հարցաթերթիկներ, առցանց հարթակներ, QR կոդեր, հեռախոսազանգեր):

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է:**

Գործողություն 3. Ոստիկանության կառուցվածքի և ֆունկցիոնալի ավարտական տեսքի ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Գործարկվել է Քրեական	Ոստիկանությունը գործում է նոր կառուցվածքով և		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

ոստիկանությունը՝ նոր կառուցվածքով և ֆունկցիոնալով։ Գործարկվել է Համայնքային ոստիկանությունը՝ նոր կառուցվածքով և ֆունկցիոնալով։	ֆունկցիոնալով՝ ներառելով սույն ԳԾ-ի 6-րդ ուղղությանը համապատասխան գործարկված քրեական ոստիկանությունը, սույն ԳԾ-ի 7-րդ ուղղությանը համապատասխան գործարկված Համայնքային ոստիկանությունը և սույն ԳԾ-ի 8-րդ ուղղությանը համապատասխան գործարկված Ոստիկանության գվարդիան։ *Եզակետային՝ 2023 թվականին Պարեկային ծառայությունն ամբողջությամբ գործարկվել է, 2024 թվականի առաջին եռամսյակում Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության գործունեությունն ամբողջությամբ դադարեցվել է, իսկ ֆունկցիոնալը տեղափոխվել է ՆԳՆ միգրացիայի և քաղաքա-ցիության ծառայություն, 2024 թվականի առաջին եռամսյակում Ոստիկանության աջակցող ֆունկցիա սպասարկող ստորաբաժանումները լուծարվել են, իսկ ֆունկցիոնալը տեղափոխվել է ՆԳՆ։*		

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2024 թվականի նոյեմբերի 1-ին ձևավորվել է Քրեական ոստիկանությունը և Համայնքային ոստիկանությունը։ Գխավոր վարչության անմիջական ենթակայությամբ համայնքային մակարդակում ձևավորվել են տարածքային ստորաբաժանումներ։

Նույն աղբյուրի համաձայն՝ Քրեական ոստիկանությունն իր նոր կառուցվածքով իրականացնելու է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման, օպերատիվ կանխարգելման և հետախուզվողների հայտնաբերման օպերատիվ-հետախուզական գործունեություն, իսկ Համայնքային ոստիկանությունը բոլոր ուղղություններով իրականացնելու է հանցագործությունների կանխարգելում, այդ թվում՝ ընտանեկան բռնության դեպքերին հակազդելու, անչափահասներին հանցավորությունից զերծ պահելու գործառույթներ։ Ծառայությանը վերապահված է նաև ոչ մեծ ու միջին ծանրության հանցագործությունների դեպքերով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման գործառույթ։

ՖԽՔ-ի ընթացքում նշվեց, որ առաջին անգամ ներդրվել է կրթական ծրագիր քրեական ոստիկանությունում ծառայություն սկսելու համար: Դիմորդները կարողացել են միանալ ծառայությանը միայն համապատասխան ծրագիրը հաջողությամբ ավարտելուց հետո: Արձանագրվեց նաև, որ Ոստիկանական գվարդիան կգործարկվի 2025 թվականի նոյեմբերի 1-ից՝ նախատեսելով կրթական առանձին գործընթացներ նաև այս նորաստեղծ ծառայության համար:

Չնայած այն հանգամանքին, որ Ոստիկանության գվարդիան որպես կառուցվածքային ստորաբաժանում դեռևս փաստացի չի գործարկվել, ՄԽ-ն գործողությունը գնահատում է որպես կատարված: Այս գնահատման հիմքում դրված է այն հանգամանքը, որ 2024 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունվել է «Ոստիկանության գվարդիայի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-430-Ն), որը հանդիսանում է գվարդիայի ձևավորման և գործարկման իրավական անհրաժեշտ նախապայմանը, այսպիսով ապահովելով ամբողջական կատարման մակարդակ՝ ըստ սույն մշտադիտարկման մեթոդոլոգիայի:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Գործողություն 4. Ոստիկանության շենքային համալիրի գնահատում, ձերբակալվածներին պահելու վայրերի (ՁՊՎ) օպտիմալացում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Իրականացվել է ձերբակալված անձանց պահելու 8 վայրերի օպտիմալացում:	Ոստիկանության շենքային համալիրի պայմանների վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	ՊԵԿ ՖՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ արգելանքի վերցված անձանց իրավունքների պատշաճ ապահովման համատեքստում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում՝ 33 ձերբակալվածների պահման վայրերից 11-ի գործունեությունը դադարեցվել է, մյուսներում նախատեսվում են հիմնանորոգման և արդիականացման աշխատանքներ՝ ապահովելու համար դրանց լիարժեք համապատասխանելիությունը օրենսդրական ստանդարտներին և միջազգային չափանիշներին:

Մշտադիտարկման արդյունքում պարզ դարձավ է, որ օպտիմալացման արդյունավետության գնահատման ուղղությամբ որևէ գործողություն չի իրականացվել, ինչի հետևանքով առկա չեն դրա արդյունավետությունը հաստատող տվյալներ: Չնայած դրան՝ ՄԽ-ն գործողությունը գնահատում է կատարված՝ հիմնվելով բացառապես քանակական ցուցանիշների վրա:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

«ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՄԲ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՒՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԻ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՏԱՔԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	4	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	3	75%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ	1	25%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ուղղություն 2. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում և բարեվարքության ամրապնդում

Խնդիր՝ *Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կարիքների ուսումնասիրման վրա հիմնված ծրագրի և կատարողականի գնահատման համակարգի բացակայություն, ոստիկանությունում ծառայության գրավչության ոչ բավարար մակարդակ, բարեվարքության խնդիրներ*

Թիրախ՝ *Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման, ոստիկանությունում ծառայության գրավչության բարձրացման և կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմի ամրապնդում*

Գործողություն 1. ՆԳՆ մարդկային ռեսուրսների կարիքների համապարփակ գնահատում՝ ապացուցահեն, գենդերարձագանքող (gender responsive) քաղաքականության մշակման նպատակով

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Միջանկյալ արդյունք**
Իրականացվել է կարիքների գնահատում, որի հիման վրա մշակվել է մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխումներին ուղղված առաջարկներ ներառող զեկույց	Մշակվել և ՆԳՆ պաշտոնական կայքում հրապարակվել է ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության և ոստիկանության կադրային կարիքների գնահատումը ներառող զեկույցը։ Կարիքների գնահատումը կատարվել է միջազգային լավագույն փորձի հիման վրա և մշակված զեկույցը ներառում է արձանագրված խնդիրների, այդ թվում՝ գենդերային հիմքով առկա խնդիրների լուծման առաջարկներ։	ՔԾԳ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկության՝ ՄԱԶԾ կողմից իրականացվող «Մարդկային ռեսուրսների բարեփոխման» ծրագրի շրջանակներում իրականացվել է ՆԳՆ-ի մարդկային ռեսուրսների կարիքների համապարփակ գնահատում։ Մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխումներին ուղղված առաջարկներ ներառող զեկույցը ներկայացվել է Նախարարություն։

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացի գնահատուման աշխատանքներն իրականացվել են տարբեր մեթոդներով՝ ինչպես առցանց, այնպես էլ տեղում անցկացվող հարցումների, ինչպես նաև համակարգի ուսումնասիրության միջոցով։

ՄԽ-ի կողմից իրականացված գնահատման արդյունքում արձանագրվեցին հետևյալ խնդիրները.

Զեկույցի բովանդակության անորոշություն - Առկա է անորոշություն զեկույցի բովանդակության վերաբերյալ։ Մասնավորապես, չի հստակեցվում, թե որքանով է զեկույցը համապարփակ կերպով արտացոլում ՆԳՆ-ի իրական կարիքները։

Միջազգային լավագույն փորձի կիրառման անհստակություն - Արդյունքային ցուցիչներում սահմանված է, որ զեկույցը պետք է հիմնված լինի միջազգային լավագույն փորձի վրա, սակայն չկա որևէ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք և ինչ չափով է կիրառվել միջազգային փորձը:

Զեկույցի հրապարակայնության բացակայություն - Արդյունքային ցուցիչներում սահմանված է, որ զեկույցը պետք է հրապարակվի ՆԳՆ-ի պաշտոնական կայքում, սակայն մշտադիտարկման պահին զեկույցը դեռևս հրապարակված չէ:

Ժամկետների պահպանման հարցեր - Չնայած որ զեկույցի մշակումը ըստ ՆԳՆ տեղեկատվության ավարտվել է, սակայն այն դեռևս չի հրապարակվել նախատեսված ժամկետներում, ինչը ենթադրում է ժամանակացույցի խախտում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

Գործողություն 2. Ոստիկանությունում որակյալ կադրերի հավաքագրման (ներգրավման) պլանի ներդնում՝ միտված կոռուպցիոն ռիսկերից զերծ գործընթացով կարող կադրերի հայտնաբերմանը և ընդունելությանը

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Մշակվել է կադրերի ներգրավման, Ոստիկանությունում կադրերի հոսունության տեմպերը, շարժը գնահատող զեկույց:	Զեկույցը մշակվել և հրապարակվել է ՆԳՆ պաշտոնական կայքում և ներառում է կադրերի ներգրավման մեթոդաբանության լավարկման վերաբերյալ առաջարկներ: Ուսումնասիրությունը հիմնվել է միջազգային փորձի և առնվազն 3 պետության լավագույն փորձի վրա, որոնք արտացոլվել են զեկույցում:	ՔԾԳ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Մշտադիտարկման ընթացքում պարզ դարձավ, որ ՄԱԶԾ կողմից իրականացվող «Մարդկային ռեսուրսների բարեփոխման» ծրագրի շրջանակներում իրականացվել է կադրերի ներգրավման, Ոստիկանությունում կադրերի հոսունության տեմպերի ուսումնասիրություն: Արդյունքում, նշված միտումները գնահատող զեկույցի նախնական տարբերակը ներկայացվել է ՆԳՆ:

ՄԽ-ի կողմից իրականացված գնահատման արդյունքում արձանագրվեցին հետևյալ խնդիրները.

Զեկույցի ոչ վերջնական կարգավիճակ - Չնայած որ ՄԱԶԾ-ի աջակցությամբ իրականացվել է ուսումնասիրություն և մշակվել է զեկույցի նախնական տարբերակ, ինչը ենթադրում է, որ զեկույցը չի ստացել վերջնական հաստատում և չի կարող համարվել ամբողջությամբ մշակված:

Հրապարակայնության բացակայություն - Արդյունքային ցուցանիշների էական բաղադրիչ է զեկույցի հրապարակումը ՆԳՆ պաշտոնական կայքում: Մշտադիտարկման պահին զեկույցը չի

հրապարակվել, ինչը նշանակում է, որ այս պահանջը չի բավարարվել: *Հրապարակայնության բացակայությունը* լուրջ խոչընդոտ է թափանցիկության և հաշվետվողականության ապահովման տեսանկյունից:

Միջազգային փորձի կիրառման անհստակություն – Առկա չէ տեղեկատվություն, թե որքանով է զեկույցը հիմնված միջազգային փորձի և առնվազն 3 պետության լավագույն փորձի վրա:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 3.1. Ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատման համակարգի ներդրում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, որով նախատեսվում են ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատման ինստիտուտը և կատարողականի գնահատման ցուցիչները սահմանելու լիազորող նորմը:	Զեկույցը մշակվել և հրապարակվել է ՆԳՆ պաշտոնական կայքում և ներառում է ոստիկանության ծառայողների կատարողական գնահատման համար արդյունավետ և թիրախային լուծումներ: Ուսումնասիրությունը հիմնվել է միջազգային փորձի և առնվազն 3 պետության լավագույն փորձի վրա, որոնք արտացոլվել են զեկույցում:	ՔԾԳ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ մշակվել է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծ, որով նախատեսվում է ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատման ինստիտուտը և կատարողականի գնահատման ցուցիչները սահմանելու լիազորող նորմը:

ՖԽՔ-ի ընթացքում պարզվել է, որ կատարողականի գնահատման հայեցակարգն արդեն ձևավորված է, և առաջիկայում նախատեսվում է դրա ընդգրկումը համապատասխան զեկույցում:

Մշտադիտարկման արդյունքում բացահայտվել են հետևյալ խնդիրները.

Օրենսդրական փոփոխությունները չեն ընդունվել - Թեև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը մշակվել է, սակայն այն դեռևս չի ընդունվել: Առանց օրենսդրական փոփոխությունների ընդունման և ուժի մեջ մտնելու, կատարողականի գնահատման համակարգի ներդրման իրավական հիմքերը բացակայում են:

Զեկույցը առկա չէ- Արդյունքային ցուցիչով նախատեսված զեկույցը դեռևս մշակված չէ: Չնայած որ կատարողականի գնահատման հայեցակարգն արդեն ձևավորված է, այն չի համարվում որպես ցուցիչով նախատեսված զեկույց և չի հրապարակվել ՆԳՆ պաշտոնական կայքում:

Բովանդակային պահանջների անորոշություն - Քանի որ զեկույցը դեռևս մշակված չէ, անհնար է գնահատել, թե որքանով այն կհամապատասխանի սահմանված բովանդակային պահանջներին, մասնավորապես՝ արդյոք այն կներառի ոստիկանության ծառայողների կատարողական գնահատման համար արդյունավետ և թիրախային լուծումներ:

Միջազգային փորձի կիրառման անհստակություն - Առկա չէ տեղեկատվություն, թե որքանով է զեկույցը հիմնված միջազգային փորձի և առնվազն 3 պետության լավագույն փորձի վրա:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

Գործողություն 3.2. Ոստիկանության սոցիալական երաշխիքների պատշաճ համակարգի ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Իրականացվել է Ոստիկանության ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների համադրված իրավիճակային վերլուծություն, որի արդյունքներով կազմվել է զեկույց:	Ատեստացիայի արդյունքների մոնիթորինգի հիման վրա մշակել է մոնիթորինգի շրջանակներում արձանագրված խնդիրները ներկայացնող զեկույց: Զեկույցը ներառում է նաև ատեստացիայի գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկներ, որոնք հիմնված են նաև ատեստավորման հանձնաժողովի անդամների, այդ թվում՝ ՀԿ ներկայացուցիչների հետ արված հարցազրույցների արդյունքների վրա:	ՖՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Ոստիկանության ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների համադրված իրավիճակի վերաբերյալ ՆԳՆ-ում իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ՝ իրավական կարգավորումների և ֆինանսական հատկացումների վերաբերյալ: Նշված ուսումնասիրությունների արդյունքներով կազմվել է զեկույց:

Միևնույն ժամանակ, ՄԽ-ի կողմից սույն գործողությամբ նախատեսված միջոցառումները չեն դիտարկվել ամբողջությամբ կատարված՝ պայմանավորված հետևյալով.

Զեկույցի բովանդակության անորոշություն - Չնայած ՆԳՆ-ի տրամադրած տեղեկությանը, որ զեկույցը կազմվել է, սակայն այս զեկույցը չի տրամադրվել մշտադիտարկման խմբին: Առանց զեկույցին ծանոթանալու հնարավոր չէ գնահատել դրա համապատասխանությունը սահմանված

արդյունքային ցուցանիշներին: Մշտադիտարկման խմբի համար բացակայում է հնարավորությունը ստուգելու զեկույցի բովանդակությունը և համապատասխանությունը պահանջներին:

Համակարգային խնդիրների վերհանման բացակայություն - Գործողության արդյունքային ցուցանիշներով նախատեսված էր, որ զեկույցը պետք է վերհանի համակարգային խնդիրները: Սակայն ՆԳՆ-ի կողմից չի տրամադրվել որևէ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք զեկույցը ներառում է համակարգային խնդիրների վերհանում:

Ատեստավորման հանձնաժողովի անդամների և ՀԿ ներկայացուցիչների հետ հարցազրույցների բացակայություն - Արդյունքային ցուցանիշներով նախատեսված էր, որ զեկույցը պետք է ներառի ատեստավորման հանձնաժողովի անդամների և ՀԿ ներկայացուցիչների հետ արված հարցազրույցների արդյունքները: Սակայն ՆԳՆ-ի կողմից չի տրամադրվել որևէ տեղեկատվություն այս հարցազրույցների իրականացման կամ դրանց արդյունքների վերաբերյալ:

Ատեստացիայի բարելավմանն ուղղված առաջարկների բացակայություն - Գործողության արդյունքային ցուցանիշներով նախատեսված էր, որ զեկույցը պետք է ներառի ատեստացիայի բարելավմանն ուղղված առաջարկներ: Սակայն ՆԳՆ-ի կողմից չի տրամադրվել որևէ տեղեկատվություն այս առաջարկների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոնշյալը, գործողության կատարումը դիտարկվում է մասնակի:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 3.3. Ոստիկանության ծառայողի դիմակայուն նկարագրի ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ընդունվել է ոստիկանության ծառայողների բժշկական զննության նոր կարգը և այն առավելագույնս նպաստում է ոստիկանական աշխատանքի համար կարող կադրերի հավաքագրմանը	Ոստիկանության ծառայողների բժշկական զննության անցկացման կարգը հաստատվել է Կառավարության կողմից: Ելակետային՝ Կառավարության գործող որոշում, որը 2023 թվականին ենթարկվել է հատվածային փոփոխության ծառայողներին ներկայացվող հասակի և քաշի պահանջների մասով:	ՀՀ առողջապահության նախարարություն	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրված տեղեկատվության՝ «ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 175-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ընդունվել է, որի հիման վրա իրականացվել է ոստիկանության ծառայողին և ծառայության ընդունվող թեկնածուին ներկայացվող առողջական վիճակի հետ կապված

պահանջների վերանայում, գործնականում առաջացած խնդիրների և անճշտությունների շտկում: Նվազեցվել է մուտքային հասակի և քաշի չափանիշները:

ՄԽ-ի արդյունքներով նաև պարզ է դարձել, որ ընդունվել է «ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 3-ի N 176-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով համապատասխան փոփոխություններ է կատարվել նաև ոստիկանության ծառայողների բժշկական զննության կարգում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 4.2. Կանանց ներգրավման խթանում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Հայտարարվել է 1 ընդունելություն՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով:	Կանանց ներգրավումը խթանելու նպատակով հայտարարվել է առնվազն 1 ընդունելություն: Ելակետային՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով կազմակերպվել է 1 նպատակային ընդունելություն:	ԿԳՄՄՆ ԱՍՀՆ ՄԻՊ ՏԻՄ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՆԳՆ ոստիկանությունում կանանց ներգրավվածությունն ավելացնելու նպատակով իրականացվել է նպատակային ընդունելություն: Նախատեսվել էր ընդունելության ընդհանուր 368 տեղ, որից՝ 299-ը (81,2 %) կանանց, իսկ 69-ը (18,7 %)՝ տղամարդկանց համար: 2024 թվականի փետրվար ամսին մեկնարկել է դիմումների ընդունման փուլը, որին նախագրանցվել են 532 կանայք, արդյունքում դիմել են 140 կին, իսկ ապրիլ ամսին մեկնարկել է 5-ամսյա դասընթացը, որն ավարտվել է հոկտեմբեր ամսին: 5-ամսյա դասընթացներին մասնակցել են 48 կին, որոնցից ավարտել են 33-ը:

Ըստ նույն աղբյուրի՝ միասնական ընդունելություն-մրցույթի համար հատկացվել է 239 տեղ, որից 190-ը իգական սեռի, իսկ 49 արական սեռի դիմորդներին: Այս պահի դրությամբ ընդունելությունն ավարտվել է, ընդունելության քննությունները հաղթահարել են 226 դիմորդ, որոնցից 173-ը քաղաքացիական (17 իգական), իսկ 53-ը՝ ծառայող (4 իգական):

ՔՀԿ ներկայացուցչի կողմից կողմից արձանագրվել է, որ ՆԳՆ համակարգում կանանց ներգրավման հարցում շարունակում է գոյություն ունենալ կանխակալ վերաբերմունք: Ըստ դիտարկումների՝ այդ վերաբերմունքը հիմնականում արտահայտվում է կանանց մասնագիտական կարողությունների նկատմամբ կասկածներով: Նման մոտեցումները շատ հաճախ հիմնված չեն իրական փորձի կամ փաստերի վրա, այլ արտահայտում են խորապես

արմատավորված գենդերային կարծրատիպեր և նախապաշարմունքներ, որոնք խոչընդոտում են կանանց լիարժեք և հավասար մասնակցությունը ծառայողական գործունեությանը:

Մշտադիտարկման ընթացքում ՄԽ-ի կողմից գործողության կատարողականի հետ կապված առանձնացվել են հետևյալ հիմնական խնդիրները.

Ժամանակային անհամապատասխանություն – ՆԳՆ կողմից գործողության կատարման վերաբերյալ տրամադրված տեղեկատվության համաձայն՝ կատարողականում ներառված են գործողություններ, որոնք իրականացվել են մինչև ռազմավարության ընդունումը: Ռազմավարությունն ընդունվել է 2024 թվականի նոյեմբերի 15-ին, մինչդեռ հաշվետվության մեջ նշվում է 2024 թվականի փետրվարին մեկնարկած և հոկտեմբերին ավարտված ընդունելության գործընթացի մասին: Սա մեթոդաբանական լուրջ խնդիր է, քանի որ ռազմավարության շրջանակներում կարող են գնահատվել միայն դրա ընդունումից հետո իրականացված գործողությունները:

Ցուցանիշների անհամապատասխանություն - Արդյունքային ցուցանիշը պահանջում է «կանանց ներգրավումը խթանելու նպատակով հայտարարվել է առնվազն 1 ընդունելություն»: Այսպիսով, ներկայացված կատարողականը մասնակի է ապահովում սահմանված ցուցանիշը, այն է՝ 1 ընդունելության մրցույթի կազմակերպումը, սակայն առկա է բովանդակային խնդիր՝ կանանց ներգրավումը խթանելու մասով: Մասնավորապես, ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ «ընդունելության քննությունները հաղթահարել են 226 դիմորդ, որոնցից 173-ը քաղաքացիական (17 իգական), իսկ 53-ը՝ ծառայող (4 իգական)», ինչը նշանակում է, որ ընդհանուր 226 ընդունվածներից միայն 21-ն են կանայք (կամ 9.3%): Այս ցուցանիշը չի կարող համարվել «կանանց ներգրավումը խթանելու» արդյունավետ միջոց:

Վերոնշյալ խնդիրների լույսի ներքո, գործողությունը դիտարկվում է մասնակի կատարված, քանի որ՝

- ներկայացված գործողությունները չեն համապատասխանում ռազմավարության ժամանակային շրջանակին ,
- փաստացի արդյունքները չեն ապահովում կանանց ներգրավման խթանման նպատակը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

Գործողություն 5.1. ՆԳՆ հակակոռուպցիոն ծրագրի հաստատում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Իրականացվել է ՆԳՆ Համակարգում կոռուպցիոն ռիսկի հակվածության գոտիների գնահատում:	Դիտարկվող ժամանակահատվածի համար արդյունքային ցուցիչ նախատեսված չէ:	ԿԿՀ ԱՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ** Ռազմավարական նպատակին ուղղված խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՆԳՆ համակարգում կոռուպցիոն ռիսկի հակվածության գոտիների գնահատումն ընթացքի մեջ է:

Թիրախային արդյունքի պահանջի համաձայն՝ նախատեսված էր ՆԳՆ համակարգում իրականացնել կոռուպցիոն ռիսկի հակվածության գոտիների գնահատում: Սակայն, ըստ նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, գնահատման գործընթացը դեռևս ընթացքի մեջ է և չի հասել ավարտական փուլ: Սա նշանակում է, որ տվյալ փուլում առկա չեն ամբողջական արդյունքներ **քանակական գնահատման** համար, որոնք կարող էին ծառայել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջամտությունների ձևավորման հիմք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործողությունը ընտրվել է նաև որակական գնահատման նպատակով, հարկ է նշել, որ այս մասով հնարավոր չէ գնահատել գործողության **որակական ազդեցությունը**, քանի որ բացակայում են գնահատման ենթակա կոնկրետ արդյունքները, դրանց վրա հիմնված գործառնական լուծումները: Հետևաբար, գործողությունը ներկայում չունի փաստացի արդյունքներ, որոնք հնարավոր կլիներ դիտարկել որպես ռազմավարական նշանակության ազդեցություն ապահովող նախադրյալներ, ուստի որակական տեսանկյունից գնահատվում է չիրականացված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով՝ ռազմավարական խնդիրը (արդյունքը) գնահատվում է որպես «**ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ»:**

Գործողություն 5.2. Ոստիկանության ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմի ներդնում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Մշակվել է ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմը:	Դիտարկվող ժամանակահատվածի համար արդյունքային ցուցիչ նախատեսված չէ:	ԿԿՀ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ** Ռազմավարական նպատակին ուղղված խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ ՆԳ նախարարի համապատասխան հրամանը գտնվում է մշակման փուլում:

ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման գործընթացները գտնվում են իրականացման փուլում: Ստեղծվել է աշխատանքային խումբ, որը ներառում է մասնակիցներ ՆԳՆ Ներքին անվտանգության վարչությունից, մի շարք գերատեսչություններից և ՔՀԿ-ներից: Նախատեսվում է ներկայացնել նաև զեկույցի նախագիծ: Ըստ ԿԿՀ տրամադրած տեղեկության՝ իրականացվել է բարեվարքության և կոռուպցիայի

կանխարգելման հարցերին նվիրված վերապատրաստում, որն ընդգրկել են ոստիկանության ու ՆԳՆ աշխատակիցների լայն շրջանակ։ 2024 թվականի վերջին ԿԿՀ-ի կողմից իրականացվել է վերապատրաստում՝ նախատեսված շուրջ 260 ղեկավար պաշտոն զբաղեցնող ծառայողների համար։

Այսպիսով՝ *թիրախային արդյունքով նախատեսված էր ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմի մշակումը։* Չնայած որոշակի գործողությունների, այդ թվում՝ ՆԳՆ նախարարի համապատասխան հրամանի մշակման գործընթացի մեկնարկին, աշխատանքային խմբի ձևավորմանը և վերապատրաստման միջոցառումների իրականացմանը, *կարելի է արձանագրել, որ գործիքակազմը՝ որպես ավարտուն, հաստատված և գործնականում կիրառելի համակարգ, այս փուլում դեռևս առկա չէ։*

Որակական գնահատման տեսանկյունից հարկ է նշել, որ մշտադիտարկման շրջանակում ՄԽ-ի կողմից վեր են հանվել մի շարք հիմնախնդիրներ, որոնք կապված են ոստիկանության համակարգում բարեվարքության ամրապնդման գործընթացի հետ։ Դրանցից առաջնայինը ոլորտը կարգավորող օրենսդրական և ռազմավարական փաստաթղթերի անկատարությունն է։ Գործող իրավական կարգավորումները չեն ստեղծում ամբողջական և կիրառելի իրավական և գործնական շրջանակ՝ բարեվարքության սկզբունքների իրականացման համար։ Մասնավորապես, բացակայում են հստակ սահմանված պահանջներ և ուղեցույցներ ծառայողների մասնագիտական վարքագծի և բարեվարքության համար, ինչը բացասաբար է ազդում համակարգում արդյունավետության և պատշաճ ծառայության վրա։

Ներդրված չեն ոստիկանության ղեկավար և ոչ ղեկավար պաշտոն զբաղեցնող ծառայողների համար ընթացիկ և ծառայության անցնելու նպատակով բարեվարքության ստուգման մեխանիզմներ։

Բացի այդ, թափանցիկության և հաշվետվողականության բաղադրիչներում ևս արձանագրվել են համակարգային բնույթի թերություններ։ Մասնավորապես, բարեվարքության մոնիթորինգի գործիքակազմը խիստ սահմանափակ է, հանրային զեկուցման մեխանիզմները գործում են ոչ պատշաճ արդյունավետությամբ։ Այս իրավիճակը խորանում է նրանով, որ ոստիկանության բարեվարքության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հանրության համար էականորեն սահմանափակված է՝ թե՛ ծավալի, թե՛ բովանդակության, և թե՛ մատչելիության առումով։

Համակարգային բարեփոխումների առանցքային ուղղություններ պետք է դառնան հաշվետվողականության ինստիտուցիոնալ մեխանիզմների զարգացումը, հանրային ներգրավվածության ապահովումը բարեվարքության մշտադիտարկման գործընթացներում, ինչպես նաև բարեվարքության չափանիշների և դրանց իրականացման վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ու հասանելիության բարձրացումը։ Այս բարեփոխումները ռազմավարական նշանակություն ունեն ոչ միայն ներքին կարգապահական համակարգի ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից, այլև առանցքային դեր են խաղում հանրային վստահության վերականգնման և ամրապնդման գործում, որն անվտանգության ոլորտի ցանկացած արդյունավետ բարեփոխման անհրաժեշտ նախապայման է։

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գործողության որակական ազդեցությունը տվյալ փուլում գնահատվում է որպես չիրականացված։ Չնայած որոշ նախադրյալների ձևավորմանը և

գործընթացների մեկնարկին, թիրախային ցուցանիշում նշված «մշակված գործիքակազմը» լիարժեքորեն առկա չէ: Գործողությունը ձևավորել է բարեվարքության մշակույթի ամրապնդման որոշակի հիմքեր, սակայն դրանց լիարժեք ազդեցությունը կդիտարկվի այն փուլում, երբ գործիքակազմը կհաստատվի, կընդունվի և կսկսի կիրառվել որպես փաստացի գործիք ծառայողների վարքագծային և բարեվարքության ռիսկերի կառավարման համար:

Այսպիսով, ամփոփելով գործողության քանակական և որակական կատարման մասով ՄԽ-ի հիմնական դիտարկումներն են՝

1. *Քանակական գնահատման համար թիրախի իրականացման աստիճանը* - Գործողությունը նախատեսում էր «ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմի մշակում», սակայն փաստացի իրականացվել են միայն նախապատրաստական աշխատանքներ: Մասնավորապես՝
   - ՆԳ նախարարի համապատասխան հրամանը դեռևս մշակման փուլում է
   - Ձևավորվել է աշխատանքային խումբ և իրականացվել են վերապատրաստումներ
2. *Որակական գնահատման համար համակարգային խոչընդոտները* – ՄԽ-ի կողմից բացահայտվել են ոլորտում առկա հետևյալ հիմնախնդիրները՝
   - Օրենսդրական և ռազմավարական փաստաթղթերի անկատարություն
   - Հստակ սահմանված պահանջների և ուղեցույցների բացակայություն
   - Ղեկավար և ոչ ղեկավար պաշտոն զբաղեցնող ծառայողների ընթացիկ և ծառայության անցնելու նպատակով բարեվարքության ստուգման մեխանիզմների բացակայություն
3. *Թափանցիկության և հաշվետվողականության խնդիրներ*
   - Բարեվարքության մոնիթորինգի գործիքակազմի սահմանափակություն
   - Հանրային զեկուցման մեխանիզմների ոչ պատշաճ արդյունավետություն
   - Տեղեկատվության հասանելիության սահմանափակվածություն

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով՝ ռազմավարական խնդիրը (արդյունքը) գնահատվում է որպես «**ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ»:**

Գործողություն 5.3. Ոստիկանության ծառայողների վարքագծի կանոնների հաստատում, դրանց կիրառման գործիքակազմի հզորացում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Մշակվել է Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2025 թվականի տարեկան միջոցառումների ծրագիրը (2024) Ոստիկանության նոր կարգապահական կանոնագիրքը սահմանող օրենքի նախագիծը	Մշակվել են Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության անձնակազմի համար ստանդարտ գործառնական	ԿԿՀ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է** Ռազմավարական նպատակին ուղղված խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ**

մշակվել է և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ (2025) Կազմվել է Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2024 թվականի տարեկան կատարողականը (2025)	ընթացակարգերը:		**Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրած տեղեկատվության՝ ՆԳՆ անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2025 թվականի տարեկան միջոցառումների ծրագիրը ՆԳ նախարարի 26.12.2024թ. թիվ 8648-Ա հրամանով հաստատվել են: «Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» նոր օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ պետական կառավարման մարմիններից ստացված կարծիքների ամփոփումից հետո ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Նախագիծը ներկայումս գտնվում է Վարչապետի աշխատակազմից ստացված կարծիքների ամփոփման փուլում:

Նույն աղբյուրի համաձայն՝ կազմվել է նաև ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2024 թվականի տարեկան կատարողականը:

ՄԽ-ն, հաշվի առնելով, որ սույն գործողության շրջանակում նախատեսված թիրախային և արդյունքային ցուցիչը ապահովվել է, *քանակական տեսանկյունից* գործողությունը գնահատում է որպես կատարված:

Անդրադառնալով գործողության *որակական մակարդակին*, ՄԽ-ի կողմից ուսումնասիրության է ենթարկվել «Ոստիկանության կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագիծը, որը ներկայում գտնվում է Վարչապետի աշխատակազմում:

Ըստ այդմ՝ ներկայացված նախագիծը ընդհանուր առմամբ համապատասխանում է կարգապահական կառուցակարգերի հիմնական սկզբունքներին, սակայն առկա են կարգավորումներ և բացթողումներ, որոնք վիճահարույց են:

Բարեվարքության և էթիկայի համակարգի մասին

Նախագիծը ներկայացնում է բարեվարքության համակարգ, որը հիմնված է Էթիկայի հանձնաժողովի վրա: Սա դրական մոտեցում է, քանի որ ստեղծում է ինստիտուցիոնալ մեխանիզմ էթիկայի կանոնների ապահովման համար: Այնուամենայնիվ, այս համակարգն ունի որոշակի բաղթողումներ և սահմանափակումներ:

1. *Էթիկայի հանձնաժողովի կազմավորման և անկախության սահմանափակումներ*: Հանձնաժողովի անդամները նշանակվում են լիազոր մարմնի ղեկավարի կողմից, և բոլորը պետական ծառայողներ են: Չկա արտաքին փորձագետների կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցություն, ինչը կարող էր ապահովել հանրային վերահսկողություն, բալանսավորված կազմ (այդ թվում՝ հարկավոր է ապահովել ՔՀԿ-ների ներգրավվածության բալանսավորված թվակազմ) և անկախության երաշխիքներ: Ընդ որում, այս պրակտիկան կայուն կերպով զարգանում է ՀՀ-ում և համանման մոտեցումներ ներդրված են այլ մարմինների էթիկայի հանձնաժողովներում, ինչպես օրինակ՝ Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դեպքում է:

Նախագծով բացակայում է նաև *Էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգի* ընդունման կարևոր նորմը, որով մանրամասն պետք է կարգավորել հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը:

Նախագծից պարզ չէ նաև, թե ինչքան ժամկետով է գործելու հանձնաժողովը, որոնք են հանձնաժողովի անդամների լիազորությունների դադարեցման հիմքերն ու կարգը, հանձնաժողովի անդամներին ինչպիսի անձնական և մասնագիտական պահանջներ են ներկայացվելու: Օրինակ՝ եթե անդամը որոշում է կայացնում բարեվարքության սկզբունքների խախտման դեպքերով, արդյո՞ք վերջինիս բարեվարքությունը ստուգված է լինելու, թե՝ ոչ: Եթե անգամ այս կարգավորումները նպատակահարմար չէ նախատեսել օրենքով, ապա օրենքով պետք է նախատեսել Էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգի ընդունումը, և այս իրավական ակտով նախատեսել մանրամասները:

2. *Թափանցիկության սահմանափակումներ*: Հանձնաժողովի գործունեության թափանցիկության վերաբերյալ դրույթները բավարար չեն: Չնայած որ որոշումները հրապարակվում են լիազոր մարմնի կայքում, սակայն չկան դրույթներ նիստերի հրապարակայնության կամ տարեկան հաշվետվությունների հրապարակման վերաբերյալ, որում նաև կներառվեն նաև ընդլայնված վիճակագրական տվյալներ:

Այսպիսով, ներկայացված «Ոստիկանության կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի՝ բարեվարքության և էթիկայի կարգավորումների վերլուծությունը բացահայտում է, որ փաստաթուղթը, չնայած կարգապահական կառուցակարգերի հիմնական սկզբունքներին համապատասխանելուն, ունի բացթողումներ և խնդրահարույց կարգավորումներ: Առանցքային խնդիրները վերաբերում են Էթիկայի հանձնաժողովի անկախության երաշխիքների բացակայությանը և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների բացակայությանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով՝ ռազմավարական խնդիրը (արդյունքը) գնահատվում է որպես **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում իրականացված միջոցառումները ամբողջապես չեն նպաստել ռազմավարական նպատակի նվաճմանը:

Գործողություն 5.4. Ոստիկանության ծառայությունից ազատված անձանց համար հետաշխատանքային սահմանափակումների նախատեսում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	Մշտադիտարկման արդյունք
Իրականացվել է ոստիկանության ծառայությունից ազատ արձակված անձանց մասով հետաշխատանքային ժամանակահատվածում թափանցիկության ապահովման և շահերի բախման ռիսկերի մեղմման օրենսդրական մեխանիզմների վերաբերյալ	Ոստիկանության ծառայությունից ազատ արձակված անձանց մասով հետաշխատանքային ժամանակահատվածում թափանցիկության ապահովման և շահերի բախման ռիսկերի մեղմման մեխանիզմների ուսումնասիրությունը կատարվել է միջազգային	ԿԿՀ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

ուսումնասիրություն, որի արդյունքներով կազմվել է զեկույց	ստանդարտների (այդ թվում՝ GRECO-ի) և առնվազն 5 Եվրոպայի խորհրդի անդամ պետության լավագույն փորձի վերլուծության հիման վրա, որոնք ներառվել են զեկույցում: Զեկույցով ներկայացվել են ՀՀ օրենսդրության բարելավման առաջարկներ:		

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՆԳՆ մասնագիտացված ստորաբաժանման կողմից իրականացվել են նոր նշանակվող ծառայողների գաղտնի տեղեկություններին առնչվելու համապատասխան ձևի թույլտվությունների ձևակերպման, ինչպես նաև ազատված ծառայողների վերաբերյալ տեղեկությունների մշակման և լիազոր մարմնին տեղեկատվության տրամադրման աշխատանքները: Միաժամանակ, ոլորտի առնչությամբ ուսումնասիրություններ են իրականացվել ՄԱԶԾ կողմից իրականացվող «ՆԳՆ և ոստիկանության մարդկային ռեսուրսների կառավարման բարեփոխման» ծրագրի շրջանակներում ներգրավված փորձագետների կողմից: Ներկայացվել է նախնական զեկույց:

Այսպիսով, զեկույցը դեռևս մշակված է նախագծային տարբերակով: Նաև ՄԽ-ին հայտնի չէ, թե արդյոք իրականացվել է Եվրոպայի խորհրդի առնվազն հինգ անդամ պետության համապատասխան փորձի համադրական վերլուծություն, արդյոք այդ վերլուծության արդյունքներն արտացոլվել են զեկույցի նախնական տարբերակում, ինչպես նաև՝ ներառվել են արդյոք օրենսդրական բարելավմանն ուղղված առաջարկություններ: Բացի այդ, բացակայում է տեղեկատվություն այդ առաջարկությունների համապատասխանության վերաբերյալ ՀՀ-ում գործող իրավական և ինստիտուցիոնալ շրջանակին, ինչը էական է դրանց իրագործելիությունն ու կիրառելիությունը գնահատելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՄԽ-ն գնահատում է, որ գործողության իրականացումը այս փուլում համարվում է մասնակի կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	10	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	2	20%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	8	80%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 3-ը համապատասխանում էին սահմանված հատկանիշներին, որոնց գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	3	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	1	33.33%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	2	66.67%

Ուղղություն 3. Կրթական միջավայրի բարելավում, ոստիկանության կադրային պատրաստում, մասնագիտական զարգացում

Խնդիր՝ *Ոստիկանական կրթական համակարգի բարելավման անհրաժեշտությունը*

Թիրախ՝ *Արդի մարտահրավերներին դիմակայող, պրոֆեսիոնալ և հարգանքի արժանի ոստիկանական Համակարգ*

Գործողություն 1. ՆԳՆ-ի մեկ միասնական կրթահամալիրի ձևավորում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Կրթահամալիրի նոր կառուցվածքը հաստատող ենթաօրենսդրական ակտն ընդունվել է: Իրականացվել է անձնակազմի համալրում: Իրականացվել է Կրթահամալիրի անձնակազմի վարձատրության և սոցիալական երաշխիքների համադրված իրավիճակային վերլուծություն:	Ապահովվել է Կրթահամալիրի քաղաքացիական ղեկավարումը և փոփոխվել է կառույցի ղեկավար և վարչական անձնակազմի ընտրության կարգը՝ սեռերի համակազմը պահելու երաշխիքների ստեղծմամբ: Հաստատվել է Կրթահամալիրի նոր կառուցվածքը: Մեկ միասնական կրթահամալիրը գործում է: Անձնակազմի առնվազն 70%-ը համալրված է: Կրթահամալիրի անձնակազմի վարձատրության և սոցիալական երաշխիքների համադրված իրավիճակային վերլուծությունը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ և ներառում է վարձատրության և սոցիալական երաշխիքների լավարկմանն ուղղված առաջարկներ ու դրանց հիմնավորումներ:	ԿԳՄՄՆ ՖՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրած տեղեկատվության՝ կրթական միջավայրի բարելավման համատեքստում ավարտվել է ՆԳՆ ենթակայությամբ մեկ միասնական ուսումնական հաստատության ձևավորմանն ուղղված աշխատանքները, որը կենտրոնացած է եղել ոստիկանության հենայունային ծառայությունների, Փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի կադրային պահանջարկը բավարարելուն, շարունակական կրթության տրամաբանությամբ՝ սկսած առաջին անգամ ծառայության անցնելուց, մինչև ծառայողների վերապատրաստում և կարիերային առաջընթացի ապահովում: Նշված ծառայություններում աշխատանքի անցնելու համար պարտադիր մուտքային պահանջ է սահմանվել կրթահամալիրում բազային կրթություն ստանալը: Համապատասխան օրենսդրական փաթեթն ամբողջությամբ ընդունվել է ԱԺ-ի կողմից, իսկ նոր կրթահամալիրի կանոնադրությունը հաստատվել է 12.12.2024թ 1989-Ն Կառավարության որոշմամբ:

Նույն աղբյուրի համաձայն՝ ՆԳ նախարարի հրամանով սահմանվել են ՆԳՆ ուսումնական հաստատության ոստիկանական և փրկարարական ծառայության պաշտոններ զբաղեցնող, ծառայող չհանդիսացող աշխատողների հետ հարցազրույցների անցկացման կարգերը, որոնցով սահմանվում են ՆԳՆ կրթահամալիրի փրկարարական և ոստիկանական պաշտոններ զբաղեցնող անձանց՝ Կրթահամալիրի նոր հաստիքացուցակով նախատեսված պաշտոններում նշանակվելու նպատակով հարցազրույցի անցկացման հետ կապված հարաբերությունները:

2025 թվականի փետրվարի 3-ից մեկնարկել է ՆԳՆ նորաստեղծ կրթահամալիրի անձնակազմի համալրման գործընթացի հարցազրույցի փուլը: Հարցազրույցն անցկացնող հանձնաժողովների կազմում ընդգրկված են ՆԳՆ, ԿԳՄՄՆ, միջազգային և ՀԿ ներկայացուցիչներ ու հոգեբաններ: Հարցազրույցը հաջողությամբ հաղթահարածները աշխատանքի են նշանակվել նորաստեղծ ուսումնական հաստատությունում: 310 հաստիք, որից այս պահի դրությամբ թափուր է 90-ը, այսինքն՝ համալրվածությունը կազմում է 70%:

Մշտադիտարկման ընթացքում պարզ դարձավ, որ կրթահամալիրի անձնակազմի վարձատրության և սոցիալական երաշխիքների համադրված իրավիճակային վերլուծությունն իրականացվել է:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 5. Ոստիկանության ղեկավար կազմի (այդ թվում՝ Ոստիկանապետի և Ոստիկանապետի տեղակալների) և ծառայողների վերապատրաստումների իրականացում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ոստիկանության բոլոր ծառայողների համար տարեկան պարտադիր վերապատրաստման պահանջ սահմանող՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը մշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը հավանության է արժանացել Կառավարության կողմից: Մշակվել և հաստատվել է Ոստիկանության ծառայողների տարեկան վերապատրաստումների պլանի մշակման մեթոդաբանությունը:	Առաջնորդության և կառավարման վերապատրաստման ծրագիրը հաստատվել է: Ոստիկանության բոլոր ծառայողների համար տարեկան պարտադիր վերապատրաստման պահանջ սահմանող՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:	ԿԳՄՄՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՆԳՆ կրթահամալիրի կողմից մշակվել է Ոստիկանության ծառայողների տարեկան վերապատրաստումների պլանի մշակման մեթոդաբանությունը: Միաժամանակ, «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում

փոփոխություններ կատարելու մասին» 2024թ. ՀՕ-400-Ն օրենքով փոփոխություններ են իրականացվել Օրենքի 16–րդ հոդվածում (ոստիկանության ծառայողի վերապատրաստումը), համաձայն որի հանվել են պարտադիր վերապատրաստման անցկացման համար նախկինում նախատեսված բոլոր ժամկետային սահմանափակումները, ընդ որում՝ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով պարեկային ծառայության և քրեական ոստիկանության ծառայողների համար նախատեսված դրույթն ուժի մեջ է մտել 2025թ. հունվարի 1-ից, իսկ ոստիկանության մյուս ծառայողների մասով այն ուժի մեջ կմտնի 2026թ. հունվարի 1-ից:

ՖԽՔ-ի ընթացքում ՔՀԿ-ների և ոլորտային փորձագետների կողմից բարձրացվել են որոշակի հարցեր, որոնք կապված են վերապատրաստողների որակավորման հետ՝ նշելով, որ անհրաժեշտ է սահմանել չափորոշիչներ դասավանդող անձնակազմի համար՝ ապահովելու կրթության բարձր մակարդակ և արդի պահանջներին համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող կադրերի պատրաստում: Բացի տեխնիկական և կառուցվածքային բաղադրիչներից, առանձնահատուկ կարևորություն է տրվել վերապատրաստման բովանդակությանը: Շեշտադրվել է հուզական ինտելեկտի, էմոցիաների կառավարման, սթրեսակայունության և հաղորդակցման հմտությունների զարգացումը, որոնք հատկապես կարևոր են ճգնաժամային իրավիճակներում կայուն, բարեվարք և պրոֆեսիոնալ վարքագիծ ձևավորելու համար:

Այսպիսով, սույն գործողության համար նախատեսված է երկու արդյունքային ցուցանիշ. 1) առաջնորդության և կառավարման հաստատված վերապատրաստման ծրագիրը, և 2) ոստիկանության բոլոր ծառայողների համար տարեկան պարտադիր վերապատրաստման պահանջ սահմանող՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների մասով Կառավարության հավանությունը: Հիշյալ ցուցանիշներից ամբողջությամբ կատարվել է երկրորդը. նախագիծը հավանության է արժանացել Կառավարության կողմից և ընդունվել է ԱԺ-ի կողմից, իսկ վերապատրաստման ծրագիրը դեռևս հաստատված չէ, թեև մշակվել է այդ ծրագրի մշակման մեթոդաբանությունը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

«ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	2	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1	50%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ	1	50%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ուղղություն 4. Պարեկային ծառայության զարգացում՝ որպես արտաքին ծառայության նոր և ժամանակակից մոդել

Խնդիր՝ *Արտաքին ծառայության ձեռքբերումների ամրապնդում*

Թիրախ՝ *Հարգանքի արժանի արտաքին ծառայության կատարելագործում, ինստիտուցիոնալացում*

Գործողություն 1. Պարեկային ծառայության գործունեության համալիր գնահատում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Իրականացվել է պարեկային ծառայության գործունեության համալիր գնահատում, որի արդյունքներով կազմված զեկույցում ներկայացվել են հիմնական խնդիրները ու դրանց լուծման եղանակները: Զեկույցի հիման վրա մշակվել և հաստատվել է Պարեկային ծառայության զարգացման 2-րդ փուլի գործողությունների ծրագիրը:	Պարեկային ծառայության ամբողջական գործարկումից հետո գործունեության համալիր գնահատման հիման վրա մշակվել է գնահատման զեկույց: Պարեկային ծառայության զարգացման 2-րդ փուլի համար անհրաժեշտ գործողությունների ծրագիրը հաստատվել է: Գործողությունների ծրագիրը ներառում է զեկույցով ներկայացված առաջարկվող լուծումների առնվազն 50%-ը: Գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ անցկացվել է առնվազն 1 հանրային քննարկում:		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՆԳՆ պատվիրակմամբ ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի «Միջազգային քրեական հետաքննությունների վերապատրաստման աջակցության ծրագրի» (ICITAP) հայաստանյան առաքելության կողմից իրականացվել է Պարեկային ծառայության համապարփակ և մանրակրկիտ գնահատում՝ ընդգրկելով բոլոր ուղղությունները՝ օրենսդրություն, կառուցվածք, ղեկավարություն, մարդկային ռեսուրսներ, նյութատեխնիկական ապահովում, գործառնություններ/ծառայության կազմակերպում, վերահսկողություն և այլն, որը հիմք կծառայի առաջիկա 3-4 տարիների ընթացքում Պարեկային ծառայության զարգացման երկրորդ փուլի մշակման համար՝ որպես ծառայության կայացման և բարելավման միջնաժամկետ ռազմավարություն:

Նույն աղբյուրի համաձայն՝ պարեկային ծառայության զարգացման 2-րդ փուլի գործողությունների ծրագիրը մշակվել է:

ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ պարեկային ծառայության զարգացման երկրորդ փուլի գործողությունների ծրագիրը մշակվել է և ներկայացվել է միջազգային գործընկերներին՝ կարծիքների ստացման և ամփոփման նպատակով:

Այսպիսով, սույն գործողության շրջանակում նախատեսված է երեք արդյունքային ցուցիչ. 1) պարեկային ծառայության գործունեության գնահատման զեկույց, 2) պարեկային ծառայության զարգացման 2-րդ փուլի հաստատված գործողությունների ծրագիր, ներառելով գնահատման զեկույցով ներկայացված առաջարկվող լուծումների առնվազն 50%-ը, 3) Գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ առնվազն 1 հանրային քննարկում: Հիշյալ երեք ցուցիչներից իրականացվել է մեկը, այն է՝ մշակվել է պարեկային ծառայության զարգացման 2-րդ փուլի գործողությունների ծրագիրը: Թեպետ պետք է նշել, որ սա ևս խնդրահարույց է այն առումով, որ ՄԽ-ին հայտնի չէ, թե արդյո՞ք նախքան ծրագրի մշակումը կատարվել է գնահատում, և գնահատման զեկույցում ներառված առաջարկների 50%-ը արդյո՞ք ներառվել է գործողությունների ծրագրում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 2. Պարեկային ծառայության անձնակազմի շարունակական կրթության (in service) ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Հաստատվել է պարեկային ծառայության անձնակազմի տարեկան վերապատրաստման պլանը: Վերանայվել են համապատասխան կրթական մոդուլները:	Պարեկային ծառայության անձնակազմի տարեկան վերապատրաստման պլանը հաստատվել է: Կրթական մոդուլները վերանայվել են:		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ մշակվել է վերապատրաստման ուսումնական պլանը, որը հաստատվել է ՆԳ նախարարի կողմից: Բացի այդ, հաստատվել է Պարեկային ծառայողների վերապատրաստման կազմակերպման մասին՝ ՆԳ նախարարի հրամանը: Նշված հրամանով հաստատվել է Պարեկային ծառայության բոլոր մարզերի, Երևան քաղաքի գնդի, ինչպես նաև պարեկային ծառայության վարչակազմի ծառայողների վերապատրաստման պարտադիր և կամընտրային դասընթացների ժամանակացույցը, որի հիման վրա 2025 թվականի հունիսի 9-ին մեկնարկել են պարտադիր դասընթացները: Դրանք նախատեսվում է ավարտել սեպտեմբերի 27-ին: Կամընտրային դասընթացները նախատեսվում է իրականացնել նույն թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ը՝ նախապես հայտագրված Պարեկային ծառայողների կողմից ընտրված թեմաներով, համապատասպան օրերին և ժամերին:

ՖԽՔ-ի ընթացքում ՔՀԿ ներկայացուցիչների և ոլորտային փորձագետների կողմից առանձնացվել է «Անձնակազմի զարգացման» ուղղությամբ առկա մի կարևոր խնդիր, որն առնչվում է ոչ միայն իրավական և կառավարչական կարգավորումների բացերին, այլև ծառայողների մասնագիտական պատրաստվածության մակարդակին: Մասնավորապես, ընդգծվել է, որ որոշակի իրավիճակներում, օրինակ՝ պարեկային ծառայության շրջանակում, ծառայողը կարող է գործ ունենալ բարձր իրավաբանական հմտություններ ունեցող անձի կամ փաստաբանի հետ: Նման հանգամանքներում, եթե ծառայողը չունի համարժեք մասնագիտական գիտելիքներ, հաղորդակցման հմտություններ կամ բավարար հոգեբանական պատրաստվածություն, նա կարող է հեշտությամբ ընկնել սադրանքի մեջ կամ դրսևորել ոչ համարժեք վարքագիծ: Նման դեպքերը վնասում են ոչ միայն տվյալ ծառայողի մասնագիտական հեղինակությունը, այլ նաև կարող են էականորեն ազդել ամբողջ համակարգի նկատմամբ հանրային վստահության մակարդակի վրա: Այս համատեքստում կարևորվում է ծառայողների վերապատրաստման և շարունակական մասնագիտական զարգացման համակարգի առկայությունը՝ ներառելով թե՛ ոլորտային գիտելիքների ամրապնդումը, թե՛ հաղորդակցման, էթիկական և սթրեսակայունության հմտությունների զարգացումը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Գործողություն 3. Ջրային պարեկային ծառայության ստանդարտ գործառնական ընթացակարգի (SOP) մշակում, անձնակազմի կարողությունների զարգացում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ընդլայնված վերապատրաստում է անցել Ջրային պարեկային ծառայության անձնակազմի 50%-ը:	Մշակվել է Ջրային պարեկային ծառայության ստանդարտ գործառնական ընթացակարգը:	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի «Միջազգային քրեական հետաքննությունների վերապատրաստման աջակցության ծրագրի» (ICITAP) հայաստանյան առաքելության աջակցությամբ՝ միջազգային փորձագետի կողմից, Սևանա լճում իրականացվել է ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության ջրային պարեկային ծառայողների վերապատրաստում: Վերապատրաստվել են 32 ծառայողներ (ծառայողների 50%): Վերապատրաստման թիրախում է եղել ռիսկային պայմաններում նավավարման հմտությունների, փրկարարական օգնության, լողամիջոցների շահագործման կանոնների պահպանման հմտությունների զարգացումը:

ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի ICITAP-ի հայաստանյան առաքելության հետ համատեղ մշակվել է ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության ջրային պարեկային ծառայության ստանդարտ գործառնական ընթացակարգը:

Մշտադիտարկման արդյունքների համաձայն արձանագրվել է, որ գործողության թիրախային ցուցիչը նվաճված է, արդյունքային ցուցիչով նախատեսված ջրային պարեկային ծառայության ստանդարտ գործառնական ընթացակարգը մշակվել է:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Գործողություն 4. Պարեկային ծառայության մոնիթորինգի ստորաբաժանման ստանդարտ գործառնական ընթացակարգի (SOP) մշակում, անձնակազմի կարողությունների հզորացում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Հաստատվել է մոնիթորինգի ստորաբաժանման ստանդարտ գործառնական ընթացակարգը:	Մոնիթորինգի ստորաբաժանման ստանդարտ գործառնական ընթացակարգը հաստատվել է և ուրվագծում է ստորաբաժանման պարտականությունների, իրավունքների, պատասխանատվության շրջանակը, հստակ սահմանում առաքելությունները, նախատեսում բացահայտած խնդիրներն օպերատիվ հրամանատարական շղթային զեկուցելու ուղիները:		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրած տեղեկատվության՝ ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի ICITAP-ի հայաստանյան առաքելության հետ համատեղ մշակվել է ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության մոնիթորինգի ստորաբաժանման ստանդարտ

գործառնական ընթացակարգը: Մշակվել է նաև մոնիթորինգի ստորաբաժանման վերափոխման նոր հայեցակարգը:

Հաշվի առնելով, որ մոնիթորինգի ստորաբաժանման ստանդարտ գործառնական ընթացակարգը դեռևս չի հաստատվել, ինչպես նաև առկա չէ հստակություն այն հարցում, թե որքանով այն կհամապատասխանի արդյունքային ցուցիչով սահմանված չափորոշիչներին, արձանագրվում է, որ նախատեսված արդյունքը ամբողջությամբ ապահովված չէ: Այս հանգամանքների հիման վրա ՄԽ-ն գործողությունը գնահատում է որպես մասնակի կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 5. Պարեկային ծառայություն մուտքի հնգամսյա կուրսի կատարելագործում, այդ թվում՝ բովանդակության և տևողության համադրված վերանայմամբ

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Պարեկային ծառայության գործունեության համալիր գնահատման զեկույցի հիման վրա՝ մշակվել է պարեկային ծառայություն մուտքի կուրսի կատարելագործմանն ուղղված զեկույց:	Զեկույցը մշակվել է և հրապարակվել ՆԳՆ պաշտոնական կայքում: Զեկույցում կատարված վերլուծությունը հիմնվել է պարեկային ծառայողների, դասախոսների, ոլորտային ՀԿ-ների հետ հարցազրույցների, ինչպես նաև կուրսի նյութերի և առնվազն 3 պետության լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա, որոնք ներկայացվել են զեկույցում:	ԿԳՄՄՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ պարեկային ծառայություն մուտքի կուրսի կատարելագործմանն ուղղված զեկույցը մշակվել է, որը հրապարակվել է ՆԳՆ պաշտոնական կայքում[5]: Զեկույցում ներառվել են ԱՄՆ-ի, Էստոնիայի և Վրաստանի փորձերի ուսումնասիրության արդյունքները:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Գործողություն 6. Պարեկային ծառայության ընդունելության կազմակերպում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Հայտարարվել է 1 ընդունելություն՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով:	Ըստ կադրային կարիքների՝ հայտարարվել են ընդունելություններ, առնվազն 1-ը՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով:	ԿԳՄՄՆ ՏԻՄ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

[5] https://mia.gov.am/wp-content/uploads/2025/06/fbd086639b181a562e1caa5a289acedb33fc5db429072f2cc2a64e963657da25.pdf

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ պարեկային ծառայության թափուր հաստիքների համալրման նպատակով հայտարարվել է ընդունելություն՝ 2024 թվականի դեկտեմբերի 16-ից հունվարի 17-ը: Միասնական ընդունելություն-մրցույթի համար հատկացվել է 239 տեղ, որից 190-ը իգական սեռի, իսկ 49 արական սեռի դիմորդներին: Ներկայումս ընթանում է դիմորդների ընդունելության վերջին՝ հարցազրույցների փուլը: Առկա տեղեկատվության համաձայն ընդունելությունն ավարտվել է, ընդունելության քննությունները հաղթահարել են 226 դիմորդ, որոնցից 173-ը քաղաքացիական (17 իգական), իսկ 53-ը՝ ծառայող (4 իգական):

ՖԽՔ-ի ընթացքում ՔՀԿ-ներկայացուցիչների և ոլորտային փորձագետների դիտարկումների համաձայն՝ «Ընդունելության և մենթորության» ուղղությամբ պարեկային ծառայությունում առկա են մի շարք մտահոգիչ խնդիրներ, որոնք կարող են բացասաբար ազդել ինչպես ծառայության ներքին որակի, այնպես էլ հանրային ընկալման վրա: Մասնավորապես, արձանագրվել է, որ ծառայության մեջ ընդգրկվել են անձինք, որոնց նախորդ աշխատանքային փորձը որոշ դեպքերում բացասաբար է անդրադառնում նրանց ծառայողական վարքագծի վրա: Դրանից բխող վարքագծային դրսևորումները, անկախ դեպքի առանձին բնույթից, հանրային ընկալման մակարդակում հանգեցնում են բացասական կարծիքների ձևավորմանը և նվազեցնում են ոչ միայն տվյալ ծառայողի, այլև ամբողջ պարեկային ծառայության հեղինակությունն ու վստահության մակարդակը: Նման իրավիճակներում կարևոր է ընդունելության չափորոշիչների խստացումը՝ ուղղված ոչ միայն ֆիզիկական կամ տեխնիկական կարողություններին, այլև անձի բարոյահոգեբանական ու վարքային հատկանիշների գնահատմանը:

Անդրադառնալով ցուցանիշներին, հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ միասնական ընդունելության մրցույթով իգական սեռի ներկայացուցիչների համար հայտարարված է եղել 190 տեղ, փաստացի ընդունելության փուլը հաջողությամբ հաղթահարել են միայն 21 կին, ինչը էապես ցածր ցուցանիշ է ընդհանուր առաջարկված հնարավորությունների համեմատ: Նման արդյունքը չի կարող դիտարկվել որպես կանանց ներգրավվածության խթանման արդյունավետ ցուցիչ, և այդ հիմքով առկա է էական վերապահում գործողության կատարման և դրա ազդեցության նկատմամբ:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ արդյունքային ցուցիչով նախատեսված է բացառապես ընդունելության գործընթացի հայտարարումը՝ առանց արդյունքների որակական չափանիշների: Այս հանգամանքը հիմք է տալիս գնահատելու գործողությունը որպես կատարված՝ զուտ ցուցանիշի քանակական ապահովման շրջանակում, չնայած որ դրա բովանդակային ազդեցությունը կանանց ներգրավվածության վրա մնում է սահմանափակ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 7. Պարեկային ծառայություն նոր ընդունված ծառայողի մենթորության ծրագրի ներդնում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Մշակվել և ընդունվել է մենթորության ծրագրի	Հաստատվել է մենթորության ծրագրի հիմքերը սահմանող՝ ՆԳ		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

անցկացման հիմքերը սահմանող՝ ՆԳ նախարարի հրամանը: Մենթորության ծրագիրը գործարկվել է:	նախարարի հրամանը: Մենթորության ծրագրի իրականացումը դարձել է պարտադիր բաղադրիչ և գործարկվել է: Սահմանվել է մենթորային ծրագրի փուլային գործարկում:		

Համաձայն ՆԳՆ-ի տրամադրած տեղեկատվության՝ 2024թ. հոկտեմբերի 1-ին ընդունվել է «ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության ծառայողների մասնագիտական պարապմունքների պիլոտային ծրագիրը հաստատելու մասին» ՆԳ նախարարի թիվ 66-Լ հրամանը:

Մշտադիտարկման արդյունքների հիման վրա արձանագրվել է, որ մենթորության ծրագիրը գործարկվել է: Միաժամանակ, ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ մենթորության ծրագիրը իրականացվում է ամբողջ հանրապետությունում: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ ծրագիրը մշակվել է միջազգային գործընկերների հետ համատեղ և միտված է նոր ընդունվող ծառայողներին առավել հեշտ և արագ ինտեգրելու ծառայության համակարգում:

Քանի որ գործողությունը փաստացի իրականացվել է (չնայած այն հանգամանքին որ դրա կատարմանն ուղղված աշխատանքները մեկնարկել են նախքան ռազմավարության ընդունումը) և ուղղված է եղել իր նպատակային արդյունքի ապահովմանը, ինչպես նաև համընկնում է սահմանված արդյունքային ցուցանիշի պահանջներին, ՄԽ-ն այն գնահատում է որպես կատարված՝ ելնելով դրա իրագործման փաստից:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ:**

«ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈԴԵԼ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	7	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	5	71.43%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	2	28.57%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ուղղություն 6. Քրեական ոստիկանության զարգացում, օպերատիվ աշխատանքի արդյունավետություն

Խնդիր՝ *Հանցավորության կանխարգելման ռազմավարական մոտեցման բացակայություն, օպերատիվ-հետախուզական գործունեության պոտենցիալի ոչ բավարար օգտագործում*

Թիրախ՝ *Հանցագործությունների կանխման ու քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացում քրեական ոստիկանության առավել արդյունավետ ներգրավվածության միջոցով*

Գործողություն 1. Երևանում և մարզերում նոր կառուցվածքով և ֆունկցիոնալ հստակեցմամբ գործարկված Քրեական ոստիկանության ինստիտուցիոնալ կայացում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Բաց մրցույթով քրեական ոստիկանությունում ծառայության անցնելու համար դիմած քաղաքացիական անձինք և ոստիկանները պատրաստվել են կրթական նոր մոդուլներով և նշանակվել համապատասխան պաշտոններում: Պատրաստության խողովակով անցել է շուրջ 600 անձ: Քրեական ոստիկանության նոր կառուցվածքը հաստատվել է:	Քրեական ոստիկանության նոր կառուցվածքը և տարածքային ստորաբաժանումների տիպային մոդելները հաստատվել են: Քրեական ոստիկանությունում համապատասխան պաշտոններին նշանակվել են բացառապես մրցույթի արդյունքներով ընտրված և կրթությունը հաջողությամբ ավարտած դիմորդները:	ԿԳՄՄՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2024 թվականի նոյեմբերի 1-ին ձևավորվել է Քրեական ոստիկանությունը, որի կառուցվածքը հաստատվել է: Քրեական ոստիկանության շարքերը համալրելու նպատակով տարեսկզբին հայտարարվել է մրցույթ, որին դիմել էին 1125 անձ, որոնցից 940-ը ոստիկանության ծառայողներ (55 իգական), 185-ը՝ քաղաքացիական անձիք (31 իգական): 5-ամսյա վերապատրաստումը հաջողությամբ հաղթահարել են 562 դիմորդ, որոնցից 33-ը եղել են քաղաքացիական անձիք:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ պաշտոններին նշանակումներ կատարվել են բացառապես քննական արդյունքների և կրթական ամբողջ գործընթացում ցուցաբերած առաջադիմության հիմքով:

Հաշվի առնելով, որ արդյունքային ցուցիչը ապահովված է իրականացված գործողության արդյունքում, ՄԽ-ն տվյալ գործողությունը գնահատում է որպես կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 2. Հանցավորության կանխարգելման գործողությունների համալիր ծրագրի մշակում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Գործողությունների	Դիտարկվող	ԱՆ	Գործողությունը

ծրագիրը մշակվել է:	ժամանակահատվածի համար արդյունքայի ցուցիչ նախատեսված չէ:	ԿԳՄՄՆ ԱՍՀՆ Առողջապահության նախարարություն ԱԱԾ ՊԵԿ ԳԴ ՔԿ Հակակոռուպցիոն կոմիտե ՄԻՊ	**ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրած տեղեկատվության՝ հանցավորության կանխարգելման գործողությունների համալիր ծրագիր մշակելու նպատակով՝ ՆԳ նախարարի հրամանով ձևավորվել է աշխատանքային խումբ: Ռազմավարական ծրագրի հայեցակարգը մշակված է, որի հիման վրա կձևավորվի ռազմավարական ծրագիրը և գործողությունների պլանը:

ՄԽ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ տվյալ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և գտնվում են ընթացքի մեջ:

Հաշվի առնելով, որ գործողությունը դեռևս ամբողջությամբ չի ավարտվել, սակայն առկա է դրա իրագործման շարունակական գործընթացը, այն գնահատվում է որպես մասնակի կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 3. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացում, օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացակարգի համապատասխանեցում միջազգային չափանիշներին՝ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
«Օպերատիվ- հետախուզական գործունեության մասին» նոր օրենքի և դրանից բխող հարակից օրենքների նախագծերի փաթեթը մշակվել է և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:	Դիտարկվող ժամանակահատվածի համար արդյունքայի ցուցիչ նախատեսված չէ:	ԱՆ ԱԱԾ ՊՆ ՀՀ արտաքին հետախուզական ծառայություն ՊԵԿ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

		ԳԴ ՔԿ Հակակոռուպցիոն կոմիտե	

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրած տեղեկատվության՝ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացման և օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացակարգը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով՝ ՀՀ ՆԳՆ կողմից նախապատրաստվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 875-ՆԳ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Միաժամանակ, փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ ոստիկանության պետի 2021 թվականի փետրվարի 24-ի թիվ 4-ԱՀԳ հրամանում, տրվել է «ՀՀ տեղական հրամանը, ինչպես նաև մշակվել է «ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության և համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ստորաբաժանումների ծառայողների կողմից օպերատիվ հաշվառման գործերի ցանկը, գործերը վարելու, դրանցով անցնող անձանց հաշվառման կարգը և օպերատիվ հաշվառման գործերի վարման ընթացքում կազմվող ձևաթղթերը հաստատելու մասին» ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի հրամանը: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» նոր օրենքի և դրանից բխող հարակից օրենքների նախագծերի փաթեթը գտնվում է մշակման փուլում, որի ընդունումից հետո կնախաձեռնվեն փոփոխություններ և լրացումներ մի շարք ներքին իրավական ակտերում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 4. Հանցագործությունների միասնական, հանրային հասանելի տվյալների բազայի ստեղծում, որը կպարունակի դասակարգված տվյալներ, այդ թվում՝ հանցանքի մասին հաղորդումների և քրեական վարույթ չնախաձեռնելու դեպքերի վերաբերյալ

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Կատարվել է ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի համապարփակ գնահատում, քրեական արդարադատության ոլորտում ներդրված և ներդրվող էլեկտրոնային համակարգերի՝ վիճակագրական տվյալների վերհանման հնարավորությունների գնահատում և հուսալի վիճակագրության վարման համար միջազգային փորձի ուսումնասիրություն:	Ուսումնասիրությունը կատարվել և հրապարակվել է ՆԳՆ պաշտոնական կայքում և ներառում է ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի համապարփակ գնահատում, քրեական արդարադատության ոլորտում ներդրված և ներդրվող էլեկտրոնային համակարգերի՝ վիճակագրական տվյալների վերհանման հնարավորությունների գնահատում, ինչպես նաև հուսալի վիճակագրության վարման համար Եխ-ի առնվազն 3 պետության լավագույն փորձի ուսումնասիրություն:	ԲՏԱՆ ԱՆ ԳԴ ՔԿ Հակակոռուպցիոն կոմիտե	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի համապարփակ գնահատման գործընթացն իրականացման փուլում է։

ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ ինֆորմացիոն կենտրոնի համապարփակ գնահատման ընթացքում արձանագրվել են խնդիրներ հանցագործությունների վերաբերյալ հաշվառման քարտերի ճիշտ և ժամանակին լրացման մեջ։ Գնահատման գործընթացը իրականացվել է, և առաջիկայում սպասվում է զեկույց, որտեղ ներկայացված կլինեն հայտնաբերված խնդիրները։

Միաժամանակ, տվյալների հասանելիության ապահովման նպատակով՝ 2025 թվականի առաջին կիսամյակում ինֆորմացիոն կենտրոնում «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ մասնագետների հետ միասին մշակվել և ներկայումս փորձարկման փուլում են գտնվում նաև ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում վարվող՝ գրանցված հանցագործությունների և դրանք կատարած անձանց միասնական հաշվառման համակարգին դիտման ռեժիմով առցանց հասանելիություն տրամադրելու ծրագրային բաղադրիչները։

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ։**

«ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	4	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1	25%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ	3	75%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ուղղություն 7. Համայնքային ոստիկանության վերահմաստավորում

Խնդիր՝ *Համայնքային ոստիկանների կողմից ինստիտուտին ոչ վերաբերելի և այլ մարմիններին հատուկ գործառույթների իրականացում*

Թիրախ՝ *Գործառութային իմաստով համայնքային ոստիկանության կայացում*

Գործողություն 2. Համայնքային ոստիկանության աշխատանքի թվայնացում, թափանցիկ գործելաոճի ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Համայնքային ոստիկանության հիմնական գործառույթների հիման վրա իրականացվել է բիզնես պրոցեսների գնահատում, որի հիման վրա մշակվել է թվային համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը: (2024թ) Տեխնիկական առաջադրանքի հիման վրա հայտարարվել է մրցույթ: (2024թ)	Դիտարկվող ժամանակահատվածի համար արդյունքային ցուցիչ նախատեսված չէ:	ԲՏԱՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ** Ռազմավարական նպատակին ուղղված խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՀՀ ՆԳՆ-ի կողմից տրամադրած հաշվետվության՝ համայնքային ոստիկանության հիմնական գործառույթների հիման վրա իրականացվել է բիզնես պրոցեսների գնահատում, որի արդյունքներով մշակվել է թվային համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանք: Այդ հիմքով, 2024թ. օգոստոսի 15-ին, «Հանրային հատվածի արդիականացման չորրորդ ծրագրի» շրջանակում հայտարարվել է մրցույթ՝ «ՀՀ ՆԳՆ Օպերատիվ կառավարման համակարգի նոր մոդուլի ձեռքբերում» անվանմամբ: Մրցույթով նախատեսվում է ՀՀ ՆԳՆ համայնքային և քրեական ոստիկանության գլխավոր վարչությունների համար ձեռք բերել ծրագրային ապահովում, 500 պլանշետ, 500 տեսախցիկ և 500 ռադիոկապի սարք՝ ընդհանուր շուրջ 2 մլն եվրո արժեքով: Հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն, որոնցից մեկի հայտը մերժվել է: Մյուս մասնակցի փաստաթղթերի գնահատման փուլը շարունակվում է, որոշում դեռևս չի ընդունվել:

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ չնայած տվյալ միջոցառման համար միջանկյալ գնահատման արդյունքային ցուցիչ սահմանված չէ, այնուհանդերձ «Գործարկվել է Համայնքային ոստիկանության աշխատանքը կազմակերպող թվային համակարգը» ցուցիչի առկայությունը տրամաբանորեն ենթադրում է, որ այն ներառում է բիզնես գործընթացների գնահատման ամփոփ փաստաթուղթը, տեխնիկական առաջադրանքի մշակումը և մրցույթի անցկացումը հաշվետու ժամանակահատվածում: Նախարարությունը փաստում է գնահատման և առաջադրանքի մշակման մասին, սակայն փաստաթղթեր չեն ներկայացվել: Մրցույթը հայտարարվել է, սակայն ավելի քան 10 ամիս անց արդյունք դեռևս ամփոփված չէ: Գնման գործընթացը ավարտված չէ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՄԽ-ն գործողության ընթացակարգային բաղադրիչը գնահատում է որպես՝ «մասնակի կատարված»:

Որակական ազդեցության գնահատման նպատակով հարցում էր ուղղվել ՆԳՆ-ին՝ պարզելու, թե ի՞նչ մեթոդաբանությամբ է իրականացվել համայնքային ոստիկանության հիմնական գործառույթների վրա հիմնված բիզնես գործընթացների գնահատումը, և արդյոք դրա արդյունքում հստակեցվել են այն գործառույթները, որոնք պետք է թվայնացվեն՝ որպես առաջնահերթություն: Նման տեղեկատվություն չի տրամադրվել, և պարզ չէ, թե գնահատումը որքանով է նպաստել համայնքային ոստիկանության ինստիտուտին չվերաբերող գործառույթներից հրաժարվելուն և գործառութային իմաստով ինստիտուտի կայացմանը՝ ինչը սահմանված թիրախն է:

Միևնույն ժամանակ, բացակայում է նաև տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գնահատվել է համակարգի հնարավոր ազդեցությունը թափանցիկության բարձրացման, հանրային վերահսկելիության ամրապնդման կամ կոռուպցիոն ռիսկեր նվազեցնելու առումով, ինչն անհրաժեշտ էր՝ որպես ուղեկցող համատեքստ ռազմավարական խնդիրների լուծման համար: Չեն նշվել ոչ ներգրավված շահագրգիռ կողմերը (օր.՝ ՔՀԿ-ներ), ոչ կիրառված միջազգային չափորոշիչներն ու համապատասխանելի չափելի ցուցանիշները: Ընդ որում, առկա տեղեկությունները չեն վկայում, որ տեխնիկական առաջադրանքը ներառել է շահառուների ազդեցության գնահատում կամ թիրախային խմբերի տեսանկյունից կիրառելիության վերլուծություն:

ՖԽՔ-ի ընթացքում հնչած դիտարկումները՝ համայնքային ոստիկանների կողմից լիազորությունների գերազանցման և իրավական կարգավիճակի վերաբերյալ անորոշության մասին, վկայում են համակարգում առկա որակական բնույթի խորքային խնդիրների մասին: Այս դիտարկումները փաստում են, որ համակարգի տեխնիկական առաջադրանքով նախատեսված ներդրմանը նախորդող փուլում՝ գործառույթների գնահատման և սահմանագծման գործընթացը, առայժմ չի ապահովել համայնքային ոստիկանության ինստիտուցիոնալ հստակեցման և կայացման անհրաժեշտ հիմքը:

Թեև համակարգի գործարկումը տվյալ փուլում նախատեսված չէ, սակայն մրցույթի հայտարարման պահից (2024 թ. օգոստոսի 15-ից) անցել է ավելի քան 10 ամիս, և գնման գործընթացը դեռևս ավարտված չէ: Այս հանգամանքը մտահոգիչ է, քանի որ նման ձգձգումները կարող են վտանգել ոչ միայն տեխնիկական լուծումների ներդրման հետագա քայլերի ժամանակային շրջանակները, այլ նաև թուլացնել ռազմավարական նպատակի՝ գործառութային առումով համայնքային ոստիկանության կայացման հասնելու հնարավորությունը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՄԽ-ն գործողության ընթացակարգային բաղադրիչը գնահատում է որպես՝ «ոչ ամբողջական իրականացված»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, այս գործողության շրջանակներում իրականացված միջոցառումները ամբողջապես չեն նպաստել ռազմավարական նպատակի նվաճմանը:

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 7-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025(1-ին կիսամյակ)թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ	1	100%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

Ուղղություն 8. Ոստիկանության զորքերի վերափոխում, Ոստիկանության գվարդիայի ձևավորում

Խնդիր՝ *Ոստիկանության զորքերի կարգավիճակի, զորքերի գործնական ներգրավվածության ու զբաղվածության անհստակություն*

Թիրախ՝ *Քաղաքացիական վերահսկողության տակ գտնվող և մասնագիտացված ոստիկանության գվարդիայի ապահովում*

Գործողություն 1. «Ոստիկանության գվարդիայի մասին» և հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների մասին օրենքների նախագծերի փաթեթից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Մշակվել են Օրենքների նախագծերի փաթեթից բխող ենթաօրենսդրական ակտերը:	«Ոստիկանության գվարդիայի մասին» և հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների մասին օրենքների նախագծերի փաթեթի ընդունումից բխող ենթաօրենսդրական ակտերը մշակվել են: *Եկակետային՝ 0:*	ՊՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՀՀ ՆԳՆ-ի կողմից տրամադրած հաշվետվության՝ «Ոստիկանության գվարդիայի մասին» և հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների մասին օրենքների նախագծերի փաթեթից բխող ենթաօրենսդրական ակտերը մշակվել են և գտնվում են արտաքին շրջանառության փուլում: ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ ոստիկանության գվարդիայի փաթեթի իրականացումը պահանջել է մեծածավալ իրավական աշխատանք, որը ներառել է բազմաթիվ ենթաօրենսդրական ակտերի մշակում, որոնց մի մասը ենթադրում է փոփոխություններ կառավարության որոշումներում, որոշակի հատվածներ առնչվում են «Ոստիկանության մասին» օրենքին, իսկ մի շարք կարգավորումներ նախատեսվում են նախարարի հրամաններով: Այս բոլոր իրավական ակտերը մշակվել են:

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի և հարակից ակտերի մշակումը ընթացքի մեջ է՝ համաձայն ներկայացված հաշվետվության: Ավելին, ՖԽՔ ընթացքում ՔՀԿ ներկայացուցիչները դրական են գնահատել «Գվարդիայի մասին» օրենքում ուժի կիրառման համաչափության և իրավաչափության չափանիշների հստակեցումը՝ դիտարկելով դա որպես քաղաքացիների հիմնարար իրավունքների պաշտպանությանը միտված դրական քայլ: Հաշվի առնելով, որ արդյունքային ցուցիչով նախատեսված գործողությունները ըստ էության կատարվել են, ՄԽ-ի կողմից գործողությունը քանակական առումով գնահատվում է «կատարված»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 2. Ոստիկանության գվարդիայի՝ իրեն վերապահված գործառույթների իրականացման համար ծառայողների թվաքանակի, նյութատեխնիկական անհրաժեշտ հագեցվածության աուդիտ

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Իրականացվել է Ոստիկանության գվարդիայի՝ իրեն վերապահված գործառույթների իրականացման համար ծառայողների թվաքանակի, նյութատեխնիկական հագեցվածության աուդիտը, որի արդյունքները ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ Աուդիտի արդյունքներով մշակվել և հաստատվել է Ոստիկանության գվարդիայի թվակազմը։ Աուդիտի արդյունքներով առաջարկներ են ներկայացվել Ոստիկանության 2025 թվականի բյուջետային հայտով։ Աուդիտի արդյունքներով առաջարկներ են ներկայացվել Ոստիկանության 2026 թվականի բյուջետային հայտով։ (2025թ)	Ոստիկանության գվարդիայի՝ իրեն վերապահված գործառույթների իրականացման համար ծառայողների թվաքանակի, նյութատեխնիկական հագեցվածության աուդիտն իրականացվել է և դրա արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ։ Ոստիկանության բյուջետային հայտերով, ըստ կարիքների առաջնահերթությունների, ներկայացվել են Ոստիկանության գվարդիային վերաբերելի առաջարկներ, որոնք համապատասխանում են աուդիտի արդյունքներին։ Ոստիկանության գվարդիայի թվակազմը հաստատող որոշումն ընդունվել է և համապատասխանում է աուդիտի արդյունքներին։ *Եղակետային՝ 0։*	Ֆինանսների նախարարություն	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ ներկայացուցչի կողմից ՖԽՔ-ի ընթացքում տրամադրված տեղեկատվության՝ Ոստիկանության գվարդիայի՝ իրեն վերապահված գործառույթների իրականացման համար ծառայողների թվաքանակի, նյութատեխնիկական հագեցվածության աուդիտն արդեն իսկ իրականացվել է։ Վերջինս հավելեց, որ աուդիտի արդյունքները բազմիցս քննարկվել են թե՛ ՆԳՆ-ում, թե՛ Վարչապետի գլխավորությամբ անցկացված քննարկումների ընթացքում։

Համաձայն ՆԳՆ-ի գրավոր հաշվետվության՝ գվարդիայի թվակազմի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ գաղտնի գրությամբ։

ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը հայտնեց նաև, որ աուդիտի արդյունքներով մշակվել և հաստատվել է Ոստիկանության գվարդիայի թվակազմը, որն ամրագրվել է համապատասխան ենթաօրենսդրական ակտով։ Ըստ ՆԳՆ-ի գրավոր հաշվետվության՝ ներկայումս համալրված է ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի ծառայողների հաստիքների շուրջ 77%։ ՖԽՔ-ի ընթացքում նաև

նշվեց, որ «Ոստիկանության մասին» օրենքում նախատեսվող փոփոխություններն առնչվում են հենց գվարդիայի թվակազմին՝ գվարդիայի անձնակազմը ներառվում է ոստիկանության ընդհանուր թվակազմում, իսկ նախկինում առանձին հաշվառվող ոստիկանության զորքերի թվակազմը դուրս է բերվում: Այս փոփոխություններն այժմ գտնվում են իրավական շրջանառության փուլում:

Համաձայն ՆԳՆ-ի գրավոր հաշվետվության՝ Ոստիկանության գվարդիային վերապահված գործառույթների իրականացման համար նախատեսված նյութատեխնիկական, սպառազինային հագեցվածության վերաբերյալ բյուջետային հայտը ներկայացվել և հաստատվել է 2025 թվականի պետական բյուջեով: ՖԽՔ-ի ընթացքում նշվեց, որ գվարդիայի գործարկմանն առնչվող բյուջետային հայտը, հաշվի առնելով Միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) շրջանակը, ներկայացվել է 2025-2026 թվականների համար և արդեն ընդունվել է՝ նախատեսված ֆինանսավորմամբ ապահովելու համար գվարդիայի լիարժեք մեկնարկը 2025 թվականի նոյեմբերի 1-ից:

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը բավարար չէ գործողության արդյունքների ամբողջական և փաստացի իրագործումը գնահատելու համար:

Նախ, բացակայում է որևէ փաստաթուղթ, որը կհաստատեր գործողության անվանմամբ նշված աուդիտի՝ որպես համակարգված, փաստերի վրա հիմնված, փաստաթղթավորված գնահատման իրականացման փաստը: Չեն ներկայացվել աուդիտի առարկան, մեթոդաբանությունը, գնահատման չափորոշիչները կամ արդյունքները: Չի հստակեցվել, թե ներկայացված բյուջետային հայտերն ու կազմը ինչ մեթոդով են ձևավորվել, և որքանով են դրանք աուդիտի արդյունք կամ արդյունքների կիրառման հետևանք:

Երկրորդ, թեև բանավոր կերպով նշվում է, որ աուդիտի արդյունքները քննարկվել է Վարչապետի գլխավորությամբ քննարկումներում, և որ գրավոր կերպով թվակազմի տեղեկատվությունը ներկայացվել է ոստիկանություն, պարզ չէ՝ արդյոք վարչապետի աշխատակազմ ներկայացված տեղեկատվությունը ներառել է միայն թվակազմը, թե նաև տեխնիկական, նյութական և կազմակերպչական կարիքների ամբողջական վերլուծություն: Հետևաբար, անհնար է գնահատել՝ այդ տեղեկատվությունը բխել է համապարփակ աուդիտից, թե ոչ:

Երրորդ, ՆԳՆ-ի կողմից թեև բանավոր կերպով ներկայացվել է տեղեկատվություն, որ թվակազմը հաստատող որոշում ընդունվել է, այնուամենայնիվ վերջինս հաստատող փաստաթուղթ չի տրամադրվել: Միևնույն ժամանակ, թեև գվարդիայի կազմավորման և իրավական կարգավիճակի վերաբերյալ մի շարք իրավական ակտեր դեռ գտնվում են շրջանառության փուլում և ամբողջական կառուցակարգման գործընթացը չի ավարտվել, վերջինս քանակական տեսանկյունից կարևոր չէ, քանի որ վերստուգիչ ցուցանիշը թվակազմը հաստատող որոշման ընդունումն է:

Վերջապես, թեև ներկայացված տեղեկատվությունից բխում է, որ բյուջետային հայտերը ներկայացվել են 2025-2026թթ. ՄԺԾԾ շրջանակում, սակայն գործողությունների ծրագրով սահմանված վերստուգիչ ցուցանիշներից մեկը պահանջում է 2026թ. բյուջետային հայտի մասին առանձին հաստատում, որը հստակ չի արտացոլվել տրամադրված տեղեկատվության մեջ:

Ելնելով վերոգրյալից, ՄԽ-ի կողմից գործողությունը քանակական առումով գնահատվում է «մասնակի կատարված», քանի որ թեև ՆԳՆ-ն հայտնում է աուդիտի իրականացման, թվակազմի

հաստատման և բյուջետային հայտերի ներկայացման մասին, սակայն բացակայում են այդ գործողությունները հաստատող փաստաթղթերը և աուդիտի բովանդակային արդյունքները:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Գործողություն 3. Ուժային միջոցների գործադրման համար ստանդարտ գործառնական ընթացակարգերի (SOP) մշակում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Ստանդարտ գործառնական ընթացակարգերը մշակվել և հաստատվել են:	Ուժային միջոցների գործադրման համար ստանդարտ գործառնական ընթացակարգերը հաստատելու մասին ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է: Ստանդարտ գործառնական ընթացակարգերը մշակվել են միջազգային չափանիշների և առնվազն 3 պետության լավագույն փորձի հաշվառմամբ: Ստանդարտ գործառնական ընթացակարգերը հաստատելու մասին հրամանի նախագծի վերաբերյալ անցկացվել է առնվազն 1 հանրային քննարկում: *Եվակետային՝ 0:*	ՆԳՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ ՆԳ նախարարի հրամանով հաստատվել է ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման պիլոտային ստանդարտ գործառնական ընթացակարգ, որը եռամսյա փորձարկման փուլ անցնելու նպատակով, ներառվել է կրթական ծրագրերում: Միևնույն ժամանակ հայտնել են, որ ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման պիլոտային ստանդարտ գործառնական ընթացակարգը նախատեսված է ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման ժամանակ առաջնորդվելու համար, դրանք պատշաճ գործադրելու նպատակով, հաշվի առնելով, որ խնդրահարույց է ճշգրիտ կանխատեսել, թե կոնկրետ իրավիճակում, որ ուժային միջոցն է անհրաժեշտ գործադրել կամ կանխորոշել դրա գործադրման ուժգնության աստիճանը:

ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ ստանդարտ գործառնական ընթացակարգերի փաթեթը մշակվել է ԵԽ-ի աջակցությամբ: Միջազգային փորձի ուսումնասիրության հետ կապված արձանագրվեց, որ ԵԽ-ն աջակցել է ինչպես մեթոդաբանական, այնպես էլ ուսումնասիրական առումներով: Կազմակերպվել են պաշտոնական այցելություններ Ֆրանսիա, Լիտվա և Լատվիա՝ ղեկավար կազմի և ոստիկանության զորքերում աշխատող ծառայողների մասնակցությամբ:

Բացի այդ, միջազգային փորձագետներ են այցելել Հայաստան՝ տեղում գնահատելու գործող համակարգերը և համեմատելու միջազգային լավագույն փորձի հետ:

Հանրային քննարկումների մասով ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ մշակման գործընթացում անցկացվել է չորս և ավելի հանրային քննարկում՝ տարբեր գերատեսչությունների և ՔՀԿ-ների մասնակցությամբ: Նաև նշվեց, որ փաստաթուղթն օգտագործվում է որպես գիտելիքների պարբերական թարմացման և իրավիճակային գիտելիքների խորացման հարթակ:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության բոլոր վերստուգիչ ցուցանիշները ձևական առումով կատարվել են: ՆԳ նախարարի հրամանով հաստատվել է ուժային միջոցների գործադրման ստանդարտ գործառնական ընթացակարգ, թեև այն կրում է «պիլոտային» բնույթ և գտնվում է եռամսյա փորձարկման փուլում, ինչը կարող է ենթադրել, որ վերջնական փաստաթղթի հաստատումը դեռ ընթացքի մեջ է: Միջազգային փորձի ուսումնասիրության պահանջը բավարարվել է՝ ԵԽ-ի աջակցությամբ իրականացվել են այցելություններ Ֆրանսիա, Լիտվա և Լատվիա: Հանրային քննարկումների նվազագույն պահանջը գերազանցվել է՝ անցկացվել է չորս և ավելի քննարկում:

Այնուամենայնիվ, տրամադրված տեղեկատվությունը չի պարունակում տվյալներ այն մասին, թե արդյոք ՔՀԿ-ները ներկայացրել են առաջարկություններ SOP-ի վերաբերյալ, և դրանցից քանի տոկոսն է հաշվի առնվել: Թեև սա վերստուգիչ ցուցանիշի մաս չի կազմում, այն կարևոր է հանրային քննարկումների արդյունավետությունը գնահատելու համար և ցույց է տալիս վերստուգիչ ցուցանիշների ձևակերպման թերությունը՝ քանակական ցուցանիշների փոխարեն միայն գործընթացային պահանջների սահմանումը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Գործողություն 4. Ոստիկանության գվարդիայի ամբողջական վերապատրաստում՝ հասարակական կարգի պահպանության համար նախատեսված արդի տակտիկաների և վերլուծական կանխատեսման մասնագիտական հնարավորությամբ

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Աշտաղիտարկման արդյունք
Մշակվել են վերապատրաստման կուրսը և վերապատրաստման նյութերը:	Վերապատրաստման կուրսը և նյութերը մշակվել են և համապատասխանում են միջազգային չափանիշներին: Հասարակական կարգի պահպանության համար նախատեսված արդի պրակտիկաների կիրառմամբ վերապատրաստման կուրսի նվազագույն տևողությունը մեկ ամիս է: *Եղակետային՝ 0:*	ՆԳՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՀՀ ՆԳՆ-ի կողմից տրամադրված հաշվետվության՝ ԵԽ-ի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների

արդյունավետ կատարմանը» ծրագրի շրջանակներում, Ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության և պարբերական վերապատրաստման համար մշակվել են հատուկ դասընթացներ։

ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ վերապատրաստումների սկզբնական փուլերում ներգրավված են եղել միջազգային դասընթացավարներ, ովքեր համագործակցել են կրթահամալիրի մասնագետների հետ։ ԵԽ-ի աջակցությամբ ներգրավված են եղել նաև ազգային փորձագետներ, որոնք մասնակցել են ամբողջ փաթեթի մշակմանը։ Կրթական ծրագիրը համաձայնեցվում է ԿԳՄՍ նախարարության հետ՝ ապահովելու համար համապատասխանությունը պետական չափորոշիչներին և մեթոդաբանություններին՝ միաժամանակ հաշվի առնելով կրթահամալիրի գործունեության առանձնահատուկ բնույթը։

Վերապատրաստումների տևողության մասով նշվեց, որ դրանք տևում են միջինում մեկ ամիս և կազմակերպվում են ելակետային և եզրափակիչ գիտելիքի ստուգմամբ՝ համապատասխան գնահատման մեթոդաբանությամբ։

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշները մասնակիորեն կատարվել են։

Համաձայն ՆԳՆ-ի տրամադրված տեղեկատվության՝ ԵԽ-ի աջակցությամբ մշակվել են Ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության և պարբերական վերապատրաստման դասընթացներ, որոնք կարող են համարվել վերապատրաստման կուրս և նյութեր։

Միջազգային չափանիշներին համապատասխանության մասով տրամադրված տեղեկատվությունը հիմնականում վերաբերում է դասավանդման գործընթացին, սակայն բացակայում է ուղղակի հաստատումը, որ վերապատրաստման կուրսը և նյութերը համապատասխանում են միջազգային չափանիշներին, ինչպես պահանջում է վերստուգիչ ցուցանիշը։

Վերապատրաստման տևողության մասով նշվում է «*միջինում* մեկ ամիս», ինչը կարող է չբավարարել վերստուգիչ ցուցանիշի պահանջը մեկ ամիս նվազագույն տևողության մասին։

Բացի այդ, տրամադրված տեղեկատվությունը չի պարունակում տվյալներ հոգեբանական հմտությունների, դիմակայունության և սթրեսային իրավիճակներում կողմնորոշման թեմաների ներառման մասին։ Թեև դրանք ընթացիկ հաշվետու ժամանակահատվածի վերստուգիչ ցուցանիշի մաս չեն կազմում, սակայն հաջորդ փուլերում նախատեսված է համապատասխան թեմաներով վերապատրաստումների անցկացում, ինչը ենթադրում է, որ այդ թեմաները պետք է ներառված լինեին վերապատրաստման նյութերում։ Սա ցույց է տալիս վերստուգիչ ցուցանիշների ձևակերպման թերությունը՝ նյութերի բովանդակության պահանջների բացակայությունը։

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ։**

Գործողություն 7. Ոստիկանության գվարդիայի կողմից պետական պահպանության ենթակա օբյեկտների արդի դասակարգում և պահնորդական գործունեության չափանիշների լավարկում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա օբյեկտների ցանկում փոփոխությունների նախագիծը մշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» և «Ոստիկանության մասին» օրենքներում փոփոխությունների նախագծերի փաթեթը մշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա օբյեկտների ցանկում փոփոխությունների նախագիծն ընդունվել է: (2025) Օրենքների նախագծերի փաթեթն արժանացել է Կառավարության հավանությանը: (2025)	Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա օբյեկտների նոր ցանկը հաստատելու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է: Սահմանվել են ոստիկանական ուժերով պետական պահպանության ենթակա օբյեկտների դասակարգման սկզբունքները: Ցանկից դուրս բերված օբյեկտների պահպանությունը վերապահվել է մասնավոր պահնորդական ընկերություններին կամ նախատեսվել է պահպանության այլ եղանակ: *Ելակետային՝ 0:* «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» և «Ոստիկանության մասին» օրենքներում փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է: Օրենքների նախագծերի փաթեթով վերանայվել են մասնավոր պահնորդական գործունեության իրականացման չափանիշները, ներառյալ՝ լիցենզավորման պահանջները: Օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ անցկացվել է առնվազն 1 հանրային քննարկում:	Անվտանգության խորհրդի գրասենյակ ԱԱԾ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ կառավարության 27.12.2024թ. թիվ 2073-Ն որոշմամբ կատարվել են փոփոխություններ՝ սահմանվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների նոր ցանկը և օբյեկտները կարևորագույն նշանակության օբյեկտների շարքին դասելու չափորոշիչները: ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը պարզաբանեց, որ վերանայվել է պետական պահպանության օբյեկտների ամբողջական ցանկը և հաստատվել է նոր դասակարգման համակարգ, որի հիմքում դրված են պետության կողմից սահմանված առաջնահերթությունները՝ հանրային և մշակութային նշանակության չափանիշների հիման վրա:

Արդյունքում, մի շարք օբյեկտներ դուրս են բերվել պետական պահպանության ցանկից, և դրանց պահպանությունը կփոխանցվի մասնավոր պահնորդական կազմակերպություններին։

Նույն աղբյուրի համաձայն՝ ՆԳՆ կողմից մշակված «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը մարտ ամսին ԱԺ-ի կողմից 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են։ ՖԽՔ-ի ընթացքում նշվեց, որ ՆԳՆ-ն կապ է հաստատել բոլոր գործող մասնավոր պահնորդական կազմակերպությունների հետ՝ գրավոր կերպով հաղորդակցվելով և ներկայացնելով գործընթացի էությունը, բացատրելով հնարավորությունները և հրավիրելով նրանց քննարկումների։

Հանրային քննարկումների մասով ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ իրականացվել են մի շարք հանրային քննարկումներ՝ մասնակցել են 10-ից ավելի ՔՀԿ ներկայացուցիչներ, որոնք բարձրացրել են մտահոգություններ մասնավոր պահնորդական կազմակերպությունների պատրաստվածության վերաբերյալ, մասնավորապես՝ լիցենզիաների, թույլտվությունների և իրավասությունների առումով։ Այս դիտարկումները հաշվի առնելով՝ ՆԳՆ-ն երկարաձգել է անցումային ժամկետները՝ հնարավորություն ընձեռելով մասնավոր պահնորդական կազմակերպություններին ադապտացվել նոր պահանջներին։

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշները կատարվել են։ Կառավարության որոշմամբ հաստատվել է պետական պահպանության ենթակա օբյեկտների նոր ցանկը և դասակարգման չափորոշիչները։ Ցանկից դուրս բերված օբյեկտների պահպանությունը նախատեսվում է փոխանցել մասնավոր կազմակերպություններին։ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» և «Ոստիկանության մասին» օրենքների փոփոխությունները ընդունվել են ԱԺ-ի կողմից՝ վերանայելով գործունեության իրականացման չափանիշները։ Հանրային քննարկումների նվազագույն պահանջը գերազանցվել է՝ անցկացվել են մի շարք քննարկումներ 10-ից ավելի ՔՀԿ-ների մասնակցությամբ։

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է ԿԱՏԱՐՎԱԾ Է։

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 8-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	5	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	3	60%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ	2	40%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ուղղություն 9. Մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցեր

Խնդիր՝ *Ոստիկանության գործունեության շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցերին առնչվող բարելավման ենթակա կարգավորումների, գործիքակազմի և տեխնիկական միջոցների առկայություն*

Թիրախ՝ *Ոստիկանական ծառայության շրջանակներում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պատշաճ ապահովում իրավունքների և ազատում*

Գործողություն 1.1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ամբողջությամբ նոր օրենքի մշակում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Աշտադիտարկման արդյունք
Մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» նոր օրենքի նախագիծ:	Դիտարկվող ժամանակահատվածի համար արդյունքայի ցուցիչ նախատեսված չէ:	ԱՆ ԱԱԾ Գլխավոր դատախազություն ՔԿ Հակակոռուպցիոն կոմիտե ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՆԳՆ-ի կողմից մշակվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որն ԱԺ-ի կողմից 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է: Փոփոխությունը նախատեսում է ձերբակալված և կալանավորված անձանց պարտադիր բժշկական զննության ենթարկում ոչ միայն ՁՊՎ ընդունվելիս, այլ նաև՝ առողջական վիճակի վերաբերյալ գանգատի դեպքում, պաշտպանի պահանջով և մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում:

ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը հստակեցրեց, որ ռազմավարությամբ նախատեսված նոր օրենքի փոխարեն փոփոխությունները ներկայումս իրականացվում են միայն գործող օրենքի փոփոխությունների մակարդակով, և ամբողջովին նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքներ չեն իրականացվում: Ստամբուլյան արձանագրության դրույթների հիման վրա նախագծով սահմանվել է պարտադիր բժշկական զննություն հստակ ձևաթղթի միջոցով, որը առաջիկայում պետք է հաստատվի Առողջապահության նախարարի կողմից:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողությամբ նախատեսված էր «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ամբողջությամբ նոր օրենքի մշակում, սակայն փոխարենը իրականացվել են միայն գործող օրենքի փոփոխություններ: ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը հաստատեց, որ նոր օրենքի նախագիծ չկա և նման աշխատանքներ չեն իրականացվում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Գործողություն 1.2. «Ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերի արձանագրման մեխանիզմի ներդնում՝ Ստամբուլյան արձանագրությանը համահունչ

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Մշակվել է ազատությունից զրկված անձանց նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման առնչությամբ ՆԳՆ կարողությունները բարելավելու վերաբերյալ գնահատման զեկույցը: (2024թ) Զեկույցի հիման վրա մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը: Պիլոտային կարգով կիրառման նպատակով ՆԳ նախարարի հրամանով հաստատվել է վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը Օրենսդրական փոփոխությունների նախագիծն արժանացել է Կառավարության հավանությանը:(2025թ) Զեկույցի հիման վրա հաստատվել են վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը:	Ազատությունից զրկված անձանց նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման առնչությամբ ՆԳՆ կարողությունները բարելավելու վերաբերյալ գնահատման զեկույցը մշակվել է: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է: Նախագծով նախատեսվել են վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը կազմելու դեպքերը, դրա փոխանցման և պահպանման կարգը, ինչպես նաև սահմանվել է ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը հաստատելու լիազորող նորմ: Զեկույցի հիման վրա մշակված՝ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը հաստատվել են: Վատ վերաբերմունքի ենթադրյալ ցանկացած դեպքի արձանագրումն իրականացվում է բացառապես ձևաթղթի կիրառմամբ:	Առողջապահության նախարարություն Գլխավոր դատախազություն ՔԿ ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը հայտնեց, որ կազմվել է ազատությունից զրկված անձանց նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման առնչությամբ ՆԳՆ կարողությունները բարելավելու վերաբերյալ գնահատման զեկույց:

Զեկույցի հիման վրա, ըստ գրավոր հաշվետվության, մշակվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Ստամբուլյան արձանագրության դրույթները հիմք ընդունելով՝ փոփոխությունը նախատեսում է ձերբակալված և կալանավորված անձանց պարտադիր բժշկական զննության ենթարկում ոչ միայն ՁՊՎ ընդունվելիս, այլ նաև՝ առողջական վիճակի վերաբերյալ գանգատի դեպքում, պաշտպանի պահանջով և մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում:

Պիլոտային կարգով կիրառման նպատակով, ըստ գրավոր հաշվետվության, մշակվել է վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը՝ ՆԳ նախարարի և Առողջապահության նախարարի համատեղ հրամանի նախագծի տեսքով: ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը հայտնեց, որ պիլոտային ծրագիրը չի հաջողվել իրականացնել:

Օրենքի նախագիծը ԱԺ-ի կողմից 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է: Օրենքով ամրագրվել է ՀՀ առողջապահության նախարարի լիազորությունը՝ հաստատելու խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթղթի ձևը և դրա լրացման կարգը: ՀՀ առողջապահության նախարարության կողմից տեղեկացվել է, որ համապատասխան հրամանի նախագիծը մշակվել է, որը քննարկվե; է Երևանի քաղաքապետարանի և ՆԳՆ-ի հետ:

ՖԽՔ-ի ընթացքում նաև նշվեց, որ իրականացվել են խառը վերապատրաստումների ձևաչափով դասընթացներ՝ միաժամանակ ներգրավելով ինչպես ոստիկանության, այնպես էլ շտապ բժշկական օգնության ծառայողների

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշները մասնակիորեն կատարվել են: Գնահատման զեկույցը մշակվել է: Զեկույցի հիման վրա մշակվել և ընդունվել է օրենքում փոփոխությունների նախագիծը: Վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը մշակվել են, սակայն պիլոտային կարգով չեն հաստատվել ՆԳ նախարարի հրամանով, ինչպես նախատեսված էր վերստուգիչ ցուցանիշով: Օրենքի ընդունումից հետո փոփոխվել է ձևաթղթի և դրա լրացման ուղեցույցի հաստատման մեխանիզմը՝ դրանք պետք է հաստատվեն Առողջապահության նախարարի (ոչ թե ՆԳ նախարարի) կողմից, ինչը հաշվետու ժամանակահատվածու չի իրականացվել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 1.4. Ազատությունից զրկված անձանց տեղափոխման համար անհրաժեշտ պայմաններ նախատեսող տրանսպորտային միջոցների ձեռքբերում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Ձեռք է բերվել 22	Դիտարկվող		Գործողությունը

տրանսպորտային միջոց, որոնցից 1-ը՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված է:	ժամանակահատվածի համար արդյունքայի ցուցիչ նախատեսված չէ:		**ԿԱՏԱՐՎԱԾ Է**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված հաշվետվության՝ 2024թ. -ի ընթացքում ձեռք են բերվել ձերբակալված և կալանավորված անձանց տեղափոխող միջազգային չափանիշներին համապատասխանող «Ռենուալթ Մասթեր» մակնիշի 2024թ. արտադրության թվով 22 տրանսպորտային միջոցներ, որոնցից 1-ը նախատեսված է հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց համար: Տրանսպորտային միջոցները ներկայացված են եղել նաև հատուկ վերազինման: Տրանսպորտային միջոցների ըստ առաջնահերթության բաշխվել են համապատասխան ստորաբաժանումներին և արդեն իսկ շահագործվում են

ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ գործող 22 տրանսպորտային միջոցները պարզապես փոխարինվել են նորերով, սակայն այդ փոփոխությունը ամբողջությամբ չի ապահովում առկա կարիքները, և տեղափոխումների հետ կապված խնդիրը շարունակում է մնալ արդիական: ՔՀԿ ներկայացուցիչների և փորձագետների կողմից արձանագրվել է, որ մինչև այժմ լուրջ խնդիր է մնում կալանավորված կամ մեղադրյալ անձանց դատական նիստերին ժամանակին և պատշաճ կերպով ներկայացնելու հարցը: Մատնանշվել է, որ ուղեկցող անձնակազմի և տրանսպորտային միջոցների պակասի պատճառով դատական նիստերը հաճախ չեն կայանում՝ խաթարելով գործերի քննության ողջամիտ ժամկետում իրականացումը:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշը ձևական առումով կատարվել է՝ ձեռք է բերվել 22 տրանսպորտային միջոց, որոնցից 1-ը հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված է: Չնայած մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ տրանսպորտային միջոցները ոչ թե 22-ով ավելացվել են, այլ փոխարինել են արդեն գոյություն ունեցող հներին, ՄԽ-ն, զուտ քանակական տեսանկյունից, գործողությունը գնահատում է որպես կատարված, քանի որ նախատեսված էր ձեռք բերել 22 տրանսպորտային միջոց, և այդ պահանջը փաստացի իրականացվել է:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Գործողություն 1.5. Բերման ենթարկվող անձանց իրենց հասկանալի լեզվով իրավունքների մասին գրավոր ծանուցումների տրամադրման ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Իրավունքների մասին գրավոր ծանուցումները թարգմանվել են ևս 5 լեզվով:	Իրավունքների մասին գրավոր ծանուցումները թարգմանվել են 10 լեզվով: Ելակետային՝ ծանուցումները թարգմանված են 5 լեզվով:		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված հաշվետվության՝ բերման ենթարկվող անձանց իրավունքների մասին գրավոր ծանուցումները թարգմանվել են անգլերեն, ռուսերեն, պարսկերեն, ֆրանսերեն և հնդկերեն լեզուներով:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ ծանուցումները ներկայումս հասանելի են օգտագործման համար և փոխանցվել են նաև համապատասխան դեսպանատներին՝ պաշտոնական հաստատման գործընթացն իրականացնելու նպատակով: Մշտադիտարկման արդյունքների նախնական ներկայացման քննարկման ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը պարզաբանեց, որ թարգմանությունների ընտրության հիմնական չափանիշը եղել է փաստացի տվյալների վերլուծությունը՝ հիմնված բերման ենթարկված անձանց քաղաքացիության վրա, քանի որ գործնականում գերակշռում են Իրանի և Հնդկաստանի քաղաքացիները:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշը չի կատարվել ամբողջությամբ: Գործողության արդյունքային ցուցիչի համաձայն՝ ելակետային 5 լեզուներից բացի, նախատեսված էր իրավունքների մասին գրավոր ծանուցումների թարգմանություն ևս 5 լեզվով (ընդհանուր 10 լեզու): Փաստացի ծանուցումները թարգմանվել են միայն 5 լեզվով, ինչը չի բավարարում սահմանված թիրախը:

Միևնույն ժամանակ, մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է նաև, որ Հայաստանը 2002 թվականից վավերացրել է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան՝ ստանձնելով պարտավորություններ հինգ լեզուների՝ եզդիերենի, ասորերենի, քրդերենի, հունարենի և ռուսերենի պահպանման ուղղությամբ: Բացի այդ, մշտադիտարկման ընթացքում փաստաբանները մատնանշել են նաև համակարգային խնդիրներ . օտարերկրյա քաղաքացիների ձերբակալության ժամանակ հաճախ չեն ապահովվում օրենքով նախատեսված երաշխիքները՝ թարգմանչի ներգրավում, ընթացակարգի հիմնավորում և փաստաթղթերի տրամադրում: Սա սահմանափակում է նրանց իրավունքների իրացումը և հակասում է օրինականության ու թափանցիկության սկզբունքներին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 1.6. Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի թեմայով վերապատրաստումների անցկացում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Պիլոտային կարգով կիրառման նպատակով ՆԳ նախարարի հրամանով հաստատված՝ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթղթի և դրա լրացման ուղեցույցի հիման վրա վերապատրաստվել է ոստիկանության և շտապօգնության համապատասխան անձնակազմից 50- ական	Մշակվել և ներդրվել է հատուկ մեթոդաբանություն՝ գնահատելու ՄԱԿ Խոշտանգումների դեմ պայքարի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների և դասընթացների որակը՝ ապահովելու, որ	ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

անձ։ Մշակվել և ներդրվել է ՄԱԿ Խոշտանգումների դեմ պայքարի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների և դասընթացների որակը գնահատելու հատուկ մեթոդաբանություն։ (2025) Մշակվել են խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ վերապատրաստման նյութերը։	թեմատիկ դասընթացները հիմնված են թիրախային խմբերի կարիքների վրա։ Ելակետային՝ 0։ Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ վերապատրաստման նյութերը մշակվել են և համապատասխանում են միջազգային չափանիշներին։		

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը պարզաբանել է, որ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը չեն ընդունվել Առողջապահության նախարարի կողմից, ինչի հետևանքով պիլոտային կարգով վերապատրաստումներ փաստացի չեն իրականացվել։ Միևնույն ժամանակ, որոշակի վերապատրաստումներ անցկացվել են ինչպես ոստիկանության ծառայողների, այնպես էլ խառը ձևաչափով, որոնց շրջանակներում իրականացվել է գիտելիքների գնահատում։ Մասնավորապես, ՆԳՆ-ի գրավոր հաշվետվության համաձայն, ՆԳՆ և ԵԽ համատեղությամբ կազմակերպվել է երկօրյա դասընթաց, որին մասնակցել են ՆԳՆ աշխատակիցներ, ոստիկանության ծառայողներ և շտապօգնության անձնակազմ։ Դասընթացի նպատակն էր զարգացնել մասնակիցների կարողությունները և կանխարգելել խոշտանգումները՝ ներդնելով առերևույթ վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման նոր մեխանիզմ։

Ըստ նույն աղբյուրի՝ ՄԱԿ Խոշտանգումների դեմ պայքարի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների և դասընթացների որակը գնահատելու հատուկ մեթոդաբանությունը և վերապատրաստման նյութերը մշակվել են «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից։ Դրանց հիման վրա 2025թ. առաջին կիսամյակում վերապատրաստվել է 1137 ծառայող տարբեր թեմաներով, այդ թվում՝ խոշտանգումների արգելքի վերաբերյալ։

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ վերստուգիչ ցուցանիշներն ամբողջությամբ չեն կատարվել։

Թեև նշվում է ՆԳՆ և ԵԽ-ի համատեղ դասընթացի վերաբերյալ, սակայն Առողջապահության նախարարի կողմից ձևաթղթի և ուղեցույցի չընդունման պատճառով վերջինս չի կարող դիտարկվել որպես գործողությունների ծրագրով նախատեսված պիլոտային վերապատրաստում։ Նմանապես, թեև նշվում է 2025թ. առաջին կիսամյակում 1137 ծառայողի վերապատրաստման մասին, որը ժամանակագրական առումով ընդգրկված է հաշվետու ժամանակահատվածում, սակայն այն չի կարող հաշվարկվել ընթացիկ գործողության արդյունքի մեջ, քանի որ՝ ա) վերաբերում է գործողությունների ծրագրով հաջորդ փուլերի համար (երրորդ կիսամյակ) նախատեսված վերապատրաստումներին, որոնք վաղաժամ իրականացվել են, և բ)

պետք է իրականացվեր նոր հաստատված մեթոդաբանության հիման վրա, այլ ոչ թե Առողջապահության նախարարի կողմից դեռևս չհաստատված ձևաթղթի և ուղեցույցի հիման վրա:

Բացի այդ, երկուսն էլ չեն պարունակում տեղեկություն այն մասին, թե արդյոք յուրաքանչյուր թիրախային խմբից վերապատրաստվել է նախատեսված 50 անձը: Գործողությունների ծրագրով նախատեսված էր նաև, որ վերապատրաստվածների գիտելիքների գնահատման արդյունքներով միջինում պետք է ապահովվեր առնվազն 80% իմացություն: Թեև ենթադրաբար այս պահանջը վերաբերում է նոր մեթոդաբանության հիման վրա իրականացվող վերապատրաստումներին, այնուամենայնիվ պիլոտային վերապատրաստումների մասով միայն բանավոր նշվել է, որ գնահատում իրականացվել է, սակայն դրա արդյունքները չեն տրամադրվել, և անհնար է հաստատել, որ ապահովվել է պահանջվող 80% շեմը:

Տեղեկատվություն չի տրամադրվել նաև այն մասին, որ վերապատրաստման նյութերը համապատասխանում են միջազգային չափանիշներին և դասընթացների բովանդակությունը կառուցված է թիրախային խմբերի իրական կարիքների հիման վրա:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

Գործողություն 1.7. Ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի գործունեության վերայանված կարգի ամբողջական կիրառման ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Հասարակական դիտորդների խմբի կազմում նոր անդամները ներգրավվում են «ՆԳՆ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերում և ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողություն իրականացնող Հասարակական դիտորդների խմբի կազմավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը սահմանելու մասին» ՆԳ նախարարի հրամանով սահմանված կարգով: Մշակվել են հասարակական դիտորդների խմբի անդամների վերապատրաստման նյութերը: Իրականացվել է հասարակական դիտորդների խմբի բոլոր անդամների վերապատրաստում:	Նոր ընթացակարգով ձևավորված հասարակական դիտորդների խումբը գործում է: Հասարակական դիտորդների խմբի անդամների վերապատ- րաստման նյութերը մշակվել են՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Հասարակական դիտորդների խմբի բոլոր անդամները վերապատրաստվել են: Ելակետային՝ 0, 2025 թ. 100%:	ՄԻՊ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի տրամադրած հաշվետվության՝ ՀՀ ՆԳ նախարարի «ՆԳՆ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերում և ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կազմավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը սահմանելու մասին» համապատասխան հրամանն ընդունվել է: Հասարակական դիտորդների խմբի անդամների վերապատրաստման նյութերի մշակվել են: Ըստ նույն աղբյուրի՝ 2025 թվականի հուլիսի 10-ին կմեկնարկեն ԵԽ փորձագետների կողմից հասարակական դիտորդների խմբի անդամների վերապատրաստումները: ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը հայտնեց, որ դիտորդողական խումբը կազմված է 12 անդամից:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշները մասնակիորեն կատարվել են: ՆԳ նախարարի համապատասխան հրամանը ընդունվել է, հասարակական դիտորդների խումբը գործում է՝ 12 անդամի կազմով, սակայն տրամադրված տեղեկատվությունը չի հստակեցնում՝ արդյոք խմբի անդամների ներգրավումը իրականացվել է հրամանով սահմանված կարգով: Վերապատրաստման նյութերը մշակվել են, սակայն բացակայում է տեղեկատվություն դրանց՝ միջազգային չափանիշներին համապատասխանության մասին: Հասարակական դիտորդների խմբի անդամների վերապատրաստումը դեռևս չի իրականացվել՝ նախատեսված է 2025թ. հուլիսի 10-ից, ինչը դուրս է հաշվետու ժամանակահատվածից:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 2.1. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի փոփոխությունների կիրարկման համար անհրաժեշտ իրավական դաշտի ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
1. Մշակվել և հաստատվել է կանխարգելիչ հաշվառման շրջանակում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկման կարգը: 2. Մշակվել և ընդունվել է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի կրկնման ռիսկի գնահատման կարգը:	Կանխարգելիչ հաշվառման շրջանակում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկման կարգը հաստատելու մասին ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է: Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի կրկնման ռիսկի գնահատման	ԱՍՀՆ Առողջապահության նախարարություն Գլխավոր դատախազություն ՔԿ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**

	կարգը հաստատելու մասին Կառավարության որոշումն ընդունվել է: *Եզակետային՝ 0:*		

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված հաշվետվության՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու ստորաբաժանման կողմից մշակվել և ՀՀ ՆԳ նախարարի կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից կանխարգելիչ հաշվառման շրջանակում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկման իրականացման կարգը սահմանելու մասին» հրամանը:

Ըստ նույն աղբյուրի՝ 20.02.2025թ. ընդունվել է «Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի կրկնման ռիսկի գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 181-Ն որոշումը:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության երկու վերստուգիչ ցուցանիշներն էլ կատարվել են՝ ընդունվել են ՆԳ նախարարի հրամանը (թեև վերջինիս ընդունման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել՝ փաստելու, որ այն ընդունվել է հաշվետու ժամանակաշրջանում) և Կառավարության որոշումը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Գործողություն 2.2. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև բռնության ենթարկված երեխաների հետ պատշաճ հաղորդակցության և անվտանգության ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Մշակվել են բռնության ենթարկված երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ ուղեցույցներ: «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծն արժանացել է Կառավարության հավանությանը:	Մշակվել են աշխատանքային ուղեցույցներ բռնության ենթարկված անձանց և երեխաների, այդ թվում՝բռնությանն ականատես երեխաների, հետ հաղորդակցության շրջանակներում զոհակենտրոն և գենդերազգայուն մոտեցումներ ապահովելու, նրանց խնդիրները պատշաճ արձանագրելու և գնահատելու վերաբերյալ: Ուղեցույցները ներառում են առանձին թեմաներ սեռական բռնության ենթարկված երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ:	ԱՄՀՆ Առողջապահության նախարարություն	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

	Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու, այդ թվում՝ կացարաններ տեղափոխելու վերաբերյալ անվտանգային արձանագրություններ ընդունելու, ինչպես նաև առավել տարածված ահազանգերով ու դեպքերով ոստիկանության ծառայողների ստանդարտ գործառնական ընթացակարգերը հաստատելու՝ ՆԳ նախարարի լիազորությունը սահմանող օրենսդրական փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:		

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրված հաշվետվության՝ բռնության ենթարկված երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ ուղեցույցները հաստատվել են ՆԳ նախարարի հրամանով: Ըստ նույն աղբյուրի՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու, այդ թվում՝ կացարաններ տեղափոխելու վերաբերյալ անվտանգային արձանագրություններ ընդունելու գործընթացը կազմակերպելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ձեռնարկվել են միջոցներ: ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից մշակվել են նաև օրենսդրական նախագծեր՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին՝ նախատեսելու էլեկտրոնային հսկողության միջոցներ բռնարարների նկատմամբ:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշները մասնակիորեն են կատարվել:

Բռնության ենթարկված երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ ուղեցույցները մշակվել և հաստատվել են, սակայն չի տրամադրվել տեղեկություն՝ արդյոք դրանք ներառում են զոհակենտրոն և գենդերազգայուն մոտեցումներ, բռնությանն ականատես երեխաների հետ հաղորդակցության դրույթներ, ինչպես նաև առանձին թեմաներ սեռական բռնության ենթարկված երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ, ինչպես պահանջում է վերստուգիչ ցուցանիշը:

Թեև ՆԳՆ-ն նշում է ԱՄՀՆ-ի հետ համատեղ միջոցառումների և օրենսդրական նախագծերի մշակման մասին, սակայն չի հստակեցվել՝ արդյոք մշակվել և Կառավարության հավանությանը է արժանացել հենց այն օրենսդրական փոփոխությունների նախագիծը, որը ՆԳ նախարարին լիազորություն կտա հաստատելու անվտանգային արձանագրություններ և ստանդարտ գործառնական ընթացակարգեր, ինչպես պահանջում է վերստուգիչ ցուցանիշը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 2.3. Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստումների ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Մշակվել և հաստատվել է ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստումների կարգը: Վերանայվել են վերապատրաստման մոդուլները:	Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստումների կարգը հաստատելու մասին ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է: Մոդուլները վերանայված են և ներառում են գենդերազգայուն ու զոհակենտրոն հաղորդակցությանն առնչվող թեմաներ: Ելակետային՝ 0:	ԱՍՀՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրած հաշվետվության՝ ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստումների կարգը մշակվել է: Վերանայված վերապատրաստման մոդուլների հիման վրա իրականացվել են վերապատրաստումներ ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում:

ՖԽՔ-ի ընթացքում հայտնվեց, որ կարգը հաստատող հրամանը ընդունվել է, իսկ վերապատրաստումները կատարվել են ինչպես կրթահամալիրի, այնպես էլ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ՝ ներառելով շուրջ 1800 համայնքային ոստիկանի:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշները մասնակիորեն կատարվել են: Վերապատրաստումների կարգը մշակվել է և, ըստ ՖԽՔ-ի տեղեկատվության, հաստատվել է ՆԳ նախարարի հրամանով, սակայն համապատասխան հրամանը չի տրամադրվել: Վերապատրաստման մոդուլները վերանայվել են, սակայն չի տրամադրվել տեղեկատվություն՝ արդյոք դրանք ներառում են գենդերազգայուն ու զոհակենտրոն հաղորդակցությանն առնչվող թեմաներ, ինչպես պահանջում է վերստուգիչ ցուցանիշը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

Գործողություն 3.1. Ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության ուղեցույցի կիրառում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Մշակվել է ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ուղեցույց:	Ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության ուղեցույցը մշակվել է և մատչելի է:	ԱՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրած հաշվետվության՝ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ-ի կողմից մշակվել է ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ուղեցույց:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշը մասնակիորեն կատարվել է: Ուղեցույցը մշակվել է, սակայն վերջինս չի տրամադրվել ՄԽ-ին կամ կամ չի ներկայացվել ապացույց՝ վերջինիս շահագրգիռ կողմերին հասանելի լինելու վերաբերյալ, ինչի հետևանքով արդյունքային ցուցիչով սահմանված «մշակված և մատչելի» պահանջը չի կարող համարվել իրացված: Ավելին, մշտադիտարկման արդյունքներով արձանագրվել է, որ իրավապաշտպան համայնքի դիտարկմամբ՝ ծառայողները ցուցմունքներ կազմելիս շարունակում են դրանք ձևակերպել սեփական բառերով՝ չապահովելով դիմողի ներկայացրած տեղեկությունների ճշգրիտ փաստագրումը: Այս պրակտիկան կարող է հանգեցնել անձնական տվյալների խեղաթյուրման կամ ոչ ճշգրիտ մշակման, ինչը հակասում է ինչպես քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքներին, այնպես էլ անձնական տվյալների պաշտպանության պահանջներին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

Գործողություն 3.2. Ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության առերևույթ խախտումների առնչությամբ քաղաքացիների արձագանքի օպերատիվ ստացման մեխանիզմի գործարկում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Կատարվել է քաղաքացիների արձագանքի Օպերատիվ ստացման մեխանիզմների վերաբերյալ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, ինչի հիման վրա ներկայացվել են մեխանիզմի ներդրման	Քաղաքացիների արձագանքի օպերատիվ ստացման մատչելի մեխանիզմների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքներով մշակվել է նախընտրելի մոդելի վերաբերյալ առաջարկություններ ներառող զեկույց: Ուսումնասիրությունը	ԱՆ	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

եղանակի վերաբերյալ առաջարկություններ:	կատարվել է առնվազն 3 պետության լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա:		

Համաձայն ՆԳՆ-ի կողմից տրամադրած հաշվետվության՝ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից իրականացվել է քաղաքացիների արձագանքի օպերատիվ ստացման մեխանիզմների վերաբերյալ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն:

Քանակական ազդեցության գնահատման առումով արձանագրվում է, որ գործողության վերստուգիչ ցուցանիշը մասնակիորեն կատարվել է: Ուսումնասիրությունը կատարվել է, սակայն վերջինս չի տրամադրվել ՄԽ-ին, ինչպես նաև չի տրամադրվել այլ ապացույց՝ ուսումնասիրության արդյունքներով մշակված զեկույցի, նախընտրելի մոդելի վերաբերյալ առաջարկությունների և ուսումնասիրված առնվազն երեք պետության հստակ ցանկի վերաբերյալ, ինչպես պահանջում է վերստուգիչ ցուցանիշը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶԳԱՅՈՒՆ ՀԱՐՑԵՐ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 9-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025(1-ին կիսամյակ)թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	11	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	2	18.2%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ	8	72.7%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1	9.1%

Ուղղություն 10. Բարեփոխումների իրականացման ներառականություն, գործողությունների մշտադիտարկում և համակարգում

Խնդիր՝ *Ոստիկանության մասին հանրային կարծիքի, վստահության և բարեփոխումների արդյունավետ մշտադիտարկման խնդիրներ*

Թիրախ՝ *Բարեփոխումների իրականացումը մշտադիտարկող և գնահատող գործիքակազմերի պատշաճ կիրառում*

Գործողություն 1. Ոստիկանության բարեփոխումների մշտադիտարկման և գնահատման արդյունավետ մեխանիզմի ապահովում՝ հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Մշակվել և հաստատվել է Ոստիկանության	Ոստիկանության բարեփոխումների		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է**

բարեփոխումների մշտադիտարկման և գնահատման համակարգող խորհրդի գործունեության կարգը։ Մշակվել և հաստատվել է հաշվետվությունների ներկայացման ձևաչափը։ Անցկացվել է համակարգող խորհրդի 1 նիստ։ (2025)	մշտադիտարկման և գնահատման համակարգող խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին Կառավարության որոշումն ընդունվել է։ Ընդունվել է հաշվետվությունների ներկայացման ձևաչափը։ *Եկակետային՝0։* Անցկացվել է համակարգող խորհրդի 1 նիստ։ *Եկակետային՝0։*		**ՄԱՍՆԱԿԻ**

ՆԳՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ոստիկանության բարեփոխումների մշտադիտարկումը և գնահատումն ապահովելու նպատակով՝ 2025 թվականի հունվարի 15-ին ընդունվել է ՀՀ վարչապետի թիվ 30-Ա որոշումը։ Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի անհատական կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի անցկացման կարգը հաստատվել է ՆԳ նախարարի թիվ 5-Լ հրամանով։ Մրցույթի արդյունքում խորհրդի կազմում ընդգրկվել են 3 ՀԿ ներկայացուցիչներ։ 2025 թվականի ապրիլի 3-ին կայացել է խորհրդի անդրանիկ նիստը, որտեղ քննարկվել է Ոստիկանության բարեփոխումների 2024 թվականի 2-րդ կիսամյակի կատարողականը։ Բացի այդ, ներկայացվել է նաև ՆԳ նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 8621–Ա հրամանը, որով հաստատվել է հաշվետվությունների ներկայացման ձևաչափը։

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ նախատեսված երեք միջոցառումներից երկուսը գնահատվում են կատարված, իսկ մեկը՝ մասնակի։ Մասնավորապես, առաջին միջոցառման շրջանակներում ընդունված ՀՀ վարչապետի թիվ 30-Ա որոշումը վերաբերում է Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհուրդ ստեղծելուն և դրա անհատական կազմը հաստատելուն, սակայն չի կարգավորում համակարգող խորհրդի գործունեության ընթացակարգը։ Ըստ այդմ, միջոցառումը կարող է գնահատվել որպես մասնակի կատարված։ Բացի այդ, թեև ՀԿ-ների մրցույթի անցկացման կարգով նախատեսված էր համակարգող խորհրդում ընդգրկել 4 ՔՀԿ, մրցույթի արդյունքում ընդգրկվել են միայն 3-ը։ Կարգը չի անդրադառնում նման իրավիճակին, երբ ընտրվում է պակաս ՔՀԿ, սակայն դրա 23-րդ կետը նախատեսում է նոր մրցույթի անցկացում՝ անդամի հրաժարման կամ գործունեության դադարման դեպքում։ Այսպիսով, անհրաժեշտ է նոր մրցույթ կազմակերպել չորրորդ տեղի համար, ինչին անդրադարձ կլինի զեկույցի համապատասխան բաժնում։

Երկրորդ միջոցառման՝ հաշվետվությունների ներկայացման ձևաչափի հաստատման մասով միջոցառումը կարող է գնահատվել որպես կատարված։ Միաժամանակ, թեև սա դուրս է ընթացակարգային քանակական գնահատման տրամաբանական ծավալից, հարկ է նշել, որ թեև Ռազմավարության 158-րդ և 166-րդ կետերով նախատեսված է նշյալ, ինչպես նաև՝ դրանց հիման վրա կազմված տարեկան հաշվետվությունների հրապարակման պահանջ, սակայն, պրակտիկայում այս դրույթները չեն պահպանվում, և ոստիկանության բարեփոխումների 2024թ.

2-րդ կիսամյակի կատարողականը հրապարակային հասանելի չէ: Այս հանգամանքները սահմանափակում են հանրային հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, որոնց կանդրադառնանք զեկույցի առաջարկությունների բաժնում:

Երրորդ միջոցառման՝ համակարգող խորհրդի նիստի անցկացումը փաստվել է 2025. ապրիլի 3-ի նիստով. այս մասով միջոցառումը գնահատվում է որպես կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է որպես **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 2. Ոստիկանության բարեփոխումների իրականացման միջգերատեսչական աշխատանքային խմբի գործունեության շարունակականության ապահովում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Իրականացվել է միջգերատեսչական աշխատանքային խմբի առնվազն ամսական 1 հանդիպում: Ոլորտային աշխատանքային ենթախմբերը շարունակում են գործել: Իրականացվել է միջգերատեսչական աշխատանքային խմբի առնվազն ամսական 1 հանդիպում: (2025) Ոլորտային աշխատանքային ենթախմբերը շարունակում են գործել: (2025)	Իրականացվել է միջգերատեսչական աշխատանքային խմբի առնվազն ամսական 1 հանդիպում: Միջգերատեսչական աշխատանքային խումբը շարունակում է իր գործունեությունը՝ դիտարկելով ընթացիկ իրավիճակը, ներկայացնելով առաջարկություններ: *Էլեկտրային՝ 1 հանձնաժողով, ոլորտային ենթախմբեր:*		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

ՆԳՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում Ոստիկանության բարեփոխումների իրականացման միջգերատեսչական աշխատանքային խումբը պարբերաբար իրականացրել է հանդիպումներ՝ քննարկելով բարեփոխումների գործընթացին և առկա մարտահրավերներին վերաբերող հարցեր: Ոլորտային աշխատանքային ենթախմբերը շարունակել են գործել իրենց վերապահված ոլորտներով՝ պարբերաբար իրականացնելով հանդիպումներ և քննարկումներ: ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը նշել է, որ միջգերատեսչական աշխատանքային խումբը մի քանի հանդիպում է ունեցել:

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ երկու խումբ միջոցառումներից միջգերատեսչական աշխատանքային խմբի մասով, թեև պնդվում է պարբերականության պահպանումը, սակայն հանդիպումների ժամանակացույցը կամ հաստատող փաստաթղթերը չեն ներկայացվել, որ առնվազն ամսական 1 հանդիպում տեղի է ունեցել: Բացի այդ, աշխատանքային խմբի գործունության մասով վերստուգիչ ցուցանիշը նախատեսում է նաև քննարկումների արդյունքում առաջարկությունների ներկայացման

բաղադրիչ, սակայն այդ մասով տվյալներ չեն ներկայացվել: Նույնը վերաբերում է մյուս խումբ միջոցառումների՝ ոլորտային ենթախմբերի գործունեությանը՝ օրակարգեր, արձանագրություններ կամ ամփոփումներ չեն տրամադրվել, ինչի բացակայությունը սահմանափակում է կատարման ամբողջականության փաստացի հիմնավորումը: Բացի այդ, հարկ է նկատել, որ ենթախմբերի մասով վերստուգիչ ցուցանիշ նախատեսված չէ, ուստի այս մասով բարելավման կարիք ունի: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ հաղորդված է հանդիպումների և քննարկումների առկայությունը երկու բաղադրիչների մասով՝ ՄԽ-ն գործողության ընթացակարգային բաղադրիչը գնահատում է որպես՝ «մասնակի կատարված»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է որպես **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

«ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 10-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025(1-ին կիսամյակ)թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	2	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ	2	100%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ուղղություն 11. Հանրային ընկալում, ռազմավարական հաղորդակցություն

Խնդիր՝ *Ոստիկանության մասին հանրային կարծիքի, վստահության և հանրային հաղորդակցության դեռևս ոչ բավարար մակարդակ*

Թիրախ՝ *Ոստիկանության ծառայության հանդեպ վստահության բարձրացում*

Գործողություն 1. Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարական հաղորդակցություն

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Մշակվել է Ոստիկանության բարեփոխումների ռազմավարական հաղորդակցության ծրագիրը Իրականացվել է կանանց ներգրավվածության բարձրացմանն ուղղված առնվազն 1 հաղորդակցության արշավ։ Մշակվել է առնվազն 5 հանրային իրազեկման նյութ։ Հաստատվել է Ոստիկանության բարեփոխումների ռազմավարական հաղորդակցության ծրագիրը։ Իրականացվել է կանանց ներգրավվածության բարձրաց- մանն ուղղված առնվազն 1 հաղորդակցության արշավ։	Մշակվել է Ոստիկանության բարեփոխումների ռազմավա- րական հաղորդակցության ծրագիրը, հաստատելու մասին ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է։ Ելակետային՝ 0։ Իրականացվել է ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածության բարձրացմանը միտված առնվազն 2 հաղորդակ- ցության արշավ։ Ոստիկանության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ մշակվել և հրապարակվել է առնվազն 5 հանրային իրազեկման նյութ։		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**

ՆԳՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ՆԳՆ ոստիկանության բարեփոխումների հաղորդակցության պլանը, որը ներկայացվել է միջազգային գործընկեր կազմակերպություններին՝ պլանով սահմանված մի շարք միջոցառումների համատեղ իրականացման նպատակով և հաստատվել է ՆԳ նախարարի հրամանով։ Կանանց ներգրավվածության վերաբերյալ նշվել է, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է կանանց ներգրավվածության բարձրացմանն ուղղված լայնամասշտաբ հաղորդակցության արշավ, մասնավորապես՝ մեկնարկել և շարունակաբար իրականացվում է «Եղի՛ր ուժ մեր երկրի համար» խորագրով իրազեկման արշավը, իրականացվել են մի շարք հաղորդակցման միջոցառումներ՝ ՀՀ ԿԳՄՄՆ-ի հետ համագործակցությամբ, 829 կրթական հաստատություններում Երևանում և մարզերում, ինչպես նաև՝ իրականացվել են քննարկումներ Ոստիկանության կին ծառայողների հետ՝ ԱՄՆ դեսպանության և ԱԺ

պատգամավորների մասնակցությամբ՝ վերհանելու համակարգ մուտք գործելու, ծառայության և առաջխաղացման ընթացքում առաջացող խնդիրները: Իրազեկման աշխատանքները, հատկապես կանանց ներգրավվածության թեմայով, լայնորեն լուսաբանվել են ԶԼՄ-ներում և սոցիալական հարթակներում՝ բազմազան հրապարակված նյութերով:

ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը հավելել է, որ վերոնշյալ պլանը ներառել է նաև վերապատրաստումներ՝ ՆԳՆ տարբեր ստորաբաժանումներում հաղորդակցության պատասխանատուների համար, ինչպես նաև լայնածավալ իրազեկման աշխատանքներն իրականացվել են անցած և ընթացիկ տարում տեղի ունեցած երկու ընդունելությունների շրջանակներում: Ինչպես նաև նշել է, որ տեղեկատվական հոլովակները և իրազեկման նյութերը մշակվել են միջազգային գործընկերների հետ համատեղ, որոնք օգտագործվել են ինչպես առցանց, այնպես էլ տեղերում:

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ հաշվետու ժամակահատվածում նախատեսված հինգ միջոցառումներից երկուսը վերաբերում են հաղորդակցության ռազմավարական ծրագրի մշակմանն ու հաստատմանը: Ռազմավարական հաղորդակցության ծրագիրը հաստատվել է, սակայն հաստատման վերաբերյալ որևէ ապացույց, այդ թվում՝ հրամանը կամ հրամանի հղումը չի տրամադրվել ՄԽ-ին: Այս մասով միջոցառումները գնահատվում են որպես մասնակի կատարված:

Երկու միջոցառում վերաբերում են կանանց ներգրավվածության վերաբերյալ հաղորդակցության արշավներին: Մասնավորապես նշվել է «Եղի՛ր ուժ մեր երկրի համար» խորագրով արշավի իրականացումը, ինչպես նաև միջոցառումների անցկացումը 829 կրթական հաստատություններում՝ երկու ընդունելությունների շրջանակում, ինչպես նաև կին ծառայողների հետ քննարկումներ: Սրանք կարող են դիտվել որպես առնվազն երկու առանձին հաղորդակցության արշավ, և ցուցանիշը քանակապես կարող է համարվել ապահովված: Միևնույն ժամանակ, թեև գործող արդյունքային վերստուգիչ ցուցանիշները մասնակցության կամ իրազեկման մակարդակի տվյալներ չեն պահանջում, նման տվյալների բացակայությունը խոչընդոտում է ազդեցության չափելիության գնահատմանը: Այս հարցը կլուսաբանվի ռազմավարության կատարելագործման վերաբերյալ զեկույցի բաժնում:

Հինգերորդ միջոցառումը վերաբերում է Ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ առնվազն հինգ հանրային իրազեկման նյութերի հրապարակմանը: Սակայն ներկայացված հղումները հիմնականում անդրադառնում են ՆԳՆ-ի գործունեությանը կամ կանանց ներգրավվածությանը, և բացակայում է ուղղակի շեշտը բարեփոխումների ընթացքի վրա: Բացի այդ, ՖԽՔ-ի ընթացքում նշվել են միջազգային գործընկերների հետ համատեղ պատրաստված տեղեկատվական հոլովակներ, որոնց առկայությունը փաստաթղթերով չի հաստատվել: Այս մասով նույնպես արձանագրվում է մասնակի կատարում: Միևնույն ժամանակ, գործող վերստուգիչ ցուցանիշներում բացակայում են հրապարակված նյութերի դիտումների, տարածման կամ ազդեցության չափման որևէ չափորոշիչ, իսկ նման տեղեկատվություն ՆԳՆ-ի կողմից չի տրամադրվել: Այս հարցին ևս անդրադարձ կկատարվի զեկույցի համապատասխան բաժնում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է որպես **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

Գործողություն 2. Հանրային վստահության մակարդակի և ոստիկանության միջոցառումների ազդեցության գնահատում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Մշակվել են հանրային հարցումների իրականացման մեթոդաբանությունն ու հարցաշարը	Հանրային վստահության մակարդակի և ոստիկանության միջոցառումների ազդեցության գնահատման վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման մեթոդաբանությունն ու հարցաշարը մշակվել են: *Եկակետային՝ 0:*		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

ՆԳՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հանրային հարցումների իրականացման մեթոդաբանությունն ու հարցաշարը մշակվել են:

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ թեև ՆԳՆ-ը հայտնել է հանրային հարցումների մեթոդաբանության և հարցաշարի մշակման մասին, սակայն դրանց օրինակները կամ հաստատող փաստաթղթերը չեն տրամադրվել: Այս հանգամանքը թույլ չի տալիս ամբողջականորեն հաստատել միջոցառման իրականացումը փաստացի հիմքերով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է որպես **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ:**

Գործողություն 3. Ներքին գործերի նախարարության, Ոստիկանության հանրային հաղորդակցության գործիքակազմի զարգացում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Գնահատվել են ՆԳՆ Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության տեխնիկական կարիքները, որի հիման վրա մշակվել է տեխնիկական կարիքների ցանկը: Մշակվել են ՆԳՆ Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության անձնակազմի վերապատրաստման նյութերը: Մշակվել և հաստատվել է ՆԳՆ հանրային հաղորդակցության ռազմավարությունը:	Մշակվել է ՆԳՆ Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության տեխնիկական կարիքների ցանկը: *Եկակետային՝ 0:* ՆԳՆ հանրային հաղորդակցության ռազմավարությունը հաստատող՝ ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է: Ռազմավարությամբ նախատեսվել է Ոստիկանության հաղորդակցության նոր մեթոդաբանության		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՄՆԱԿԻ**

	մշակումը: *Էլեկտրային՝ առկա չէ հաղորդակցության ռազմավարություն:*		

Համաձայն ՆԳՆ-ի տրամադրած տեղեկատվության՝ ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը հայտնեց, որ Լիտվայի գործընկերների աջակցությամբ՝ ԵՄ «Աջակցություն իրավապահ մարմիններին Հայաստանում» ծրագրի շրջանակում, իրականացվել է կարիքների գնահատում և տրամադրվել են նյութատեխնիկական միջոցներ, որոնք նպաստել են ստորաբաժանման տեխնիկական կարողությունների զարգացմանը:

Ըստ գրավոր հաշվետվության՝ մշակվել են ՆԳՆ Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության անձնակազմի վերապատրաստման նյութերը: ՆԳՆ հանրային հաղորդակցության ռազմավարությունը մշակվել և հաստատվել է ՀՀ ՆԳ նախարարի հրամանով:

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ երեք նախատեսված միջոցառումներից յուրաքանչյուրն իրականացվել է մասնակի: Տեխնիկական կարիքների գնահատման և համապատասխան ցանկի մշակման մասով ստացվել է միայն բանավոր տեղեկություն՝ կարիքների գնահատման իրականացման վերաբերյալ, սակայն տեխնիկական կարիքների ցանկի մշակման մասին որևէ փաստացի տվյալ կամ հաստատող փաստաթուղթ չի տրամադրվել: Վերապատրաստման նյութերի մշակման մասով, չնայած ՆԳՆ-ը հայտնել է դրանց մշակման մասին, նյութերի օրինակները կամ հաստատող փաստաթղթերը չեն ներկայացվել: Բացի այդ, գործող վերստուգիչ ցուցանիշում առհասարակ բացակայում է վերապատրաստման նյութերի մշակման փաստը, և ցուցանիշը չի ներառում չափորոշիչներ դրանց քանակի, կառուցվածքի կամ բովանդակության վերաբերյալ, ինչը սահմանափակում է միջանկյալ կատարողականի լիարժեք գնահատումը: Հանրային հաղորդակցության ռազմավարության մասով նշվում է, որ այն հաստատվել է, սակայն հաստատման վերաբերյալ որևէ ապացույց, այդ թվում՝ հրամանը կամ հրամանի հղումը չի տրամադրվել ՄԽ-ին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է որպես **«ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՄՆԱԿԻ»:**

«ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 11-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025(1-ին կիսամյակ)թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	3	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ	3	100%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ուղղություն 12. Ոստիկանություն բարեփոխումների շրջանակներում միջազգային համագործակցություն

Խնդիր՝ *Ոստիկանության՝ ոչ լիարժեք մասնակցություն/ անդամակցություն/ համագործակցություն միջազգային հարթակներում, ոստիկանության միջազգային իմիջի ու միջազգային գնահատումների ոչ բավարար մակարդակ*

Թիրախ՝ *Կովկասյան բարոմետրի հարցումների արդյունքներով ՀՀ ոստիկանության նկատմամբ վստահության աստիճանի բարձրացում*

Գործողություն 1. Բարեփոխումների շրջանակներում միջազգային գործընկերների հետ համագործակցության ընդլայնում

Թիրախն ըստ ժամկետի	**Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ**	**Համակատարող մարմին**	**Մշտադիտարկման արդյունք**
Կազմակերպվել է դոնորների համակարգման 1 հանդիպում: Լրամշակվել և միջազգային գործընկերներին է ներկայացվել դոնորների համակարգման մատրիքսը:	Կազմակերպվել է 1 համակարգող հանդիպում: *Եզակետային՝ 2023 թվականին անցկացվել է 1 համակարգող հանդիպում:* Գործողությունների ծրագրի ֆինանսավորման կարիքների հաշվառմամբ դոնորների համակարգման մատրիքսը լրամշակվել է և ներկայացվել զարգացման միջազգային գործընկերների համակարգման հանդիպումներում: *Եզակետային՝դոնորների համակարգման մատրիքսը մշակված է:*		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է** Ռազմավարական նպատակին ուղղված խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

ՆԳՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024թ. փետրվարի 27-ին Երևանում կայացել է «ՆԳՆ հետ համագործակցության ընթացիկ զարգացումները և հեռանկարները» խորագրով բարձր մակարդակի հանդիպում, որին մասնակցել են ՄԱԿ-ի, ԵՄ և այլ միջազգային կազմակերպությունների բարձր մակարդակի ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ: ՆԳՆ-ի հաղորդմամբ՝ այդ հանդիպման ընթացքում միջազգային գործընկերներին գրավոր ներկայացվել է նախապես մշակված դոնորների համակարգման մատրիքսը: ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը նշել է, որ մատրիքսը լրամշակվել է ոստիկանության բարեփոխումների իրական ֆինանսական կարիքների գնահատման հիման վրա, արժանացել է դրական արձագանքի, ինչի արդյունքում մեկնարկել են մի շարք նոր ծրագրեր, որոնց մի մասը արդեն իրագործման փուլում է:

Թեև գործողությունների ծրագիրը պաշտոնապես ընդունվել է 2024թ. նոյեմբերին, վերոնշյալ գործողությունները տեղի են ունեցել մինչ այդ՝ փաստացի նախորդելով ծրագրի ընդունմանը: Սակայն հաշվի առնելով, որ այդ գործողությունները համահունչ են ծրագրով սահմանված

արդյունքային ցուցիչներին և նպաստել են դրանց իրագործմանը, գնահատման շրջանակում դրանք դիտարկվում են որպես տվյալ գործողության մաս:

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ ֆինանսական կարիքների հիման վրա լրամշակված՝ դոնորների համակարգման մատրիքսը ներկայացվել է լայն և բարձր մակարդակով գործընկերներին՝ պաշտոնապես արձանագրված հանդիպման ընթացքում, ինչը համահունչ է գործողության արդյունքային ցուցիչին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՄԽ-ն գործողության ընթացակարգային բաղադրիչը գնահատում է որպես *«կատարված»:*

Որակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ դոնորների համակարգման գործընթացի իրականացումն ու դրան հաջորդած նոր ծրագրերի մեկնարկը կարող են դիտարկվել որպես ռազմավարական խնդիրների լուծմանը նպաստող քայլեր՝ նպաստելով ոլորտում համակարգված աջակցության ձևավորմանը: Սակայն ռազմավարական մակարդակում ազդեցության ամբողջական գնահատումը սահմանափակված է՝ բավարար ապացույցների բացակայության պատճառով: Մասնավորապես, չեն ներկայացվել տվյալներ մատրիքսի լրամշակման բովանդակության, դրա հիմնավորման մեթոդաբանության, իրական ֆինանսական կարիքների գնահատման հիմքերի, ինչպես նաև ներկայացված առաջնահերթությունների հստակեցման վերաբերյալ: Հետևաբար՝ գործողությունը չի կարող դիտարկվել որպես բավարար հիմք՝ ռազմավարական խնդրի մակարդակում միջանկյալ արդյունքի լիարժեք իրագործման համար:

Այս համատեքստում ուշադրության արժանի է նաև հանրային վստահության ցուցանիշների զարգացումը: Ռազմավարական փաստաթղթերով որպես ելակետային ցուցանիշ սահմանվել է Կովկասյան բարոմետրի (այսուհետ՝ ԿԲ) 2022 թվականի համախառն արդյունքը՝ 20.6% (լիարժեք և մասնակի վստահության հանրագումարով), իսկ 2027 թվականի թիրախային ցուցանիշը՝ 40%: 2024 թվականի նույն աղբյուրի տվյալներով՝ ոստիկանությանը լիարժեք վստահություն հայտնել է հարցվածների 15.9%-ը, «ավելի շուտ վստահում է»՝ 24.6%, որի հանրագումարը կազմում է 40.5%: Թեպետ հարցումն իրականացվել է մինչև գործողությունների ծրագրի պաշտոնական ընդունումը (նոյեմբեր 2024), այն համընկել է ծրագրի նախապատրաստական փուլի հետ, երբ որոշ գործողություններ, այդ թվում՝ դոնորների համակարգման գործընթացը, արդեն ընթացքի մեջ էին: Արդյունքում՝ արձանագրված վստահության աճը կարող է դիտարկվել որպես բարեփոխումների ընդհանուր ազդեցության նախնական ցուցիչ, իսկ տվյալ գործողությունը՝ այդ դրական միտման ձևավորմանը նպաստող գործոն: Այնուամենայնիվ, հանրային ընկալման ուղղակի գնահատման ապացույցների և հանրային հաղորդակցության միջոցառումների վկայությունների բացակայության պայմաններում գործողության ազդեցությունն ամբողջությամբ վերագրել ռազմավարական խնդրի մակարդակում ակնկալվող արդյունքի լիարժեք իրագործմանը նպատակահարմար չէ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գործողության ազդեցության մակարդակի որակական գնահատականը ՄԽ-ի կողմից դասվում է *«իրականացված է ոչ ամբողջական»* կարգում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է որպես **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով՝ ռազմավարական խնդիրը (արդյունքը) գնահատվում է որպես **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱ».** գործողության շրջանակում

իրականացված միջոցառումները չեն ապահովել ռազմավարական նպատակի լիարժեք նվաճումը։

Գործողություն 2. Միջազգային վարկանիշներում Ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման վրա ազդող գործոնների մշտադիտարկում

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Իրականացվել է միջազգային վարկանիշներում ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման վրա ազդող գործոնների վերհանման և խնդիրների քարտեզագրման նպատակով ուսումնասիրություն։ Ուսումնասիրության հիման վրա մշակվել է կիսամյակային գործողությունների ծրագիր։ Իրականացվել է միջազգային վարկանիշներում ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման առաջընթացի ուսումնասիրություն։ Ուսումնասիրության հիման վրա մշակվել է կիսամյակային գործողությունների ծրագիր։	Միջազգային վարկանիշներում Ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման վրա ազդող գործոնների վերհանում ու խնդիրների ուսումնասիրության հիման վրա մշակվել է խնդիրները քարտեզագրող զեկույց։ *Էլեկտրոնային՝ 0։* Քարտեզագրմամբ վերհանված խնդիրների հասցեագրման նպատակով, ինչպես նաև ընթացիկ առաջընթացի ուսումնասիրության հիման վրա մշակվել և հաստատվել է 2 գործողությունների ծրագիր։ *Էլեկտրոնային՝ 0։*		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ** Ռազմավարական նպատակին ուղղված խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն ՆԳՆ-ի տրամադրած տեղեկատվության՝ իրականացվել է միջազգային վարկանիշներում ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման վրա ազդող գործոնների վերհանման և խնդիրների քարտեզագրման նպատակով ուսումնասիրություն։ Ուսումնասիրվել են միջազգային հեղինակավոր կազմակերպությունների զեկույցները (CPT, ԱՄՆ պետքարտուղարության «Մարդկանց թրաֆիքինգի մասին» զեկույց), ինչպես նաև տարբեր տեղեկատվական հարթակներ (NUMBEO, «World Population Review» և այլն)։ ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը լրացրեց, որ պարբերաբար վերլուծվում են նաև Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) դիտարկումներ, որոնց շուրջ 80%-ը հասցեագրված է։

Ուսումնասիրությունների հիման վրա մշակվել է կիսամյակային գործողությունների ծրագիր։ Ըստ 2024թ. երկրորդ կիսամյակի հաշվետվության՝ նշվել է, որ միջազգային վարկանիշներում դիրքերի բարելավման առաջընթացի ուսումնասիրությունն ընթացքի մեջ է, որի հիման վրա

հետագայում կմշակվի երկրորդ կիսամյակային գործողությունների ծրագիրը։ ՖԽՔ-ի ընթացքում հայտնվեց, որ ՄԱԿ-ի զարգացման գործընկերների հետ իրականացվել է ծրագիր՝ գնահատման բաղադրիչով, անցկացվել են անանուն հարցումներ, սակայն արդյունքները դեռ հասանելի չեն։ Այնուամենայնիվ, 2025թ. առաջին կիսամյակի հաշվետվությունում առաջընթացի ուսումնասիրության կամ երկրորդ գործողությունների ծրագրի մասին տեղեկատվություն չի տրամադրվել։

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ գործողությունների ծրագրով սահմանված ցուցիչների համաձայն՝ պետք է իրականացվեին երկու փուլով գործողություններ. առաջին փուլում՝ միջազգային վարկանիշների վրա ազդող գործոնների և խնդիրների վերհանման ուսումնասիրություն, այդ ուսումնասիրության հիման վրա՝ խնդիրները քարտեզագրող զեկույցի մշակում, ապա կիսամյակային գործողությունների ծրագրի մշակում և հաստատում, երկրորդ փուլում՝ միջազգային վարկանիշներում դիրքերի բարելավման առաջընթացի ուսումնասիրություն, ապա այդ ուսումնասիրության հիման վրա երկրորդ կիսամյակային գործողությունների ծրագրի մշակում և հաստատում։ Առաջին փուլի մասով իրականացվել է ուսումնասիրություն և մշակվել է կիսամյակային գործողությունների ծրագիր, սակայն չի տրամադրվել խնդիրները քարտեզագրող զեկույցը և ծրագրի հաստատման վերաբերյալ ապացույց։ Երկրորդ փուլի մասով՝ 2024թ. երկրորդ կիսամյակի հաշվետվությամբ նշվել է, որ առաջընթացի ուսումնասիրությունն ընթացքի մեջ է և կմշակվի երկրորդ գործողությունների ծրագիր, ՖԽՔ-ի ընթացքում հայտնվեց անանուն հարցումների անցկացման մասին (արդյունքները դեռ հասանելի չեն), սակայն 2025թ. առաջին կիսամյակի հաշվետվությունում այդ գործընթացների շարունակության կամ ավարտի մասին տեղեկատվություն չի տրամադրվել։ Հաշվի առնելով, որ հաշվետու ժամանակահատվածն ավարտված է, իրականացվել են գործողությամբ նախատեսված աշխատանքների մոտավորապես 40-50%-ը (ուսումնասիրություն և առաջին ծրագրի մշակում՝ առանց զեկույցի և հաստատման, երկրորդ փուլը՝ անավարտ), ՄԽ-ի կողմից գործողությունը քանակական առումով գնահատվում է «*մասնակի կատարված»։*

Որակական ազդեցության գնահատման առումով՝ Գործողությամբ նախատեսված ուսումնասիրությունները, դրանց հիման վրա կազմված զեկույցը և կիսամյակային գործողությունների ծրագրերը կարող էին ձևավորել ռազմավարական քաղաքականություն՝ ուղղված ոստիկանության միջազգային դիրքերի բարելավմանը, ինչը կնպաստեր հանրային վստահության բարձրացմանը։ Սակայն կոնկրետ տվյալների բացակայության պայմաններում դժվար է գնահատել գործողությամբ նախատեսված ուսումնասիրությունների բովանդակային արժեքը, դրանց հիման վրա կատարված վերլուծությունների արդիականությունն ու քաղաքականության ձևավորման վրա ազդեցությունը։ Առկա են ընդամենը ընդհանուր բնույթի նշումներ միջազգային զեկույցների մշտադիտարկման և դրանց հասցեագրման վերաբերյալ։ ՆԳՆ ներկայացուցչի դիտարկմամբ՝ կատարված քայլերը նպաստում են հետագա զեկույցներում բարելավումների ապահովմանը և հասարակության վստահության աճին, սակայն այդ պնդումները հիմնավորող վկայող փաստաթղթեր չեն ներկայացվել։ Ստացված տեղեկատվության համաձայն՝ նշվում է, որ իրականացված քայլերը նպաստել են ԳՐԵԿՈ-ի դիտարկումների հասցեագրմանը, սակայն չեն ներկայացվել տվյալներ, որոնք ցույց կտան այդ հասցեագրման կապը Կովկասյան բարոմետրի թիրախային ցուցանիշի հետ (40%)։ Հետևաբար, ՄԽ-ն գործողության ազդեցությունը ռազմավարական խնդրի լուծման վրա գնահատում է որպես *«իրականացված է ոչ ամբողջական»։*

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է որպես **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով՝ ռազմավարական խնդիրը (արդյունքը) գնահատվում է որպես **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ.** գործողության շրջանակում իրականացված միջոցառումները չեն ապահովել ռազմավարական նպատակի լիարժեք նվաճումը:

Գործողություն 3. Ոստիկանության միջազգային իմիջի ու նոր ոստիկանության կերպարի բարձրացմանն ուղղված հաղորդակցություն

Թիրախն ըստ ժամկետի	Արդյունք/վերստուգիչ ցուցանիշ	Համակատարող մարմին	Մշտադիտարկման արդյունք
Իրականացվել է ոստիկանության ծառայողների 100%-ի իրազեկում կառուցվածքային փոփոխությունների և ֆունկցիոնալի հստակեցման մասին: Առնվազն 1 միջազգային հարթակում ներկայացվել են ոստիկանության բարեփոխումներն ու գրանցված արդյունքները	Ոստիկանության ծառայողների 100 %-ը իրազեկվել է կառուցվածքային փոփոխությունների և ֆունկցիոնալի հստակեցման մասին: 2024 թվականին՝ առնվազն 1 միջազգային հարթակում ներկայացվել է ոստիկանության բարեփոխումներն ու գրանցած արդյունքները:		Գործողությունը **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ** Ռազմավարական նպատակին ուղղված խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

ՆԳՆ-ի տրամադրված տեղեկատվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ՆԳՆ և Ոստիկանության ղեկավար անձնակազմը պարբերական հանդիպումներ են իրականացրել ծառայողների հետ՝ կառուցվածքային փոփոխությունների և ֆունկցիոնալի հստակեցման վերաբերյալ իրազեկման նպատակով: Ներկայացվել են ոստիկանության չորս հիմնական ուղղություններով իրականացված բարեփոխումները, այդ թվում՝ Պարեկային, Քրեական, Համայնքային ոստիկանության և Գվարդիայի ձևավորման գործընթացները, կադրային համալրումը, կանանց ներգրավվածությունն ու ծառայության արդյունավետ կազմակերպման հարցերը: Միջազգային ներկայացումների մասով նշվել է, որ նախարար Արփինե Սարգսյանը ԵԽ-ում ներկայացրել է ՆԳ ոլորտի բարեփոխումները, իսկ փոխնախարար Ա. Մկրտչյանի գլխավորած պատվիրակությունը՝ Գերմանիայում: ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը հավելել է, որ ծառայողները հանդիպումների ժամանակ հնարավորություն են ունեցել բարձրացնել իրենց հարցադրումները, ինչպես նաև ՄԱԿ-ի զարգացման գործընկերների հետ իրականացվել է գնահատման բաղադրիչով ծրագիր, որի շրջանակում կազմակերպվել են անանուն հարցումներ: ակայն հարցման արդյունքները դեռևս հասանելի չեն: Նշվել է նաև, որ բարեփոխումների վերաբերյալ իրականացված քայլերը ներկայացվել են միջազգային հարթակներում և արձանագրվել է զգալի առաջընթաց: Վերջին պնդումները սակայն չունեն փաստաթղթային հաստատում:

Քանակական ազդեցության գնահատման առումով՝ արձանագրվում է, որ Գործողության ցուցանիշով սահմանված էր ոստիկանության ծառայողների 100% իրազեկում և առնվազն մեկ

միջազգային հարթակում բարեփոխումների ներկայացում 2024 թվականին: Ստացված տեղեկատվությունից չի հստակեցվում՝ արդյոք իրազեկման գործընթացում ընդգրկվել են ոստիկանության բոլոր ծառայողները (100%), թե մասնակի ստորաբաժանումներ: Չեն ներկայացվել ցուցանիշներ ծառայողների թվաքանակի, հանդիպումների քանակի կամ տարածքային բաշխման մասին: Ինչ վերաբերում է միջազգային ներկայացումներին, ապա չնայած գրավոր տեղեկատվության մեջ մատնանշվում են պաշտոնական այցեր և հանդիպումներ ԵԽ-ում և Գերմանիայում, փաստաթղթավորված չէ, որ դրանք դիտարկվում են որպես միջազգային ֆորումներում (օրինակ՝ կոնֆերանս, վեհաժողով) իրականացված պաշտոնական ներկայացումներ: Մինչդեռ արդյունքային ցուցանիշի պահանջով 2024թ.-ի ընթացքում պետք է իրականացվեր առնվազն մեկ նման ներկայացում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՄԽ-ն գործողության ընթացակարգային բաղադրիչը գնահատվում է որպես *«կատարված է մասնակի»:*

Որակական ազդեցության գնահատման առումով՝ ծառայողների իրազեկման հանդիպումները, ինչպես նաև միջազգային գործընկերներին բարեփոխումների ներկայացումները կարող էին նպաստել ռազմավարական խնդրի՝ Ոստիկանության միջազգային իմիջի և նոր կերպարի բարձրացմանը: Սակայն գործողությամբ իրականացված միջոցառումների արդյունավետության գնահատման, ազդեցության չափման գործիքների և հանրային վստահության մակարդակի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ բավարար տեղեկատվություն չի տրամադրվել: Չեն ներկայացվել տվյալներ հետադարձ կապի արդյունքների, իրազեկման գնահատման արդյունքների կամ ԿԲ-ի վստահության թիրախային ցուցանիշի (40%) հետ ունեցած կապի մասին: ՖԽՔ-ի ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչը նշել է, որ վստահության գնահատումն իրականացվել է միջազգային գործընկերների կողմից, սակայն համապատասխան զեկույցները կամ արդյունքները չեն տրամադրվել: Այդ իսկ պատճառով չի կարող հաստատվել, որ գործողության ազդեցությունը նպաստել է նշված ռազմավարական արդյունքի լիարժեք իրագործմանը: Ուստի, ՄԽ-ն ռազմավարական խնդրի նկատմամբ ազդեցությունը գնահատում է որպես «իրականացված է ոչ ամբողջական»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է որպես **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով՝ ռազմավարական խնդիրը (արդյունքը) գնահատվում է որպես **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ.** գործողության շրջանակում իրականացված միջոցառումները ամբողջապես չեն ապահովել ռազմավարական նպատակի լիարժեք նվաճումը:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 12-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025(1-ին կիսամյակ)թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	3	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1	33.3%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	2	66.6%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	3	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	3	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Ոլորտ	Ընթացակարգային (քանակական) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ		Ազդեցության մակարդակի (որակական) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	
	Գնահատված գործողությունների թիվը	*Գործողությունների կատարողական ցուցանիշը*	*Գնահատված գործողությունների թիվը*	*Գործողությունների կատարողական ցուցանիշը*
Ուղղություն 1	4	75.00%	-	
Ուղղություն 2	10	20.00%	3	0%
Ուղղություն 3	2	50.00%	-	
Ուղղություն 4	7	71.4%	-	
Ուղղություն 6	4	25.00%	-	
Ուղղություն 7	1	0%	1	0%
Ուղղություն 8	5	60.0%	-	
Ուղղություն 9	11	18.2%	-	
Ուղղություն 10	2	0%	-	
Ուղղություն 11	3	0%	-	
Ուղղություն 12	3	33.3%	3	0%

1. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	52
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	18
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	33
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	34.62%

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.՝ հաշվարկված վարիացիոն շարքի համակշռված միջինի մեթոդով	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	52
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	18
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	33
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	66.35%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2024-2025 (1-ին կիսամյակ) թթ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	7
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	5
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	2
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	71.43%

Ա. Մեթոդական առաջարկներ

Մշտադիտարկման արդյունքում բացահայտվել են վերստուգիչ ցուցանիշների ձևակերպման և կիրառման մի շարք համակարգային թերություններ, որոնք սահմանափակում են բարեփոխումների արդյունավետության օբյեկտիվ գնահատումը։ Ստորև ներկայացվում են հիմնական խնդիրները և առաջարկությունները՝

- ***Ազդեցության չափման ցուցանիշների բացակայություն հանրային ծառայությունների որակի գնահատման համար:*** *Վերստուգիչ ցուցանիշները չեն ներառում մասնակցության ծավալ և բարելավման տոկոս (օր.՝ Ուղղություն 1, Գործողություն 1.2 - հանրային ծառայությունների որակի հարցումներ առանց մասնակիցների թվի և բարելավման տոկոսի)։ Պահանջել հարցումներին մասնակցած քաղաքացիների թվի և ծառայությունների որակի բարելավման տոկոսային ցուցանիշների ներկայացում։ Սահմանել նվազագույն մասնակցության շեմ հարցումների ներկայացուցչական լինելու համար։*
- ***Կադրային քաղաքականության արդյունքների չափման բացթողումներ:*** *Չկան ցուցանիշներ կանանց ներգրավման արշավների ազդեցության մասին (օր.՝ Ուղղություն 2, Գործողություն 2.4.2 - կանանց ընդունելություն առանց աճի տոկոսի, Ուղղություն 11, Գործողություն 11.1 - կանանց ներգրավման արշավ առանց դիմումների աճի տվյալների)։ Ներառել կանանց դիմումների թվի աճի և ընդունված կանանց տոկոսային ցուցանիշներ։ Պահանջել արշավներում ընդգրկված մարդկանց թվի և ազդեցության գնահատում։*
- ***Վերլուծությունների բովանդակային պահանջների անորոշություն:*** *Ոչ բոլոր վերստուգիչ ցուցանիշներն են նախատեսում վերլուծությունների՝ լուծումների առաջարկներ պարունակելու պահանջ (օր.՝ Ուղղություն 2, Գործողություն 2.3.2 - սոցիալական երաշխիքների վերլուծություն առանց առաջարկությունների պահանջի)։ Նմանապես, ոչ բոլոր վերլուծություններում է սահմանվում միջազգային փորձի ուսումնասիրության՝ առնվազն երեք երկիր ուսումնասիրելու պահանջ (օր.՝Ուղղություն 9, Գործողություն 3.2)։ Պարտադիր դարձնել վերլուծությունների մեջ խնդիրների լուծման կոնկրետ առաջարկությունների ներառումը և առնվազն երեք պետության միջազգային փորձի ուսումնասիրությունը։*
- ***Վերապատրաստումների գիտելիքների գնահատման չափորոշիչների անհամապատասխանություն:*** *Որոշ դեպքերում պահանջվում է «80% իմացություն», իսկ որոշ դեպքերում չկա նման պահանջ (օր.՝ Ուղղություն 9, Գործողություն 1.7 - հասարակական դիտորդների վերապատրաստում առանց գիտելիքի գնահատման, Ուղղություն 12, Գործողություն 12.3 - ծառայողների իրազեկում առանց ազդեցության գնահատման)։ Ստանդարտացնել վերապատրաստումների արդյունավետության գնահատման չափորոշիչները բոլոր գործողությունների համար։*
- ***Իրազեկման նյութերի տարածման և ազդեցության մոնիթորինգի բացակայություն:*** *Չկան պահանջներ իրազեկման նյութերին ծանոթացած մարդկանց թվի մասին (օր.՝Ուղղություն 11, Գործողություն 11.1 - «5 իրազեկման նյութ» առանց դիտումների ցուցանիշի)։ Ներառել պարտադիր ցուցանիշներ յուրաքանչյուր իրազեկման նյութին ծանոթացած անձանց թվի և ներգրավվածության մակարդակի մասին։ Սահմանել թիրախային լսարանի հասանելիության տոկոսային ցուցանիշներ։ Ներդնել սոցիալական մեդիայի ներգրավվածության չափորոշիչներ՝ դիտումներ, կիսումներ, մեկնաբանություններ։ Իրականացնել իրազեկվածության մակարդակի նախնական և հետագա հարցումներ՝*

փոփոխությունները չափելու համար: Մոնիթորինգի ենթարկել դիմումների և հայտերի թվի փոփոխությունները՝ որպես արշավների արդյունավետության ցուցանիշ:

- ***Հանրային քննարկումների արդյունքների չափման անհետևողականություն:*** *Որոշ դեպքերում պահանջվում է ՔՀԿ առաջարկությունների ընդունման տոկոս, որոշ դեպքերում՝ ոչ (օր.՝ Ուղղություն 4, Գործողություն 4.1 - հանրային քննարկում ՔՀԿ առաջարկությունների տոկոսով, Ուղղություն 9, Գործողություն 1.2 - հանրային քննարկում առանց տոկոսի պահանջի): Ստանդարտացնել հանրային քննարկումների արդյունավետության գնահատման ցուցանիշները՝ պարտադիր դարձնելով ՔՀԿ առաջարկությունների ընդունման տոկոսի հաշվարկը: Պահանջել մասնակիցների բավարարվածության գնահատական և քննարկումների արձանագրությունների հրապարակում: Սահմանել չափելի ցուցանիշներ քննարկումների ազդեցության գնահատման համար՝ ոչ միայն քանակական, այլև որակական առումով:*
- ***Աուդիտի և գնահատման մեթոդաբանության պահանջների բացակայություն:*** *«Աուդիտ» և «գնահատում» եզրույթները օգտագործվում են առանց մեթոդաբանական պահանջների (օր.՝ Ուղղություն 8, Գործողություն 2 - գվարդիայի աուդիտ առանց մեթոդաբանության, Ուղղություն 7, Գործողություն 2 - բիզնես պրոցեսների գնահատում առանց չափորոշիչների): Սահմանել աուդիտի և գնահատման պարտադիր բաղադրիչներ՝ մեթոդաբանություն, չափորոշիչներ, ցուցանիշներ:*

Բ. Բովանդակային առաջարկներ

Ուղղություն 2. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում և բարեվարքության ամրապնդում

- *Գործողություն 2: Մշակել և ներդնել ոստիկանության համակարգում որակյալ կադրերի ներգրավման (հավաքագրման) պլան, որը բացառի կոռուպցիոն ռիսկերն ու երաշխավորի բաց, թափանցիկ և մրցակցային գործընթաց՝ ներառյալ բարեվարքության ստուգման, հմտությունների գնահատման և հանրային վստահության տեսանկյունից հստակ չափանիշների կիրառումը: Իրավաբանական վարչությունում ապահովել իրավատու մասնագետների ներգրավում՝ երաշխավորելու, որ ՆԳՆ շահերը դատարաններում ներկայացնող անձինք կարողանան լիարժեք և մասնագիտական հմտությամբ արձագանքել դատավորների և կողմերի հարցերին՝ բացառելով նիստերի անարդյունավետությունը և հետաձգումները: Սահմանել ընթացակարգ, որով աշխատանքից սեփական նախաձեռնությամբ ազատված աշխատակիցների հետ կանցկացվեն ելքային հարցազրույցներ՝ պարզելու ազատման դրդապատճառները և արձանագրելու հնարավոր համակարգային խնդիրները՝ կադրային քաղաքականությունը փաստահեն տվյալների հիման վրա բարելավելու նպատակով:*
- *Գործողություն 3.1: Արագացնել կատարողականի գնահատման հայեցակարգի գործնական ներդրումը՝ ապահովելով դրա ներառումը համապատասխան զեկույցներում և կարգավորող ակտերում: Դրա ներքո Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում ներդնել ծառայողների աշխատանքի շարունակական ներքին մոնիթորինգի մեխանիզմ՝ ստեղծելով կառուցվածքային և բովանդակային կապ իրական կատարողականի, գնահատման արդյունքների և առաջխաղացման/մակարդակի փոփոխության միջև: Ներդնել նաև կառուցվածքային լուծումներ, որոնք կապահովեն ծառայողների մասնակցային ներգրավվածությունը՝ պարբերաբար քննարկելով բարեփոխումների ընթացքը, արձանագրելով խնդիրներն ու վերհանելով լուծումներ՝ ներառական և դինամիկ կառավարման համար:*
- *Գործողություն 5.1: Մշակել և ընդունել ոստիկանության բարեվարքության ամրապնդման համապարփակ ռազմավարություն և դրա իրականացման գործողությունների ծրագիր՝ հստակ ժամկետներով և պատասխանատուներով: Մշակել ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման մեթոդաբանություն՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա և հարմարեցված ՀՀ ոստիկանության համակարգի առանձնահատկություններին: Սահմանել ռիսկերի գնահատման պարբերականություն և իրականացման ընթացակարգ՝ ներառյալ արդյունքների վերլուծության և օգտագործման մեխանիզմներ: Մշակել և հրապարակել ոստիկանության համակարգի բարեվարքության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ՝ ներառելով բարեվարքության ռիսկերի գնահատման արդյունքները: Ապահովել բարեվարքության դեպքերի վերաբերյալ տեղեկատվության պարզ և մատչելի ներկայացում հանրությանը: Իրականացնել հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրություններ ոստիկանության բարեվարքության ընկալման վերաբերյալ:*
- *Գործողություն 5.2: Ներդնել ոստիկանության ղեկավար և ոչ ղեկավար պաշտոններում նշանակվելու համար բարեվարքության պարտադիր ստուգման մեխանիզմներ: Մշակել և ներդնել բոլոր մակարդակների ծառայողների համար ընթացիկ բարեվարքության ստուգման ընթացակարգեր:*

- *Գործողություն 5.3: Վերանայել «Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը» օրենքի նախագիծը՝ ներառելով բարեվարքության հստակ սկզբունքներ և ստուգման մեխանիզմներ: Ներառել ՔՀԿ ներկայացուցիչներին էթիկայի հանձնաժողովում՝ ապահովելով հանրային վերահսկողություն, բալանսավորված կազմ և հավելյալ անկախության երաշխիքներ (առնվազն 3 անդամ): Սահմանել հանձնաժողովի անդամների պաշտոնավարման հստակ ժամկետ (օրինակ՝ 3-5 տարի): Ներառել անդամների լիազորությունների դադարեցման սպառիչ և հստակ հիմքեր: Սահմանել անդամներին ներկայացվող մասնագիտական և անձնական պահանջներ, ներառյալ բարեվարքության ստուգման մեխանիզմներ: Նախատեսել էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգի ընդունման պահանջ՝ օրենքով սահմանելով դրա նվազագույն բովանդակությունը: Նախատեսել տարեկան հաշվետվությունների հրապարակման պահանջ՝ ներառելով վիճակագրական տվյալներ: Ներդնել էթիկայի և հաղորդակցման պարտադիր վերապատրաստման ծրագրեր՝ ոստիկանության բոլոր ծառայողների համար՝ շեշտադրելով ոչ միայն ներքին կարգապահությունը, այլև քաղաքացի-ոստիկան փոխհարաբերությունների բարձր որակի ապահովումը: Ծրագրերը պետք է հիմնված լինեն միջազգային լավագույն փորձի վրա: Ստեղծել և գործարկել ծառայողական հաղորդակցության մշտադիտարկման ու վերահսկողության մեխանիզմներ՝ ապահովելու նման վարքագծի դեպքերի արձագանքումը ներքին ծառայողական քննությունների կամ կարգապահական միջոցների միջոցով: Հաստատել վարքականոնի խախտումների վերաբերյալ հանրային արձագանքման մեխանիզմներ, օրինակ՝ քաղաքացիական վերահսկողության մարմնի միջոցով անանուն հաղորդումների հնարավորություն՝ ոստիկանության ծառայողի ոչ պատշաճ խոսելաձևի կամ վարքի դեպքերում: Պաշտոնական հաղորդակցման մշակույթի և էթիկական վարքագծի ցուցանիշները ներառել ծառայողների գնահատման համակարգում՝ կապելով դրանք ինչպես պարգևատրման, այնպես էլ պատասխանատվության գործիքակազմին: Ներդնել ոստիկանությունում կենտրոնացված և վերլուծական հիմք ունեցող բարեվարքության ռիսկերի կանխատեսման և վաղ արձագանքման թվային համակարգ, որն իր մեջ կներառի տվյալներ կարգապահական խախտումների, հաղորդումների, հաղորդակցման ձախողումների, ծառայողական քննությունների և աշխատանքային միջավայրի լարվածությունների վերաբերյալ՝ հնարավորություն տալով վաղ փուլերում հայտնաբերել ռիսկային վարքագծի դրսևորում ունեցող ծառայողներին և իրականացնել կանխարգելիչ միջամտություններ, ներառյալ վերապատրաստում, խորհրդատվություն կամ պայմանական վերահսկում:*

Ուղղություն 3. Կրթական միջավայրի բարելավում, ոստիկանության կաղրային պատրաստում, մասնագիտական զարգացում

- *Գործողություն 3: Բազային կուրսի և պետական չափորոշիչների մշակման փուլում հատուկ ուշադրություն դարձնել ծառայողական գործառույթների համար անհրաժեշտ կիրառական հմտությունների ամրապնդմանը՝ ներառելով իրավակարգի պահպանման, արտակարգ իրավիճակների, խոցելի խմբերի հետ աշխատանքի, հանրային հավաքների ընթացքում վարքագծի և քաղաքացիների հետ հաղորդակցության թեմաներով գործնական մոդուլներ:*

Ուղղություն 4. Պարեկային ծառայության զարգացում՝ որպես արտաքին ծառայության նոր և ժամանակակից մոդել

- *Գործողություն 2: Հստակ ընդգծել վարչական վարույթի ընթացակարգերի, արձանագրությունների կազմման ձևերի, փաստական տվյալների գրանցման և մարդու իրավունքների վերաբերյալ իրավական գիտելիքների ուղղությամբ շարունակական վերապատրաստման կարևորությունը: Առանձին բաղադրիչ պետք է ձևավորվի թեթև ավտոպատահարների փաստագրության և սխեմաների կազմման հմտությունների համար՝ ապահովելով գործնական վերապատրաստում: Վիճահարույց վարչական տույժերի մասով առաջարկվում է վերապատրաստման ծրագրում ներառել պատշաճ փաստագրման, տեղում իրազեկման և իրավաչափ կիրառման պահանջները՝ բացառելու քաղաքացիների իրավունքների հնարավոր խախտումները:*

Ուղղություն 6. Քրեական ոստիկանության զարգացում, օպերատիվ աշխատանքի արդյունավետություն

- *Գործողություն 3: Ապահովել օպերատիվ-հետախուզական գործողությունների փաստացի արդյունավորության նկատմամբ վերահսկողական մեխանիզմների ներդրում՝ ապահովելու գործառույթների ոչ միայն իրավական, այլև գործնական պատշաճ իրականացում:*
- *Գործողություններ 4, 5: Ներդնել համատեղ, ինտեգրված էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որը կգործի ոստիկանության բոլոր ստորաբաժանումներում՝ ապահովելով տվյալների համակարգված և արագ փոխանակում: Բարելավել անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը համակարգի արդյունավետ օգտագործման և տեղեկատվության տրամադրման կարգերի ապահովման ուղղությամբ: Մշակել և կիրառել տեղեկատվության փոխանակման միասնական կանոնակարգեր՝ գործընթացների թափանցիկությունն ու ժամանակին իրականացումը երաշխավորելու նպատակով: Սահմանել վերահսկողական մեխանիզմներ՝ ապահովելու համար, որ տեղեկատվության փոխանակման գործընթացը լինի շարունակական, ճշգրիտ և արդիական:*

Ուղղություն 7. Համայնքային ոստիկանության վերաիմաստավորում

- *Գործողություն 1: Հստակեցնել «ոչ բնորոշ գործառույթների դադարեցման» շրջանակը հստակեցնել և տարածել ընտանեկան բռնության գործառույթների վրա, գնահատելով՝ արդյոք դրանք պետք է վերապահվեն միայն մասնագիտացված ստորաբաժանումներին, թե անհրաժեշտ է համայնքային ոստիկանների շրջանակում ներմուծել առանձին մասնագիտացված խմբեր, կամ ապահովել խորացված վերապատրաստում և մասնագիտական ռեսուրսներ: Ապահովել, որ ընտանեկան բռնության դեպքերի արձագանքման թեման դառնա վերապատրաստման պարտադիր բաղադրիչ՝ ներառելով հաղորդման ընդունման, ընթացակարգերի ձևակերպման, տուժածի հետ աշխատանքի և միջամտության իրավական հիմքերի ուսուցում:*
- *Գործողություն 2: Արագացնել և ավարտել համայնքային ոստիկանության թվայնացման գնման գործընթացը՝ սահմանելով հստակ ժամկետներ: Հրապարակել իրականացված բիզնես գործընթացների գնահատման արդյունքները և մեթոդաբանությունը՝*

ապահովելով թափանցիկություն։ Լրամշակել տեխնիկական առաջադրանքը՝ ներառելով շահառուների ազդեցության գնահատում, թիրախային խմբերի կիրառելիության վերլուծություն և համակարգի ազդեցության գնահատում թափանցիկության բարձրացման, հանրային վերահսկողության ամրապնդման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով։ Մինչև համակարգի գործարկումը հստակեցնել համայնքային ոստիկանների իրավական կարգավիճակը և լիազորությունների շրջանակը՝ վերացնելով ինստիտուտին չվերաբերող գործառույթները և բացառելով լիազորությունների գերազանցման հնարավորությունները։ Ներգրավել ՔՀԿ-ներին և այլ շահագրգիռ կողմերին համակարգի ներդրման և գործարկման փուլում՝ ապահովելով հանրային վերահսկողություն և հետադարձ կապ։

Ուղղություն 8՝ Ոստիկանության զորքերի վերափոխում, Ոստիկանության գվարդիայի ձևավորում

- ***Գործողություն 2:*** *Հրապարակել ոստիկանության գվարդիայի թվաքանակի և նյութատեխնիկական հագեցվածության աուդիտի մեթոդաբանությունը, գնահատման չափորոշիչները և արդյունքները։ Փաստաթղթավորել և հրապարակել աուդիտի հիման վրա մշակված թվակազմի հաստատման որոշումը։ Հստակեցնել և առանձին ներկայացնել 2026 թվականի բյուջետային հայտը՝ համաձայն գործողությունների ծրագրի պահանջի։ Ապահովել աուդիտի արդյունքների և բյուջետային հայտերի միջև հստակ կապը՝ ցույց տալով, թե ինչպես են աուդիտի գնահատումները վերածվել կոնկրետ ֆինանսական պահանջների։*
- ***Գործողություն 4:*** *Ապահովել վերապատրաստման կուրսի և նյութերի համապատասխանությունը միջազգային չափանիշներին՝ ներկայացնելով համապատասխան հաստատող փաստաթղթեր։ Սահմանել և պահպանել վերապատրաստման նվազագույն մեկամսյա տևողությունը բոլոր դասընթացների համար։ Ներառել վերապատրաստման նյութերում հոգեբանական հմտությունների, դիմակայունության և սթրեսային իրավիճակներում կողմնորոշման թեմաները՝ ապահովելու համապարփակ պատրաստվածություն։ Մշակել և ներդնել վերապատրաստման արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ չափելու ձեռք բերված գիտելիքների և հմտությունների կիրառելիությունը գործնական իրավիճակներում։*

Ուղղություն 9. Մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցեր

- ***Գործողություն 1.4.*** *Հաջորդ փուլում տրանսպորտային միջոցների ձեռքբերման քաղաքականությունը ուղղել ոչ թե միայն փոխարինմանը, այլ նաև փաստացի կարիքների գնահատման հիման վրա ընդլայնմանը, հատկապես՝ շրջաններում գործարկվող ստորաբաժանումների համար։ Ներդնել նաև ուղեկցող ոստիկանության անձնակազմի համալրման և վերապատրաստման ծրագիր, որը կապահովի դատական համակարգի անխափան աշխատանքը և կկանխի արդարադատության ընթացակարգերի խաթարումը։*
- ***Գործողություն 1.5.*** *Թարգմանել իրավունքների մասին ծանուցումները եզդիերեն, ասորերեն, քրդերեն և հունարեն լեզուներով՝ ապահովելու ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումը Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի ներքո։ Ապահովել ոչ միայն իրավունքների, այլ նաև*

անձի կարգավիճակի, ընթացակարգերի, կալանքի իրավական հիմքերի վերաբերյալ տեղեկանքների, ուղեցույցների կամ տեղեկատվական թերթիկների տրամադրումը՝ անձի կողմից հասկանալի լեզվով: Իրավապահ մարմինների անձնակազմի համար ներդնել նվազագույն օտար լեզվի իմացության ուսուցման կամ թարգմանչական գործիքների (օրինակ՝ թվային թարգմանչական հավելվածներ) կիրառման գործնական կարողությունների ապահովման մեխանիզմ: Ամրապնդել թարգմանչի ներգրավման և թարգմանված փաստաթղթերի տրամադրման պահանջների գործնական կիրառումը՝ վարչական կարգով վերահսկողություն և պատժամիջոցներ կիրառելով դրանց խախտման դեպքում:

- ***Գործողություն 1.6.*** *Վերանայել վերապատրաստումների և մեթոդաբանության ծրագրերը՝ ապահովելով Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի չափանիշների ներառումը՝ի հավելումն ՄԱԿ-ի համապատասխան փաստաթղթերի:*
- ***Գործողություն 3.1.*** *Վերջնականացնել և ներդնել անձնական տվյալների պաշտպանության ուղեցույցը՝ ապահովելով դրա հասանելիությունն ու պարտադիր կիրառումը ոստիկանության բոլոր համապատասխան ստորաբաժանումներում: Ուղեցույցում նախատեսել կարգավորումներ, որոնք հստակ կփաստեն ցուցմունքների ընդունման օբյեկտիվ և ամբողջական արձանագրման պարտավորությունը: Սահմանել վերահսկողական և կարգապահական ընթացակարգեր՝ ապահովելու ուղեցույցի պահանջների պահպանումը և խախտումների արձագանքման հստակ մեխանիզմներ: Նույն շրջանակում ապահովել ցուցմունքների փաստագրման գործընթացի խիստ վերահսկողությունը՝ հնարավորության սահմաններում կիրառելով տեխնիկական և պրոցեդուրալ գործիքներ, այդ թվում՝ առդիո-վիդեո ձայնագրություն, որը կնպաստի անձնակազմի կողմնակալության նվազեցմանը և տեղեկատվության հստակության բարձրացմանը: Անհրաժեշտության դեպքում դիտարկել նաև առկա մեխանիզմների կատարելագործման կամ հստակեցման հնարավորությունը: Բարելավել ոստիկանների մասնագիտական պատրաստվածությունը, մասնավորապես՝ցուցմունքների ընդունման տեխնիկայի, մարդու իրավունքների պաշտպանության և իրավական նորմերի կիրառման առումով:*

Ուղղություն 10. Բարեփոխումների իրականացման ներառականություն, գործողությունների մշտադիտարկում և համակարգում

- ***Գործողություն 1:*** *Սահմանել Խորհրդի գործունեության հստակ ընթացակարգ (օրինակ՝ նիստերի պարբերականություն, որոշումների ընդունման մեխանիզմ, հաշվետվությունների քննարկման ձևաչափ), ինչպես որ նախատեսված է գործողությունների ծրագրում: Լրացնել Խորհրդում ՔՀԿ ներկայացուցիչների կազմը՝ ապահովելով մրցույթի նոր փուլ չերաշխավորված տեղերի համար: Ապահովել հաշվետվությունների հրապարակումը ՆԳՆ պաշտոնական կայքում՝ ինչպես նախատեսված է ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով:*
- *Ներդնել համալիր գնահատման մեխանիզմ, որը թույլ կտա վերլուծել, թե օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները գործնականում ի՞նչ ազդեցություն են ունեցել համակարգի արդյունավետության, թափանցիկության և հանրային վստահության վրա: Գնահատումը պետք է իրականացվի ըստ ուղղության համապատասխան հիմնախնդրի և*

նախանշված թիրախի՝ կիրառելով ազդեցության գնահատման միջազգային ճանաչված մոտեցումներ:

Ուղղություն 11՝ Հանրային ընկալում, ռազմավարական հաղորդակցություն

- ***Գործողություն 1:*** *Հրապարակել ոստիկանության բարեփոխումների ռազմավարական հաղորդակցության ծրագիրը և դրա հաստատման հրամանը: Մշակել և ներդնել հաղորդակցության արշավների ազդեցության գնահատման մեխանիզմներ՝ ներառելով մասնակցության ցուցանիշներ, իրազեկման մակարդակի չափումներ և հետադարձ կապի գործիքներ: Փաստաթղթավորել և հրապարակել բարեփոխումների ընթացքի մասին իրազեկման նյութերը՝ ապահովելով դրանց ուղղակի կապը բարեփոխումների կոնկրետ քայլերի հետ: Ներդնել հրապարակված նյութերի դիտումների, տարածման և ազդեցության մոնիթորինգի համակարգ՝ պարբերաբար գնահատելու հանրային ընկալման փոփոխությունները:*
- ***Գործողություն 2:*** *Հրապարակել հանրային հարցումների իրականացման մեթոդաբանությունը և հարցաշարը՝ ապահովելով թափանցիկություն և հանրային վերահսկողություն: Իրականացնել պարբերական հանրային հարցումներ՝ գնահատելու վստահության մակարդակը և ոստիկանության միջոցառումների ազդեցությունը: Հրապարակել հարցումների արդյունքները և վերլուծությունները՝ ապահովելով տվյալների հասանելիությունը շահագրգիռ կողմերի համար:*
- ***Գործողություն 3:*** *Հրապարակել ՆԳՆ Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության տեխնիկական կարիքների ցանկը և դրա հիմնավորումները: Ներկայացնել մշակված վերապատրաստման նյութերը և ապահովել դրանց կիրառումը անձնակազմի շրջանում: Հրապարակել ՆԳՆ հանրային հաղորդակցության ռազմավարությունը և դրա հաստատման հրամանը: Մշակել և ներդնել ռազմավարության իրականացման մոնիթորինգի և գնահատման ցուցանիշներ՝ ապահովելու արդյունավետության չափումը:*

Ուղղություն 12՝ Ոստիկանություն բարեփոխումների շրջանակներում միջազգային համագործակցություն

- ***Գործողություն 1:*** *Հրապարակել դոնորների համակարգման մատրիքսի լրամշակման բովանդակությունը, մեթոդաբանությունը և իրական ֆինանսական կարիքների գնահատման հիմքերը: Ապահովել դոնորների համակարգման գործընթացի թափանցիկությունը՝ հրապարակելով առաջնահերթությունների հստակեցման չափանիշները և նոր մեկնարկած ծրագրերի ցանկը: Մշակել և իրականացնել հանրային հաղորդակցության ռազմավարություն՝ բարեփոխումների արդյունքների և միջազգային համագործակցության ձեռքբերումների մասին հանրությանը պարբերաբար տեղեկացնելու համար:*
- ***Գործողություն 2:*** *Ավարտել միջազգային վարկանիշներում դիրքերի բարելավման առաջընթացի ուսումնասիրությունը և հրապարակել խնդիրները քարտեզագրող զեկույցը: Հաստատել և հրապարակել կիսամյակային գործողությունների ծրագրերը՝ ապահովելով դրանց կապը Կովկասյան բարոմետրի թիրախային ցուցանիշների հետ: Մշակել միջազգային վարկանիշների բարելավման ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման*

համակարգ՝ ներառելով հստակ ժամկետներ և պատասխանատուներ: Հրապարակել ՄԱԿ-ի զարգացման գործընկերների հետ իրականացված գնահատման արդյունքները և անանուն հարցումների վերլուծությունը:

- ***Գործողություն 3:*** *Մշակել և իրականացնել ոստիկանության ծառայողների 100% իրազեկման ապահովման հստակ ծրագիր՝ ներառելով թվաքանակային ցուցանիշներ, ժամանակացույց և տարածքային բաշխում: Կազմակերպել բարեփոխումների ներկայացում միջազգային հեղինակավոր ֆորումներում (կոնֆերաններ, վեհաժողովներ)՝ փաստաթղթավորելով ներկայացումները և արձագանքները: Ներդնել հետադարձ կապի և ազդեցության գնահատման մեխանիզմներ՝ չափելու իրազեկման արդյունավետությունը և հանրային վստահության վրա ազդեցությունը: Հրապարակել միջազգային գործընկերների կողմից իրականացված վստահության գնահատման զեկույցները և արդյունքները:*

Զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Հայաստանու մարդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» (www.juremonia.am) ծրագրի շրջանակում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: